

տպագրվում է  
2003թ.  
հոկտեմբերի  
1-ից ■

հիմնադիր եւ  
հրատարակիչ՝  
«Սյունյաց  
աշխարհ»  
ՍՊԸ ■

www.syuniacyerkir.am

# Սյունյաց երկիր

տ ա ս ն օ ղ յ ա թ Ե Ր Ի Ր

№ 10-11 146-147  
26 ապրիլի 2008

**Սյունիքը գլուխ է խոնարհում մեր նախնայաց անմար հիշատակի առջեւ, ովքեր 90 տարի առաջ՝ մայիսյան հերոսամարտերի բոցերի մեջ, վեցդարյա ընդմիջումից հետո, ծնունդ տվեցին հայոց անկախ պետականությանը:**

## 1918թ. մայիսյան հրեղեն շաբաթը

Մարդարապարում, Բաշ-Ապարանում, Ղարաքիլիսայում ու Զանգեզուրում էր վճռվում հայ ժողովրդի եւ Հայաստան երկրի լինել-չլինելու հարցը:



ՄԱՐԴԱՐԱՊԱՐՈՒՄԻ ԶՈՒՆԱՅԱՆԻ ՄՈՒՏԵՐԸ

### հայրաբարություն

Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով եւ Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ, Հայոց ազգային խորհուրդը իրեն հայրաբարում է հայկական գավառների գերագույն եւ միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պարճամներով թողնելով մութիկ օրերը կազմել հայոց ազգային կառավարություն, Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական եւ վարչական ղեկը վարելու համար:

Հայոց ազգ. խորհուրդ, 1918թ. մայիս 30 Թիֆլիս

**համարում**

Գիտությունների ազգային ակադեմիայի պարմության ինստիտուտի փնօրեն Աշոտ Մելքոնյանն ու պարմաբան Վահան Մելիքյանը նոր լույս են սփռում 1918թ. մայիսյան հերոսամարտերին, դրանց նախորդած եւ հաջորդած իրադարձություններին ու նորովի արժեւորում դրանց պարմական խորհուրդը **3 • 11 • 13**

Մարդարապարի հերոսամարտի օրագրությունը **6 • 7**

Թեեւ Սյունիք-Զանգեզուրն այդ ժամանակ բոցերի մեջ էր, բայց բազմաթիվ սյունեցիներ մասնակցում էին Մարդարապարի, Ղարաքիլիսայի եւ Բաքվի հերոսամարտերին **9 • 10 • 15 • 16 • 17**

Ճանաչենք 1918թ. մայիսյան հերոսամարտերի կազմակերպիչներին ու զորահրամանատարներին՝ անուն առ անուն **4**

Արամ Մանուկյանն ու Վեհափառ Չեղրոզ Ե Տփղիսեցին իրենց ոգեւորիչ շնչով վարակում էին բոլորին **5**

Ինչո՞վ բացատրել Անդրանիկի վարմունքը, երբ չորս կողմը կրակ էր եւ այրուն, իսկ նա հստեղից դուրս չէկավ **8**

Մայիսյան հերոսամարտերին եւ առաջին հանրապետությանը նվիրված արժանի պարմական եւ գրական գործեր չեն ստեղծվել դեռեւս. այդպես են կարծում Հայաստանի ազգային արխիվի փնօրեն Ամարունի Վիրաբյանն ու ՀՀ ՊԱԱ գրականության ինստիտուտի փնօրեն Ազար Եղիազարյանը **12 • 14**

Որքան էլ զարմանալի է, 1918թ. մայիսյան հաղթական հերոսամարտերին, հակառակ գինվորականության կամքի, հաջորդեց Բաթումի ստորացուցիչ պայմանագիրը **18**


Հոբելյանական փոնակաբարարության է պարգևատրվում նաեւ Մարդարապարի հուշահամալիրում գործող Հայաստանի ազգագրության եւ ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարանը **19**

«Ի՞նչ ասես, որ չէր դա գրեթե ամեն մի հայ, միայն թե աչքով տեսներ ազատ Հայաստանը», - այսպես արձագանքեց Հովհաննես Թումանյանը Հայաստանի Հանրապետության հռչակմանը, որ ծնվեց մայիսյան հերոսամարտերի բոցերի մեջ **20**

«Սյունյաց երկիրը» շնորհակալություն է հայտնում «Զանգեզուրի ՊԱԿ» ՓԲ ընկերության սեփականատեր խմբին, աշխատավորական կոլեկտիվին, ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանին՝ թերթի սույն՝ ճիացյալ համարի ճախատարատոււմն ու տողագրությունը հովանավորելու համար:



# ՀԱՅՈՑ ՆՈՐ ԱՎԱՐԱՅՐԸ՝ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ



Գուրգեն Դուկասյանի եռապարկերի գեղանկարներից մեկը (Սարգարապարի թանգարան)

## ԱՐԽԻՎ

### Գեներալ Մովսես Միլիկյանի կոչը հայ ժողովրդին

«Հայեր, շտապեցեք հայրենիքն ազատելու: Հասել է ժամանակը, երբ յուրաքանչյուր հայ՝ մոռնալով իր անձնականը, հանուն Մեծ գործի՝ հայրենիքի փրկության եւ իր կնոջ ու աղջիկների պատվի պաշտպանության, պետք է գործ դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հարվածելու համար: Մենք չէինք ուզում կռվել, հանուն խաղաղության ու հաշտության, պատրաստ էինք ընդառաջ գնալու ամեն տեսակ գոհողությունների, սակայն, մեր նամարդ թշնամին ընթանում է իր ծրագրած ուղիով, նա, ըստ երեւոյթին, ստրկացնել է ուզում մեզ, բայց, իրոք, ուզում է ոչնչացնել մեր բազմաչարչար ազգը: Բայց բանի որ պիտի ոչնչանանք, ավելի լավ չէ՞, որ զենքը ձեռներս փորձենք պաշտպանել մեզ: Գուցե հաջողվի մեզ կռվով ձեռք բերել ապրելու իրավունքը: Իսկ որ մենք կարող ենք պաշտպանվել, այդ ցույց տվին վերջին կռիվները մեր ճակատում, ուր մեզանից թվով գերազանց թշնամին նահանջի է դիմել մեր հերոսական գրոհի առաջ: Հարկավոր է մի ճիգ եւս, եւ թշնամին վռնդված կլինի մեր երկրի սահմաններից, ուր մեր պապերն ու հայրերը երկար տարիներ արյուն-քրտինքով աշխատել են գեթ մի կերպ հայթայթել իրենց օրվա ապրուստը: Հայեր, ժամանակը չէ դանդաղելու: Մինչեւ հիսուն տարեկան ունենող բոլոր տղամարդիկ պարտավոր են զենքի տակ գալու:

Ես պահանջում եմ ամենից ներկայանալ իրենց զենքերով ու փամփուշտներով հայրենիքի պաշտպանության համար: Հայուհիներ, հիշեցեք ինձգերոզ դարու փափկասուն տիկնանց, որոնք ոգեւորեցին իրենց ամուսիններին դեպի Մեծ գործը, ամմաի Վարդանի կռիվների ժամանակ. հետեւեցեք նրանց օրինակին. եթե չեք ուզում, որ ձեր պատիվը ոտնակոխ լինի, խրախուսեցեք այն վախկոտներին, որոնք զանազան պատրվակներով խուսափում են ճակատ գալուց: Հավաքեցեք ռազմամթերք, հաց, հագուստ եւ ուրիշ մթերքներ... Ես խորապես համոզված եմ, որ իմ այս կոչը անարձագանք չի մնա, եւ երկու-երեք օրվա ընթացքում կկազմակերպվի մի այնպիսի քաջարի գորաբանակ, որին կհաջողվի վռնդել թշնամուն հայրենի հողի սահմաններից եւ ապահովել հայ ժողովրդի գոյությունը: Հանուն բազմաչարչար ժողովրդի ֆիզիկական գոյության, Հանուն ոտնակոխ եղած ճշմարտության՝ Ոտքի՛ կանգնեցեք: Դեպի՛ սրբազան պատերազմ: Բոլոր զենքի ընդունակ տղամարդիկ պարտավոր են ներկայանալ Երեւանում գոր. Բեժանբեգին, իսկ բոլոր հավաքված մթերքները պետք է հանձնել տեղական Ազգ. խորհուրդներին»:

24 մայիսի 1918թ.

### Կոչ հայերին N2

Արդեն առաջին հերթին զենքի են կանչված 1886-1898 թականների ծնածնները: Հայկական գնդերին հարկաւոր են շատ ինտելիգենտ անձնաւորութիւններ ու փորձած մարտիկ ուժեր: Անդրկովկասի կոմիսարիատի յատուկ դեկրետով ու հայոց ազգային խորհրդի կարգադրութեամբ սահմանուած է կամաւոր զինագրում: Արդ դիմում ենք հայ մտաւորականութեանը, փորձած ռազմիկներին ու հայրենիքին ծառայելու զգացմունքով լցած անձնաւորութիւններին ու յորդորում կամաւոր գրել: Կամաւորները առանձին զօրամասերով տեղաւորւելու են հայկական գնդերը: Ցանկացողները պիտի դիմեն մեր առաջին կոչում մատնանշած վայրերը: Մենք համոզւած ենք, որ ճակատի քայքայումը, հայ ժողովրդի ու Կովկասի գլխին ծանրացած վտանգը եւ Ռուսաստանի ազատութեան վտանգիլը շատ մօտ են հայ գիտակից տարրերի սրտին, որ սրանք չեն կամենայ թշնամու երիվարների ոտքերի տակ նետել մեծ յեղափոխութեան փրկարար սկզբունքները, ուստի եւ վստահութեամբ կանչում ենք

նրանց հայ ժողովրդի ազատութեան գործին մասնակցելու: Ամենից առաջ ձեզ ենք դիմում, հայ ուսանողներ ու աշակերտներ, դուք դեռ կեանքի խճճած պայմաններում չէք մեռցրել ձեր արիւնը, դուք դեռ ապրում էք վառվառ գաղափարների աշխարհում: Ամենից առաջ ձեր սրտերում է արձագանք գտնելու ժողովրդի փրկութեան կոչը: Դիմում ենք եւ ձեզ, հայ ուսուցիչներ, բժիշկներ, փաստաբաններ, ինժեներներ ու այլ մասնագիտութեան մտաւորականներ: Դուք մինչեւ այսօր ձեր շնորքները ծառայարել էք ազգի խաղաղ կուլտուրական առաջադիմութեան: Այսօր, երբ ռազմի շեփորն է հնչում, պիտի դուրս գաք ձեր առանձնատեսակներից եւ դեպի պատերազմական պահանջներ դիմեք: Բաց ճակատով ենք դիմում ձեզ, փորձած հայ մարտիկներ, դուք մեր ժողովրդի ամենամեծներ պահապաններն էք եւ միշտ պատրաստ էք եղել զոհել ձեզ: Այսօր կրկին ձեր դռներն է բախում հայ ժողովրդի բախտը: **Երեւանի Հայոց Ազգային ու Զինվորական խորհուրդների Յարուկ Կոմիտէ**

Եւ, որ կազմակերպւած է ռազմա-յեղափոխական տրիբունալ-դատարան, ամենալայն իրաւունքներով եւ մահուան պատժի գործադրութեամբ: Երեւանի շրջանի զօրամասերի հրամանատար՝ գնդապետ **ՂԱՆԻԷԼ ԲԷԿ ՓԻՐՈՒՄՅԱՆ** 21 փետրվարի 1918թ.

### Տրաման

Ազգային եւ դեմոկրատական բոլոր կազմակերպութիւնների եւ կառավարական օրգանների համաձայնութեամբ այսօրուանից քաղաքում յայտարարում են զինւորական դրութիւն եւ միաժամանակ յայտարարում



# Հայաստանն անկախության նախօրեին

**ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ**  
**պառնական գիտությունների թեկնածու, դոցենտ**

Հայաստանի Հանրապետության առաջացումը 1918 թվականին տեղի ունեցավ քաղաքական ներքին եւ արտաքին բարդ իրադրության պայմաններում: Հայկական պետության ձեւավորման ու զարգացման հազարամյակների համատեքստում հանրապետության ծնունդը բնորոշվում է նախ նրանով, որ այս փուլում պետությունն առաջացավ պատմական Հայաստանի մի փոքր՝ արեւելահայ հատվածում: Այն օբյեկտիվորեն բխում էր թուրքմենչայի պայմանագրի քաղաքական բազմաբնույթ հետեւանքներից:

Արեւմտահայությունն ու սփյուռքահայությունը ներկայացնող հայ ազգային, հասարակական գործիչների կողմից այն կոչվել է Արարատյան հանրապետություն, մի հանգամանք, որ վկայում էր հայ ազատագրական ծրագրերի մասնակի իրականացման, ինչպես նաեւ ներքին ու միջազգային քննարկումներում արեւմտահայության խնդրի առաջնության եւ հանրապետության ղեկավարության հետ համախա անլուծելի հակասությունների մասին:

1917 թվականին տեղի ունեցան ռուսաստանյան երկու իրարանբեր հեղափոխություններ, որոնք թեւ հայության շահերի համար չէին ծննդվել, սակայն հենց այդ արմատական իրադարձություններն էին, որ արագացրին նախ՝ բազմազգ կայսրության փլուզումը, ապա եւ՝ ազգային պետությունների առաջացման գործընթացը:

Փետրվարյան հեղափոխությունն իր շուրջ ութամսյա գոյության եւ զարգացման ընթացքում հնարավորություն տվեց ձեւավորելու եւ ամրապնդելու ազգային, դեմոկրատական այն կառույցները, որոնք հիմնականում կազմեցին 1918 թվականի պետականության հիմքը: Դրանք են՝ հայկական ազգային խորհուրդների, ազգային զորամասերի ձեւավորման, նոր իրադրության մեջ կուսակցությունների կուտակած փորձի, Հայկական եւ ազգային հարցերի պատու, հրապարակային քննարկման, անգամ Հայաստանի մանդատի գաղափարի ձեւավորման, ցարիզմի բացակայության պայմաններում Անդրկովկասի ազգային ուժերի հակասությունների անթաքույց դրսևորումը ու դրան անպատրաստ զտնվելը եւ այլ խնդիրներ:

Փետրվարյան հեղափոխության ընծեռած նպաստավոր պայմաններում ձեւավորվեցին հայկական ազգային երկու՝ Արեւմտահայ եւ Արեւելահայ խորհուրդները: Դրանց ստեղծման նախապատրաստական աշխատանքները հայ իրականության մեջ սկսվել էին դեռեւս 1916թ. գարնանից՝ կապված պատերազմի պայմաններում Հայկական հարցի ակտիվացման, տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքը հայ գործիչների կողմից ղեկավարելու միտումների հետ: Ազգային խորհուրդների համընթաց զարգացումը էր ազգային ոգու զարթոնքին, ազգային համախմբմանը, որոնք, վերջին հաշվով, ազգային պետականության ձեւավորման ու ազգային իդեալի շուրջ հայ ազգային, քաղաքական բոլոր հոսանքների ու կուսակցությունների համախմբման նպատակ էին հետապնդում: Տարիքային եւ միաժամանակ հայոց պետականության բացակայության իրականությունը, միանգամայն նոր, աննախադեպ կացություն էր առաջացրել, երբ առաջին անգամ հայ գործիչներին եւ քաղաքական ուժերին տրվում էր քիչ թե շատ ինքնուրույն գործելու հնարավորություն՝ իրենց դրական ու նաեւ աղետաբեր հետեւանքներով: Հայկական ազգային խորհուրդների առաջնահերթ խնդիրն էր շարունակվող պատերազմի պայմաններում ազգային կյանքը կազմակերպելն ու տնօրինելը: Այստեղ է, որ դրսևորվում է Ռուսաստանի ապագա դաշնային հանրապետության նոր ազգային վարչական կառուցվածքում հայկական կու-

սակցությունների քաղաքական մեծաշնորհի եւ վերջին հաշվով իշխանության համար սկսված անգիջում պայթյալը: Այն սկզբում ընթանալու էր ծրագրային հակասությունների եւ Սահմանադիր ժողովում մեծամասնության հասնելու նպատակի շուրջ: Դա թեւ նորմալ քաղաքական պայթյալ էր, սակայն, ցավոք, պատմականորեն ձեւավորված եւ հայությանը պարտադրված երեւույթ էր. պայթյալն ընթանում եւ զնալով խորանում էր հայության երկու հատվածները ներկայացնող ուժերի միջեւ: Այն ամբողջությամբ լեզակացվեց Փետրվարյան հեղափոխության ժամանակ՝ Արեւմտահայ եւ Արեւելահայ ազգային խորհուրդների ստեղծմամբ եւ իր աղետաբեր, համահայկական հետեւանքներով դրսևորվեց Առաջին հանրապետության, ինչպես նաեւ հետագայում՝ Հայկական հարցի միջազգային արծարծումների ժամանակ. հայությունը միջազգային հանրությանը ներկայանում էր երկու պատվիրակություններով:

Հայկական ազգային զորամասերի ստեղծման գաղափարը հայ իրականության մեջ ծնվել էր Հայոց Ազգային բյուրոյի, ինչպես նաեւ 1916-1917թթ. միջկուսակցական խորհրդակցությունների քննարկումներում, ապա լայն աջակցություն էր ստացել ժամանակավոր կառավարության կողմից: Հայ իրականության համար ազգային զորամասերի ստեղծումը նպատակ ուներ սեփական, վստահելի ուժերով դիմագրավել թուրքական հարձակումներին, պաշտպանվել քրդական զանգվածային բռնություններից:

Չեռնոկտեմբերյան ժամանակաշրջանում հայկական ազգային զորամասերը, հետո նաեւ Ազգային կորպուսը հանդիսացան հայ ժողովրդի գոյապահպանման, մայիսյան հերոսամարտերի ու ապա նաեւ Հայաստանի Հանրապետության ստեղծման հիմնական ռազմական միջոցն ու պաշտպանը:

Կարելիք է նաեւ Արեւմտյան Հայաստանի կարգավիճակի խնդիրը, եւ ոչ միայն Հայկական հարցի մասնակի լուծման հեռանկարի, այլեւ հատկապես Հոկտեմբերից հետո այս հարցում ռուսական երկու իշխանությունների քաղաքականության բեւեռային տարբերության տեսանկյունից ելնելով:

Ռուսական ցարիզմի կողմից նվաճված Արեւմտյան Հայաստանի նկատմամբ քաղաքականությունը գրեթե լիովին որդեգրեց ժամանակավոր կառավարությունը՝ սկզբունք ընդունելով ռուսական պետության ազգային շահի հարատեւությունը եւ շարունակականությունը: Առաջնորդվելով դեմոկրատական հեղափոխության հռչակած ազգերի ինքնորոշման բուրժուական կարգախոսով՝ նոր իշխանությունը փոխեց միայն հարցի արտաքին հանդերձանքը, այն է՝ զուտ ռազմականացված վարչակազմին փոխարինեց քաղաքացիական ձեւը, կառավարմանը ներգրավեցին հայ գործիչներ (Արեւմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության՝ քաղաքացիական մասի տեղակալ նշանակվեց դաշնակցական Յ.Ջավրիյանը եւ այլն - Վ. Ս):

Այս ամենի հետ մեկտեղ Արեւմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության ստեղծումը վիթխարի առաջընթաց բայլ էր Հայկական հարցի լուծման ճանապարհին, նախ՝ Արեւմտյան Հայաստանը ազատագրվում էր թուրքական լծից, կատարվում էր այն, ինչ 1828 թվականին թուրքմենչայում: Տարբերությունն այն էր, որ պատերազմը դեռ չէր ավարտվել եւ թուրքիայի հետ պայմանագիր չէր ստորագրվել: Ժամանակավոր կառավարությունը, դարձյալ ելնելով ռազմաճակատի ապահովության նկատառումներից, լայնորեն աջակցում էր արեւմտահայ գաղթականության երկիր վերադառնալու քաղաքականությանը, այսինքն՝ խոսք չէր գնում Արեւմտյան Հայաստանը հայաթափելու մասին: Պատերազմի հաջող ելքի դեպքում Արեւմտյան Հայաստանը, ըստ երեւույթին, առանձին կարգավիճակով կմիանար Ռուսաստանին եւ Ռուսաստանի խորհրդայնացումից հետո անգամ այն կմնար այդ պետության կազմում:

Ասվածից հետեւում է, որ հայոց պետության վերաստեղծումը մեծապես կապվում է ռուսական իրականության հետ, այն առումով, որ օբյեկտիվորեն միայն վերջինիս կազմում ստեղծվեցին բոլոր այն նախադրյալներն ու հիմքերը, որոնք թեւ ոչ լիարժեք, այնուամենայնիվ, հնարավոր դարձրին Հայաստանի Հանրապետության ստեղծումը: Գոնե անվիճելի է այն իրողությունը, որ այդ պետությունը չստեղծվեց ոչ թուրքիայի եւ ոչ էլ Իրանի կազմում:

Այս հավանական հեռանկարը ընդհատվեց Հոկտեմբերյան հեղաշրջմամբ: Պատմագրությունը սովորաբար նույն հարթության վրա է լուսաբանում Ռուսաստանի նոր իրադրության նկատմամբ Անդրկովկասի վերաբերմունքի հիմնահարցը: Մինչդեռ միանգամայն տարբեր է Կովկասի ազգային-քաղաքական ուժերի, ինչու չէ, նաեւ ազգերի դիրքորոշումը բուլշեիկյան հեղաշրջմանը: Այս հարցի պարզեցումը կարելիք է հետագա ռազմաքաղաքական իրադարձությունների եւ Անդրկովկասի ներքին հակասությունների տեսանկյունից: Ատացվում է, որ վրացական ազգայնականությունը՝ ի դեմս մեմշեիկների, այս իշխանափոխության մեջ տեսավ «ատելի» Ռուսաստանից անջատվելու վաղեմի երազանքի իրականացումը: Կովկասի թաթարների (աղրբեջանցիներ) դիրքորոշումը ավելի քան պարզ էր: Պատերազմից դուրս եկած եւ տարածքային նվաճումներից հրաժարվող բուլշեիկյան Ռուսաստանը այլեւ չէր սպառնում դարավոր հակառակորդ թուրքիային, որն էլ իր հերթին այս հեղաշրջման մեջ տեսնում էր նախ եւ առաջ պանթուրքիզմի ծրագրերի իրագործման հնարավորություն: Ինչ վերաբերում է հայ իրականությանը եւ քաղաքական ուժերին, ապա վերջիններս կանգնեցին բարդ երկընտրանքի առջեւ. մի կողմից անհրաժեշտ էր շարունակել աջակցել Արեւմտյան Հայաստանն ազատագրած Ռուսաստանին՝ շուրջ հարյուրամյա ռազմավարական դաշնակցին, մյուս կողմից՝ քարծառնում էր հայ իրականության ազդեցիկ ազգային-քաղաքական ուժի, դաշնակցության բուլշեիզմի նկատմամբ անսքող ատելության եւ թշնամանքի հիմնահարցը: Այս հանգամանքը ՀՀԴԴ-ը մղեց դեպի Կովկասի ազգային ուժերի հետ դաշինքին՝ երկրորդ պլան մղելով թուրքական սպառնալիքը եւ Փետրվարյան հեղափոխության ժամանակ արդեն իսկ դրսևորված Կովկասի ազգամիջյան, տարածքային հակասությունները: Անդրկովկասյան բազմաթիվ եւ տարբերույթ համագումարներում, մասնավորապես Կովկասի ապագա ազգային վարչական բաժանումներին նվիրված խորհրդակցություններում, թերեւս 1905-1907թթ. հայ-թաթարական ընդհարումներից հետո նոր մակարդակով դրսևորվեց վրաց-աղրբեջանական դաշինքը՝ հայության ու այն ներկայացնող քաղաքական ուժերի դեմ:

Ստեղծված քաղաքական իրավիճակում կա՞ր արդյոք այլընտրանք: Դա, իհարկե, բարդ քաղաքական եւ պատմագիտական խնդիր է, որ այդ իրադարձություններից ի վեր լուրջ մտորումների տեղիք է տալիս, պահանջում է նաեւ հայ հասարակությանը: Ամբողջ հարցն այն է, որ ժամանակի սկզբնաղբյուրային հենքի վրա անգամ չի հաջողվում ստանալ իրավիճակի լիարժեք պատկերը:

Հաճախ մենք՝ պատմաբաններս, հետանուտ լինելով պատմագիտական նյութ մանրամասներին, հեռանում ենք սովալ դեպքում Անդրկովկասի քաղաքական իրադարձություններին երանգ տվող հանընդհանուր արտատարածաշրջանային անցուդարձից: Այդպիսիք են նախ՝ Ռուսաստանի խորհրդայնացման փաստը, երբ այդ ճանապարհով վերջինս փաստորեն զրկվեց պատերազմի հաղթական արդյունքներից, գերմանական իմպերիալիզմի եւ բուլշեիզմի գաղտնի համաձայնությունը, սիոնիզմի գործունը, դրա հետ կապված Անդրկովկասում խորհրդային իշխանության հաստատման եւ բուլշեիկյան ղեկավար գործիչների տարածայնությունների խնդիրը, բուլշեիկների ու երիտթուրքերի

ձեւավորվող դաշինքը եւ այլն: Այս եւ նման հարակից հարցերն էլ հենց պայմանավորում էին խորհրդային Ռուսաստանի եւ Անդրկովկասի, հայ-թուրքական, հայ-վրացական, այդ բոլորի ու խորհրդային իշխանության բազմաշերտ փոխհարաբերությունները: Միայն այս ամենի նկատմամբ որոշակի մոտեցման եւ համակողմանի գիտական հետազոտման արդյունքում հնարավոր կլինի լուսաբանել մասնավորապես 1917-1918թթ. քաղաքական զարգացումները եւ Անդրկովկասի անկախացման գործընթացը:

Իրադարձությունների ծրագրավորված զարգացումը, վերջինիս առաջադրած անհուսալիության եւ դատապարտվածության գործոնը թերեւս բխում էին Գերմանիա-երիտթուրքեր-բուլշեիկներ-սիոնիզմ այլառակից, որտեղ բուլշեիկների «համաշխարհային հեղափոխության» համար եւ միջազգային իմպերիալիզմի դեմ պայքարի (պատերազմի սանձազերծող եւ Հայկական ցեղասպանության գլխավոր մեղավորներ Գերմանիան բուլշեիկների համար այլեւս իմպերիալիստ չէր համարվում. այստեղից էլ Բրեստ-Լիտվսկի կործանարար պայմանագիրը-Վ.Ս.) քաղաքականության լաբիրինթոսում էին խոնարհվել հայ ժողովուրդն ու նրա ազգային-դեմոկրատական կուսակցությունները:


Այլընտրանքի բացակայությունը տանում էր դեպի խորհրդային իշխանության նկատմամբ ատելության, դրա կարճատեւության եւ արկածախնդրական մեկնակետին գերապատվություն տալուն: Դրանից է հիմնականում բխում դաշնակցության անցումը Անդրկովկասի ազգայնական, հակառուսական ուժերի եւ անգամ թուրքիայի ճամբարը: Ցավոք, այլընտրանքի կիզակետը հենց Անդրկովկասի խորհրդայնացման խնդրի մեջ է: Հասկանալի է, որ խորհրդային կենտրոնական իշխանությունը դեմ չէր դրան եւ 1920-1921թթ. երկրամասի խորհրդայնացման փաստը սավածի լավագույն ապացույցն է: Բուլշեիկ Ստ.Շահումյանի պայքարը Անդրկովկասի Կոմիսարիատի ու նաեւ դաշնակցության որոշ գործիչների դեմ (չմոռանանք, որ Շահումյանի հետ սերտորեն համագործակցում էին ՀՀԴԴ հիմնադիր Ռուստոմը, գեներալ Բագրատունին - Վ.Ս.) ոչ թե Անդրկովկասի խորհրդայնացման պարզունակ գաղափարի, այլ այդ ճանապարհով Արեւմտյան Հայաստանի խնդիրը լուծելու, եւ ավելին, Անդրկովկասում հայկական տարրի գերիշխանության հաստատման խնդրի մեջ էր: Բացվի խորհրդի իշխանության ղեկավարը 1917թ. նոյեմբերին առաջարկում էր դաշնակցական գործիչներին, որպեսզի իրեն եւ այդ ճանապարհով նաեւ բուլշեիկներին ենթարկվող կովկասյան բանակի զգալի մասի ու նաեւ դաշնակցության ազգային զորամասերի միջոցով գրավեն Թիֆլիսը, տապալեն Անդրկովկասյան Կոմիսարիատը, այլ խոսքով՝ Անդրկովկասում վրացական մեմշեիզմի հեգեմոնիան եւ խորհրդայնացման ճանապարհով թերեւս միասին փրկեն հայ ժողովրդին բազում վտանգներից:

Շահումյանի հանդուգն եւ կենտրոնի չենթարկվող վարքագիծը գործնականում դատապարտվեց նախ Լենինին, Տրոցկու եւ Ատալինի կողմից: Ուշագրավ է, որ Բաբելի 26 կոմիսարների գնդակահարությունից հետո, մինչեւ իր կյանքը վերջը, շուրջ 7 տարի, Լենինը ոչ մի խոսք չի հրապարակել եւ «լավագույն զինակից» Շահումյանի մասին:

1918թ. մարտին, թուրքական նոր արշավանքի պայմաններում, դաշնակցությունը համագործակցեց Շահումյանի եւ Բաբելի կոմունայի հետ, սակայն ավելացել էր հայության հակառակորդների թիվը, թուրքերին, աղրբեջանցիներին, վրացիներին այժմ ավելացել էին նաեւ հակաբուլշեիկյան սոցիալիստական կուսակցությունները (եսեռներ, մեմշեիկներ եւ այլն), սպիտակ շարժումը, անգլիացիները:

Ինչ վերաբերում է թուրքիայի քաղաքականությանը, ապա այն ստանալով Գերմանիայի լիարժեք աջակցությունը եւ խորհրդային իշխանության չի հրապարակել ամրապնդելով իր «հակաիմպերիալիստական» եւ «կարմիր» կեցվածքը, լայնորեն ձեռնամուխ եղավ նախ՝ Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու, ապա եւ արեւելահայության բնաջնջման քաղաքականության իրագործմանը: Միայն մայիսյան հերոսամարտերը կանգնեցրին այդ իրեշավոր ծրագիրը եւ ապահովեցին հայոց պետականության վերականգնումը:

# 1918թ. մայիսյան հերոսամարտերի կազմակերպիչներն ու գլխավոր զորահրամանատարները




**Մանուկյան Արամ**  
1879, Շուշի-29.1.1919, Երեւան



**Փետրոս Ե Տփղիսեցի (Մուրենյան)**  
28.8.1847, Թիֆլիս-8.5.1930, Էջմիածին, Ամենայն հայոց կաթողիկոս



**Նազարբեկով (Նազարբեկյան) Թովմաս**  
(1855-1928, Թիֆլիս), ռուսական բանակի գեներալ-մայոր (1915)



**Սիլիկյան (Սիլիկով) Մովսես**  
(14(26).9.1862, Ելիզավետպոլի նահանգ-1932), ռուսական բանակի գեներալ-մայոր (1882)



**Փիրումյան (Փիրումով) Դանիել-Բեկ**  
(1864, գյուղ Նախիջեւանիկ, Ասկերանի շրջան-1922, Երեւան), գնդապետ (1914)




**Կանայան Դրաստամար (Դրո)**  
(1(13).5.1883, Իգդիր-8.3.1956, Բոստոն)

## Մարդարապատի հերոսամարտին մասնակցած հրամանատարներն ու սպաներ

- **Մովսես Սիլիկյան**  
գեներալ-լեյտենանտ, դիվիզիայի հրամանատար
- **Դանիել Բեկ-Փիրումյան**  
գնդապետ, ճակատի հրամանատար
- **Ալեքսանդր Վեքիլյան**  
գնդապետ, ճակատի շտաբի պետ
- **Պավել Բեկ-Փիրումյան**  
գնդապետ, 5-րդ հրաձգային գնդի հրամանատար
- **Միքայել Արեշյան**  
գեներալ-մայոր, դարաքիլիսյան գնդի հրամանատար
- **Ալեքսեյ Պերեկրյուտով**  
գնդապետ, պարտիզանական գնդի հրամանատար
- **Աբրահամ Դուրխանյան**  
գնդապետ, 6-րդ հրաձգային գնդի հրամանատար
- **Իվան Սիլին**  
սահմանապահ գումարտակի հրամանատար
- **Յովհաննես Բաղդամյան**  
հեծելազորի կրտսեր սպա, հետագայում Խորհրդային Միության մարշալ
- **Ուսուր-բեյ եւ Ջհանգիր աղա**  
եզդիական գումարտակի հրամանատարներ
- **Պանդուխտ խմբապետ**  
հայկական անկանոն հեծելազորի հրամանատար
- **Խորեն Իգիթյանյան**  
գնդապետ, թնդանոթային մարտկոցի հրամանատար
- **Սակելյարի**  
կապիտան, թնդանոթային մարտկոցի հրամանատար
- **Սերգո Աթանեսյան**  
կապիտան, թնդանոթային մարտկոցի հրամանատար
- **Կլիչ**  
պորուչիկ, թնդանոթային մարտկոցի հրամանատար
- **Աղասի Յովհաննիսյան**  
գումարտակի հրամանատար
- **Արտաշես Օհանջանյան**  
գումարտակի հրամանատար
- **Կարապետ Սարգսյան**  
գումարտակի հրամանատար
- **Տրդատ Յովակիմյան**  
կապիտան, գնդացրային վաշտի հրամանատար
- **Թեփիկ Առաքելյան**  
փոխպորուչիկ, գնդացրային վաշտի հրամանատարի տեղակալ
- **Ստեփան Թոփչյան**  
պորուչիկ, վաշտի հրամանատար
- **Մանասեր Մանասերյան**  
փոխպորուչիկ, վաշտի հրամանատար
- **Երվանդ Տեր-Սիմոնյան**  
փոխպորուչիկ, վաշտի հրամանատար
- **Ալեքսանդր Միրզոյան**  
պորուչիկ, վաշտի հրամանատար
- **Արիստակես Մուրադխանյան**  
պորուչիկ, վաշտի հրամանատար
- **Միքայել Մելիք-Օհանջանյան**  
պորուչիկ, գնդի համհարզ

եւ տասնյակ այլ անուններ:

## ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ԲԱՐՏԵՋԸ





21-29 ՄԱՅԻՄԻ 1918Թ.

Կարծիքներ Արամի մասին

Այդ օրերին Արամ Մանուկյանն իր ոգևորիչ շնչով վարակում էր ամենքին

ՈՒՌԻՔԸ ՏԵՐ ՄԻՆԱՍԵՆԱԼ Կարսի մեջ 1904-ին Արամի գործակից

«Մեր գեղի (Արամ) հասկացողութեամբ մեր հայրենիքը սնան է ընկողմի մը, որ կը բաղկանայ միջուկէ մը, կեղեւէ մը եւ կեղեւի պաշտպան կանաչ կաշիէ մը: Միջուկը կը կրկնի Արաքս, Եփրատ եւ Արածանի գետերու վերին ակունքներուն վրայ, այսինքն Շիրակը, Կարսը, Բարձր Զայքը, Տարօնը: Կեղեւը կը կրկնի նոյն գետերու միջին հոսանքներու վրայ, աւելացրած ճորոխի հոսանքը: Կաշին կը կրկնի նոյն գետերու ստորին հոսանքներու վրայ, աւելացրած Վանայ Ծովի հովիտը եւ Տիգրիսի հովիտներուն աղբիւրները: Կորիզը որ լինի, ան կը ստեղծէ կեղեւը: Կեղեւը, որ ստեղծուեցաւ, ան իր կաշին կը ստեղծէ. եթէ կեղեւ ու կաշի ունենաս, բայց կորիզը չունենաս, ընկողմը փուճ է: Ուրեմն, մեր առաջին նպատակը պետք է լինի Զայաստանի կորիզը ազատագրելը»:

ՍԱՐԳԻՍ ՕՅՆԱԶԱՆԵԱԼ (ՃԱՐԳԱՏ) Արամի գործակից մայիսեան օրերուն

«Մեր կուսակցութեան մեջ ո՛չ ոք Արամի աստղը չունի: Եւ ինչպէս հոյակապ փայլում է այդ աստղը: Արամն է, որ լուսաւորում է բոլորիս ճամբան: Այժմ, մեր այս ծանր, անհնարին պայմաններուն նա այլեւս մարդ չէ, հրա՛շք է: Մեծ մարդկանց յատուկ քայլերով, թռիչքներով է առաջանում: Արամը միայն մեր՝ Դաշնակցութեանը չէ. նա այլեւս բոլորինն է»:

ԱՐԵՎԱԼՈՍ ԱՍՏՈՒԾԱՏՐԵԱԼ Արամի գլխաւոր գործակիցներէն, մայիսեան օրերուն

«Ձարմանալի էր Արամը այդ օրերին (1918 Մայիսին): Համատարած յուսալքումի այդ շրջանում նա մնաց միշտ յուսադրող, ոգևորող՝ հաւատ ու եռանդ ներշնչող...»

թեւ ռազմաճակատի եւ քիւրդի միջեւ առանձին տարբերութիւն չկար, բայց Արամի միտքը կլանուած էր առաջին գիծը ամուր եւ անսասան պահելու հոգով: Արամը իր շնչով վարակում էր ամենքին»:

Ա. ԱՍՏՈՒԾԱՏՐԵԱԼ Քաղուածք «Արամը» հարորէն

Երեւանի «Յատուկ Կոմիտե»-ի զինուորական վարիչի իր պաշտօնը հեղինակաւոր զինուորականի մը վստահելու առաջարկ կը ներկայացնէ Արամը 1918-ի գարնանը: Դաշտօնը երբ կ'առաջարկուի զօր. Մովսէս Սիլիկեանին (Արարատեան դաշտի հայ բանակի հրամանատար), ան կը մերժէ, ըսելով՝ «ես կը հրաժարուիմ, որովհետեւ մէկ է՝ ես ինքս առանց Արամի ոչինչ չեմ անելու... Ոչ մի զինուորական վերարկու ոչ ոքի չի տայ այն՝ ինչ որ Արամը ունի: Նրանցից յարմար վարիչ մեզ համար չէք գտնի: Ես



ինքս անձամբ կը խնդրեմ, որ նա չթողնի այդ պաշտօնը»: Եւ Արամը կը մնայ զինուորական վարիչի պաշտօնին վրայ... պաշտօն մը, որ ան

կը վարէ իմաստութեամբ մինչեւ Սարդարապատի անկախացումը:

ՕՆԵՆԻԿ ՄՆԻԹՈՐԵԱԼ Արամի անմիջական գործակիցներէն

«Արամը Դաշնակցութեան զաւակն էր, միաժամանակ անոր ոգին...»

«Անսահմանօրէն անկեղծ էր Արամը դէպի բարեկամն ու թշնամին: Անկեղծութիւնը անոր յաջողութեանց ու պարտութեանց պատճառն ու հետեւեանքն էր միաժամանակ...»

«Ան գիտէր ստեղծել սերունդներ, գիտէր մարդկանց հրամայել որպէսզի երթան մեռնին, գիտէր մարդկանց խնդրել, որպէսզի այլեւս չսպանեն...»

«Արամի մահուան թափօրը կանգ առաւ երկու նուիրական հիմնարկութիւններու՝ Զ.Յ.Դաշնակցութեան եւ Զայաստանի խորհրդարանի շէնքերուն առջեւ, որովհետեւ ան Դաշնակցութեան ոգին էր եւ Անկախ Զայաստանի հիմնադիրը...»

«Այսօր կրօնական երկիւղածութեամբ մը կ'արտասանուի իր անունը, վստահ անկախ մեր օրերու Մովսէսը եղաւ, որ առաջնորդեց մեզ բոլորս Կարմիր Ծովերէն եւ Երեւանի Ազգային խորհրդարանի վրայ կախեց մեր ցեղի Անկախութեան եւ Ազատութեան նուիրական նշանատախտակը»:

Կաթողիկոս Գեւորգ Ե Տփղիսեցու կարգադրութեամբ այդ օրերին Արարապյան երկրի բոլոր վանքերի ու եկեղեցիների զանգերը համազգային տափառապ հայտարարեցին

...Թիֆլիսի Զայոց ազգային խորհուրդը, որ բովանդակ հայութեան բախտի տնօրէնն էր փաստորէն, արդեն հաշտվել էր անձնատվական այս որոշման հետ, հույսը դրել էր թուրք կառավարողների ողորմածության վրա եւ սպասում էր ազգի օրհասին:

Սակայն բարեբախտություն էր, որ այս պայմաններում, ինքնազինաբանման ու հոգեմաշ խուճապի այս մթնոլորտում, կային մարդիկ, որոնք հավատում էին հրաշքին:

Պահպանվել են ճակատագրական այն օրերի վավերագրերը: Գրավոր աղբյուրները, հիշատակարաններն ու ակնանատեսների վկայությունները ներկայացնում են համազգային ողբերգութեամբ մակարդված այն մթնոլորտը, որի մեջ վեհօրէն բարձրանում են հերոսները:

Երեւանյան ռազմաճակատի հրամանատար, գեներալ Մովսէս Սիլիկեանը, Զայոց սպարապետ Նազարբեկյանի ու Թիֆլիսի ազգային խորհրդի հանձնարարությամբ, էջմիածնում ներկայացել էր Ամենայն հայոց կաթողիկոսին եւ առաջարկում էր ապահովության համար հեռանալ Մայր աթոռից: Ապահովության համար, որովհետեւ որոշված էր Երեւանն ու էջմիածինը հանձնել թուրքերին եւ հաշտություն կնքել, հակառակ դեպքում՝ ապավինել Կոտայքի ու Սեւանի բարձունքներին եւ պաշտպանվել վերջին ուժերով:

Եվ այն ժամանակ ծերունագարդ կաթողիկոս Գեւորգ Ե Տփղիսեցին ընդվզեց այդ անհեռատես ու անհեռանկար որոշման դեմ, կարգադրեց Արարապյան երկրի բոլոր վանքերի ու եկեղեցիների զանգերից համազգային տափառապ ազդարարել: Նա Մայր տաճարի բեմից այսպես խոսեց ժողովրդի հետ.

— Ա՛զգ հայոց, թուրքը՝ մեր բանա-

կան հոտի դարավոր թշնամին, նվաճել է Ալեքսանդրապոլը, շարժվում է դեպի սիրտը մեր երկրի, մեր հավատի, մեր կենսագրության: Գալիս է Արարապյան երկրի վրա: Թուրքը կտորրած ու ավեր փռելով գալիս է, եւ մեր զորավետներն էլ ուրիշ էլք չեն գտնում այդ աղետից, քան հայոց հայրապետին փախուստի մղելը: Նրանք Ամենայն հայոց կաթողիկոսին առաջարկում են սեփական կյանքը փրկել Բյուրականում կամ ուրիշ անմատչելի որեւէ լեռնածորակ վրա: Ոչ եւ ոչ, հազար անգամ ոչ: Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից ավանդված Մայր աթոռը: Ես չեմ հեռանա հայոց առաքելական եկեղեցու օջախից: Եթէ հայոց զինվորությունն ու ինքը՝ հայ ժողովուրդը, չեն կարողանա թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթէ ի գործ չեն լինի փրկելու մեր սրբությունները, ապա թող ես նահատակվեմ հենց այստեղ, չեմի վրա Մայր աթոռի, որի գահակալի պատիվն ունեմ մեր սուրբ նախնիների արդար բարեխոսությամբ եւ Աստծո ողորմածությամբ:

Դահլիճում գոհունակության տնքոցը հորձանք տվեց, ժայթքեց դուրս, որպեսզի տարածվի տաճարի բակում ծփացող բազմության վրա եւ այնտեղից էլ հորդա Վաղարշապատի փողոցները, գնա ավելի հեռու, սփռվի կուչ եկած Զայաստանում ու նրա սահմաններից դուրս:

— Թուրքը չի կշտացել մեր ժողովրդի արեւմտյան կետով, հիմա էլ այս մի կեսի վրա է եկել անհազուրու ու մոլեգնած, — իր խոսքն այսպես շարունակեց Ամենայն հայոց հայրապետը: — Եվ եթէ այստեղ էլ հաղթեց, դա կլինի ստույգ վերջը մեր ազգային գոյության: Մի՛թե

մենք չպիտի կարողանանք պահպանել մեր օջախի կրակը, մեր հավատի ջահը, մեր ազգային գոյի հիմքերը: Իսկ եթէ եկել է վերջը, ապա այն ինչո՞ւ չընդունենք պատվով ու քաջությամբ եւ ոչ թե ողորմելի գեռուցի պես սոսիսի առաջ սողալով: Մեր պատմության անցյալ դարերը լիքն են քաջության օրհնակներով, ներկված են նահատակների արյամբ: Դրանով չի սպառվել մեր արյունը, եւ չի կորսվել քաջությունը մեր շարքերից: Դարեր շարունակ հայոց ազգն այսպես է ապրել՝ իր ինքնության համար այսօր մեռնելով: Եվ որովհետեւ ով գաղափարի հետ է մեռնում, մեռնում է որպես հատիկը ցորյանի, ապա հատիկի մահով նոր կյանքեր են ծնվում վաղ թե անագան: Դրա համար է, որ զանգվածային մահերով ու կոտորածներով հարուստ մեր կենսագրությունը չի ունեցել եւ երբեք էլ չպետք է ունենա վերջին վերջակետ: Ուրեմն էլ ինչո՞ւ դավենք ապրելու եւ գոյատևելու մեր ազգային կերպին: Ինչո՞ւ՞ ազգովին չբարձրանանք թշնամու դեմ, որ գալիս է անդրարաքսյան իր թեթեւ հաջողություններով հղվացած եւ մեր արյան վերջին կաթիլին ծարավի...»

— Պատր՛աստ ենք ելնելու, վեհափա՛ռ տեր, — գոչեցին դահլիճի տարբեր կողմերից:

Եվ այս ահեղազոչ ձայնե՞րն էին միացան, թե՛ դահլիճը միաձայն, միահամուռ պայթեց:

— Պատրա՛ստ ենք: Կաթողիկոսը դրան էլ սպասում էր. շունչ առավ մի պահ եւ, հայացքը ծփացող անբոխի վրա, աջով աղամանդազարդ լանջախաչը բռնած, երանությամբ շարունակեց.

— Ես միշտ էլ հավատացել եմ իմ ժողովրդի ոգուն: Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնությունները: Ես հա-



մոզված եմ նաեւ, որ ազգն իմ հայոց՝ անարգ թշնամուն դեռեւս չի ասել իր վերջին խոսքը: Եվ խոսքն այդ պետք է լինի հաղթական...

— Պետք է լինի հաղթական... հաղթական, — արձագանքեց դահլիճը: Եվ արձագանքն այդ թնդաց Մայր տաճարի կամարների տակ, ելավ նրա դռներով ու լուսամուտներով, տարածվեց լցվեց Արարապյան աշխարհի:

ԲԱԳՐԱՏ ՈՒՈՒՐԱԲԵՅԱԼ Զարված «Զրուցարանից», էջ 605-607

# ՕՐԱԳՒՈՒԹՅՈՒՆ

# Սարդարապատի հերոսամարտը

**5 մայիսի.** Տարոնի (Մուշ-Սասուն-Խնուս) կամավորական զինված ուժերի (500 սուր Սասունցի Մուշեղ, Սասունցի Մանուկ, Մորուք Կարո, Չուր) կողմից գրավվեց Թուրքի Թալիսի (Ս. Թալիս) անառիկ համարվող բերդը. ռազմական այդ մեծ հաջողությունը ձեռք բերվեց նվազագույն կորուստներով՝ ընդամենը 19 զոհ (այլ տվյալներով՝ 8)։ Եռօրյա մարտերում Արագածի ողջ լեռնազանգվածը մաքրվեց թուրք-բաքարական տարրից՝ վերստին հայացավ։ Այս վճռական գործողությունը ռազմական տեսակետից մեծ դեր խաղաց Սարդարապատի հաղթանակի գործում։

**17-19 մայիսի.** Թուրքերի առաջացումը Ալեքսանդր-Երեւան երկաթուղու երկայնքով։ Մայիսի 17-ին Արագածի ջոկատի մի մասը (Երզնկայի գունդ) նահանջեց Ղարաղուլա կիսակայարան, իսկ մյուս մասը (Ղարաքիլիսայի եւ Խնուսի զնդեր) շարունակում էր պահպանել Ախուրյանի (Արփաչայ) արեւելյան ափը՝ Ղազվին-Թագաքենդ հատվածում։

Նույն օրը, Ուզունքիլիսայի շրջանում հայտնվեց հակառակորդի առաջապահը՝ 300 սվին եւ սուր։ Հաջորդ օրը մայիսի 18-ին, Ախուրյանի արեւմտյան ափին Բուրդաշենից մինչեւ Թագաքենդ, թշնամու ոչ մի զորամաս չէր եւս։

**Մայիսի 19-ին** Ախուրյանի Կամբինակի ծանծաղուտով թուրքերը հարձակում ձեռնարկեցին Ղարաղուլա կիսակայարանի վրա։ Թեւեռից շրջանցված Արագածի ջոկատը (1-ին, 2-րդ առանձին բրիգադներ, գնդապետ Կազմիրյան) նահանջեց դեպի Ղարաբուրուն կայարան. նույն օրը ետ մղվեց քրդական անկախ ուժերի հարձակումը Ղարաբուրունի վրա։

Թշնամու հայտնվելը Արարատյան դաշտում առաջ բերեց նման դեպքերում սովորական դարձած խուճապ եւ գաղթ։

Շնորհիվ Երեւանի հայոց ազգային խորհրդի ձեռնարկած եռանդուն միջոցների (այդ նպատակով տրամադրվեցին հարյուրավոր սայլեր եւ բացվեցին սննդի կետեր) հնարավոր եղավ վերահսկելի դարձնել գաղթեւ թույլ չտալ, որ այն վերածի ամենակործան հեղեղի։ Մայիսի 22-23-ից սկսած, երբ հայկական զորքերն անցան հակահարձակման, գաղթը վերջնականապես դադարեց։ Որոշիչ դեր խաղաց նաեւ հենց բուն Երեւանում տիրող կայուն իրավիճակը. դեռ փետրվարի 21-ին, Դանիել Բեկ-Փիրումյանի հրամանով քաղաքում հայտարարվել էր ռազմական դրություն եւ մտցվել պարետային ժամ։ Ստեղծվել էր նաեւ ռազմահեղափոխական տրիբունալ՝ մահապատի իրավունքով։ Սարդարապատի ռազմաճակատի թիկունքում խուճապի համեմատաբար արագ սանձահարումը եւ կարգուկանոնի վերահաստատումը դարձան ապագա հաղթանակի կարեւորագույն գրավականներից մեկը։

**18 մայիսի.** Երեւանի քաղաքային դուժման որոշում ընդունեց քաղաքի Երկամյակը։

**19 մայիսի.** Թուրքերի առաջացումը երկաթուղով՝ դեպի Սարդարապատ - Երեւան. Սուրմալուն պաշտպանող Իզդիրի ջոկատի համար ստեղծվեց Երեւանյան զորամասի հիմնական ուժերից կտրվելու եւ շրջապատվելու վտանգ։

Իրադրությունը Սուրմալունում մայիսի 18-ին Կողբի հայկական ուժերը հարձակման ենթարկվեցին հակառակորդի կողմից եւ գեներալ Սիլիկյանի հրամանով Փիրուլից

մարտով նահանջեցին դեպի Կարակալայի կամուրջ՝ Արաքսի ձախ ափ։ Նույն օրը Մուշի (Օրգովից արեւմուտք) հայկական պահակակետը ետ շարտեց թուրքական հետախույզ խմբին։ Մայիսի 19-ին թուրքական 4-րդ կորպուսի զորամասերը հիմնականում 5-րդ հետեւակային դիվիզիան (Մյուրսել փաշա), Չինգլի եւ Կուջալի (Քարվանսարայի) լեռնանցքներով ներխուժեցին Սուրմալու. նպատակը գրավել Սուրմալուն եւ, Կարակալայի ու Սարգարայի կամուրջներով դուրս գալ Երեւանյան գործարմի թիկունքը։ Չինգլի լեռնանցքում, ինչպես նաեւ Խոշխարաբից եւ Խալֆալուից հարավ ընկած բարձունքներում որոշ դիմադրությունից հետո հայկական ուժերը թողեցին պաշտպանական մեծ կարեւորություն ունեցող հիշյալ գյուղերը եւ նահանջեցին Իզդիր։

**Մայիսի 20-ի** առավոտյան թուրքական զորքերը, ինչպես նաեւ թուրք-քրդական հրոսակախմբերը հարավից եւ հարավ-արեւմուտքից գրոհեցին Իզդիրը։ Իզդիրի ջոկատին մինչ այդ հրամայված էր թշնամու հարձակման դեպքում Սարգարայի կամուրջով նահանջել Արաքսի ձախ ափ եւ միանալ Սարդարապատի ջոկատին, ինչը եւ կատարվեց նույն օրը մայիսի 20-ին։

Անցնելով Արաքսի հյուսիսային ափ՝ Իզդիրի ջոկատը պայթեցրեց Կարակալայի եւ Սարգարայի կամուրջները, որի հետեւանքով Աուրմալուն գրաված թուրքական զորքերը մնացին կտրված Սարդարապատի ռազմաբեմից, հայկական կողմից կամուրջների մոտ դրվեց ուժեղ պաշտպանություն, որը ձախողեց Սարդարապատի ճակատամարտի օրերին Արաքսը գետանցելու եւ Սարդարապատի ջոկատին թիկունքից հարվածելու թշնամու փորձերը։

**20 մայիսի.** Թուրքական գերազանց ուժերի ճնշման տակ հայկական զորամասերը նահանջեցին Սաստարայից, Թալիսից, Աշնակից, ինչպես նաեւ Ղարաբուրուն եւ Արաքս կայարաններից։

Գեներալ Սիլիկյանի այցը Գեւորգ Ե կաթողիկոսին, Գերջինս վճռականապես մերժեց գեներալի առաջարկը թողնել Ս. Էջմիածինը եւ ապաստանել Սեւանա կղզում։

**«Ասացեք հայ բանակին, թե՛ ես տեղիցս չեմ շարժվում։ Ես չեմ թողնում Ս. Էջմիածինը։ Եթե մեր զինվորները նրան չեն կարողանում պաշտպանել եւ թուրքերը մտնելու են Ս. Էջմիածին, իմ դիակը պիտի գտնեն Ս. Էջման սրբավայրում»։**

Հայոց Վեհափառի սնան կեցվածքը, միացած Երեւանի ազգային խորհրդի նախագահ եւ դիկտատոր Արամ Մանուկյանի դրսևորած անասան կամքով Երեւանի մատուցներում կանգնեցնել եւ ջախջախել անարգ ոսոխին, մեծապես նպաստեց զորքի եւ ժողովրդի մոտ հոգեբանական շրջադարձին։ Մայիսի 21-29-ին Արագածից մինչեւ Սեւան Գեւորգ Ե-ի հրամանով անընդհատ ղողանցում էին բոլոր եկեղեցիների զանգերը, գեների կոչելով ժողովուրդին։ Հայ հոգեւորականության շատ ներկայացուցիչներ Սուրբ Էջմիածնի միաբան, մեծանուն հայագետ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը (հետագայում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս), Էրզրումի առաջնորդ Ջավեն արքեպիսկոպոս Մահտեսի-Բաբայանը, Մշո Սուրբ Առաքելոց վանքի միաբան Դանիել վարդապետը, գյուղական քահանաներ իրենց գլխավորած աշխարհագրային ջոկատներով (Էջմիածնի

շրջանի Գրամփա գյուղի քահանա Տեր-Հովհաննես, Արմավիրի շրջանի Ջաֆարապատ գյուղի քահանա Տեր-Սահակ, Արմավիրի շրջանի Թագազյուղի քահանա Տեր-Ջախար) կամ առանձին, 5-րդ դարի սբ Ղեւոնդյանց օրինակով, միացան հայ զորքին մարտի եւ հաղթանակի առաջնորդելով նրան։

Արարատյան դաշտում թշնամու վճռական ճակատամարտ տալու որոշման գործում շատ մեծ դեր խաղաց նաեւ Դրոյի անասան դիրքորոշումը, որն այդ առթիվ գումարած մի խորհրդակցության ժամանակ փորձեց նույնիսկ հաշվեհարդար տեսնել նահանջի եւ Երեւանը թուրքերին հանձնելու կողմնակից գեներալ Բեժանբեկովի հետ։ Վերջինս Սարդարապատի ճակատամարտի օրերին, լինելով թիկունքի պետ, ծավալեց եռանդուն գործունեություն եւ լիովին արդարացրեց իրեն։

**21 մայիսի.** Թուրքական հարձակումը շարունակվեց. երեկոյան կողմ (ժամը 17-ին) Սարդարապատի ջոկատը նահանջեց Քյուրաքյանլու-Քյորփալու-Հայի Չեյվակ գծի, ընդ որում՝ թշնամին ընդհուպ մոտեցավ Քյորփալուին։ Երկաթգծի ուղղությամբ թուրքերը գրավեցին Սարդարապատ կայարանը եւ գյուղը, ինչպես նաեւ Գեջրլուն։ Օրվա մարտերին մասնակցում էր հակառակորդի 3 000-ոց հետեւակը։ Չնայած նահանջին, զգալիորեն ուժեղացվեց Արաքսի գետանցումները (Սարգարա, Կարակալա) պահպանությունը։

Հայեր. հակառակորդ կողմերի ուժերը Երեւանյան գործարմը ներառյալ մայիսի 23-ից Բաշ-Ապարանի ճակատ տեղափոխված ուժերը. 2-րդ դիվիզիա ոչ լրիվ կազմով, 3-րդ հետեւակային բրիգադ, նախկին Արագածի ջոկատ (առաջին եւ երկրորդ առանձին բրիգադներ), նախկին Իզդիրի ջոկատ (Վանի բրիգադ, Իզդիրի գունդ եւ Պարտիզանական գունդ), կորպուսային այլ զորամասեր՝ հետեւակ եւ հեծյալ, մեծ թվով կամավորական խմբեր - 10 հազար սվին եւ սուր, 28 հրանոթ։ Հրամանատար՝ գեներալ Մ.Սիլիկյան, տեղակալ՝ գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյան։ Երեւանյան գործարմի (Սարդարապատի ջոկատի) շտաբը գտնվում էր Վաղարշապատում Գեւորգյան ճեմարանի շենքում։

Թուրքեր. 36-րդ հետեւակային դիվիզիա (106, 107, 108 գոնդեր եւ հարվածային գումարտակ)՝ ուժեղացված հետեւակային եւ հեծյալ զորամասերով - 4-6 հազար սվին եւ սուր, 40 հրանոթ։ Թուրք-քրդական անկանոն ուժեր։ 3 հազար։

**22 մայիսի.** հայկական հակահարձակման սկիզբը, երկաթգծի ուղղությամբ հարձակվող թշնամիի հասավ Ղազնջու (Երեւանից 20 կմ արեւմուտք), որին էլ հետեւեց հայկական կողմի վճռական հակահարվածը։ Հարձակման անցնելով Քյուրաքյանլու-Քյորփալու-Հայի Չեյվակ-Ղուրդուղուլի գծից, հայկական ուժերը ետ վերցրին Սարդարապատ կայարանը եւ գյուղը, ինչպես նաեւ Գեջրլուն եւ Մուլա-Բայազեթը։ Հակառակորդի գլխավոր ուժերը նահանջեցին Արաքս կայարանի ուղղությամբ, ամրանալով կայարանի մատուցներում եւ հատկապես նրանից հյուսիս-արեւելք ընկած 449 (Թյուլքի-թափալ) եւ 440 (Չիմնի-Ղըռ լ.) բարձունքներում։ Ռազմաճակատի հյուսիսային հատվածում, 5-րդ գնդի մեկ գումարտակ, վաղ առավոտյան, ժամը 6-ին հարձակման անցնելով Կոշ-Թալիշ ուղղությամբ, մինչեւ երեկո գրավեց Ուջա-

նը, Վանք-Խարաբը եւ Կոշը։

Օրվա ընթացքում հայկական զորքերը առաջ շարժվեցին 15-20 կիլոմետր։ Թուրքերի առաջապահը գլխովին ջախջախվեց. նրանց կորուստները կազմեցին 500 սպանված եւ վիրավոր։

Մայիսի 22-ի հաղթական մարտին մասնակցում էին 5-րդ (գնդապետ Պավել Բեկ-Փիրումյան), 6-րդ (գնդապետ Դուրխանյան), պարտիզանական (գնդապետ Պերեկոյուստով) եւ Իզդիրի հետեւակային գնդերը, Պարտիզանական հեծյալ գունդը (փոխգնդապետ Կորոկով), Հատուկ հեծյալ գունդը (գնդապետ Ամիրխանյան), գնդապետ Սիլիկի սահմանապահ ջոկատը, ինչպես նաեւ կապիտաններ Իզդիրյանյանի, Կլիչի, Սակեյարիի եւ Աթանայանի մարտկոցները. Սարդարապատի ճակատամարտում հայկական հրետանու ընդհանուր հրամանատարությունն իրականացնում էր գնդապետ Արարատյանը (հետագայում գեներալ, Հայաստանի Հանրապետության ռազմական նախարար)։

Կանոնավոր զորքերի հետ միասին ուսուսի ուլած խիզախաբար մարտնչում էին նաեւ մեծ թվով կամավորականներ, հիմնականում հեծյալ խմբեր՝ Թռուցիկ Հովսեփի, Սակեղոնի, Բուլանդիսի Մուրադի եւ այլ. ընդամենը 700 սուր։

Հայկական զորքերի հակահարձակմանը ամենակատիվ կերպով մասնակցեց նաեւ եզդիական հեծյալ ու հետիոտն աշխարհագորը՝ Ջհանգիր Աղայի գլխավորությամբ։ Կռվի բռնվելով թշնամու հետ ռազմաճակատի առավել վտանգավոր երկաթգծից հարավ ընկած հատվածում եզդիները Ղուրդուղուլի մատուցներից ջախջախիչ հակահարվածով ետ շարտեցին թուրքերին։

Սարդարապատի ռազմաճակատում տարած առաջին խոշոր հաղթանակից հետո եզդիական աշխարհագորը Սիլիկյանի հրամանով մետվեց Բաշ-Ապարանի ճակատ. որտեղ նույնպես իրեն դրսևորեց ամենափայլուն ծեսուլ։

Մայիսի 22-ի բախտորոշ եւ շրջադարձային հակահարվածը, որ հոգեբանական բեկումն առաջացրեց զորքի եւ բնակչության մոտ եւ հետագա օրերին վերածեց հակահարձակման, նախաձեռնեց եւ իրականացրեց Երեւանյան գործարմի փոխհրամանատար գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանը։

**Սարդարապատի ճակատամարտից 55 տարի անց, 1972 թվականի սեպտեմբերի 3-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի հատուկ կոմիտեով մայիսի 22-ը մտցվեց Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու օրացույցի մեջ, որպես «Սարդարապատի հերոսամարտում զոհվածների հիշատակը ոգեկոչելու օր»։ Կոմիտեով հրահանգվում էր՝ այսուհետեւ ամեն տարի՝ այդ օրը, հայկական բոլոր եկեղեցիներում կատարել «հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոններ եւ պանծացնել նրանց զոհաբերումը՝ վասն հավատո եւ վասն հայրենյաց»։**

Ցանկանալով հնարավորին չափ հեշտացնել զորքերի առաջադրացումը ճակատից թուրքական հրամանատարությունն ուժեղացրեց հայկական զորքերի թիկունքը թուրքաբնակ գյուղերի խռովություններով կազմավորված փորձված զործեկապերը։ Հայկական բախտորոշ հակահարձակման առաջին իսկ օրը նման խռովություն բռնկվեց Դավալու-Ղամարլու հատվածում։ Այդ օրը, երբ անվտանգության նկատառումներով Դավալուի հայկական բնակ-

չությունը գնացքով էվակուացվեց Ղամարլու, նրանցից հետո խուճապով Դավալուից շարժվեց նաեւ էվակուացիան ապահովող Վանի 4-րդ գունդը (Վանի բրիգադ-S. Բաղդասարյան)։ Ճանապարհին գունդը առջեւից եւ հետեւից ենթարկվեց շրջակա թուրքական եւ քրդական գյուղերի հրոսակախմբերի զանգվածային հարձակմանը (5 հազար հրոսակ)։ 5 ժամ տեւած կռիվը հատկապես կատաղի բնույթ ընդունեց Ավշար եւ Շիրազլու գյուղերի մատուցներում, որոնք գրավվեցին հայերի կողմից։ Օրվա վերջում գունդը կենտրոնացավ Յուվա գյուղում։

Մայիսի 22-ի կռվում հատկապես աչքի ընկան խմբապետ Ալանի հեծեկախումբը, Գիծ Սիմոնի հեծյալ վաշտը, Օհանեսի եւ Լեւոնի հեծյալ հարյուրակները, ինչպես նաեւ Փիլոսի եւ Լեւոնի հետեւակային վաշտերը։ Հայկական կողմի կորուստները՝ 37 սպանված եւ վիրավոր, թուրքերինը՝ 100-ից ավել։

Հետագա օրերին, մինչեւ Սարդարապատի ճակատամարտի ավարտը եւ հունիսի սկզբներին Դիլիջանի ճակատ մեկնելը, Յուվա-Ղամարլու շրջանը վերահսկող Վանի 4-րդ գունդը հուսալիորեն պաշտպանեց Երեւանյան գործարմի թիկունքը Շարուրի կողմից, ինչպես նաեւ ձախողեց թուրքական զորքերի Արաքսի գետանցման փորձը։

Հայկական թիկունքում թուրքաբնակ գյուղերի մյուս խոշոր խռովությունը տեղի ունեցավ արդեն Սարդարապատի ճակատամարտի ավարտին մոտ մայիսի 28-ին։ Այդ օրը հայկական խոր թիկունքում գտնվող Ալափարս Գյուղը շրջապատվեց հրետան Նուռնուս, Աշիրաբադ, Ճաթրան, Քաղաշամ, Ուզունլար եւ Թղիղ թուրքաբնակ գյուղերի հրոսակախմբերի կողմից։ Երկօրյա համառ կռիվներից հետո Ալափարսի բնակչությունը եւ գյուղում կուտակված մեծաթիվ արեւմտահայ գաղթականությունը կարողացավ ետ շարտել նենգ թշնամուն եւ փրկվեց։

**23 մայիսի.** Իզդիրի ջոկատը մարտի բռնվեց հակառակորդի հետ Ջաֆարաբադի շրջանում։ Նույն օրը Իզդիրի եւ Սարդարապատի ջոկատները միավորվեցին։ Սարդարապատի ջոկատի (Աջ եւ Չախ խմբեր) դասավորությունը։

ԱՏ ԽՈՒՄԲ՝ տեղակայված Սարդարապատ կայարանի շրջանում-5-րդ հարվածային զնդի 6 վաշտեր, Էջմիածնի պարեկային վաշտ, Երզնկայի գունդ, Խնուսի զնդի կես վաշտ, Ղարաքիլիսայի (Ալաշկերտի) զնդի մեկ վաշտ, Չեյթունի գունդ, հատուկ հեծյալ զնդի մեկ հեծեկաշտ (Եսկադրոն) եւ առաջին մարտկոցի երկու հրանոթ։

Ինքի առաջապահ զորամասերը կանգնած էին Սարդարապատ-Թալիս ճանապարհին եւ երկաթգծի հատման տեղում՝ Սարդարապատ կայարանից 7 վերստ (7,5 կմ) դեպի արեւմուտք, հետախուզություն էր ուղարկվել Արաքս կայարանի եւ Թալիսի կողմը, ուր կանգնած էր կապիտան Պանդուխտի հեծեկազորը։

ՁԱԽ ԽՈՒՄԲ՝ տեղակայված երկաթգծից հարավ՝ Սարդարապատ եւ Մուլա-Բայազեթ գյուղերում, Պարտիզանական գունդ, Հատուկ հեծյալ գունդ եւ երկրորդ մարտկոցի 4 հրանոթ։ Քյարիմախանում կանգնած էր Իզդիրի գունդը։ Սակեղոնի հեծյալ խումբը հսկում էր Ջաֆարաբադի եւ Կարակալայի ծանծաղուտները։ Չախ խմբի առաջավոր զորամասերը զբաղեցնում էին Ղարաբաբադ լեռնից մինչեւ Աջ խմբի առաջապահը՝ երկաթգծի մոտ. հետախուզությունը՝ դեպի հյուսիս-արեւմուտք։

ԸՆԴՅԱՆՈՒՐ ՊԼՅԵՍԱՏՁՈՐ (ռեզերվ). 5-րդ հարվածային զնդի երկու վաշտեր՝ Վերին





# «Անդրանիկի ժամանակը»

ՀԱՏԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻՎ ԵՋՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
■ ԳՐԱՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻՎ ԵՋՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

## Ինչո՞վ բացապրել Անդրանիկի վարմունքը, երբ չորս կողմը կրակ էր եւ արյուն, իսկ նա Դսեղից դուրս չէկալ

Թեեւ Ղարաբաղի լուծարման կռիվները վերջացել էին հայկական ուժերի պարտությամբ, բայց հայերը արել էին անկարելիին՝ թշնամուն կանգնեցնելու համար: Եվ թուրք զավթիչները ապշահար էին՝ ի տես հայ մարդկանց խիզախության եւ անձնագոհության, արիական խոյանքների ու անզուգական հերոսագործության:

Ղարաբաղի լուծարման քաղաքականության հեղինակներից ու հերոսներից Գարեգին Նժդեհը «օրհասական» եւ «սրտի գործ» է համարել այդ ոչուցազնամարտը: Մեկ այլ առիթով նա ասել է, որ հայ զինվորը բնածին օժտված է քաջությամբ, նրան մնում է երկաթյա կարգապահություն, գերազանց կազմակերպվածություն, եւ հաղթանակը մերը կլինի:

Չորս չէ, որ թուրքական բանակի հրամանատար Վեհիբ փաշան ազնվություն ուներ բարձրաձայն ասելու: «Ղարաբաղի մոտ հայերը ցույց տվեցին, որ կարող են լինել լավագույն զինվորներն աշխարհում»:

Հայկական զորքերը ետ քաշվելով, ընդհանուր հրամանատար Թ. Նազարբեկյանի հետ մայիսի 29-ին հասան Դիլիջան:

Իսկ Անդրանիկը իր զորամասով շարունակում էր մնալ Դսեղում: Նա չմասնակցեց չորս կողմ ծավալված կռիվներին: Թե ինչու չմասնակցեց, մինչեւ այժմ այդ հարցին համոզիչ պատասխան չի տրվել: Եղածը միայն տարակուսանք է հարուցում: Ինչո՞վ բացապրել Անդրանիկի վարմունքը, երբ չորս կողմը կրակ էր ու արյուն, իսկ նա Դսեղից դուրս չէկալ, չմասնակցեց կռվին: Շատերն այն կարծիքն են հայտնել, որ եթե նրա զորամասը կռվի մեջ մտներ, ապա շատ բան կփոխվեր հօգուտ հայերի, եւ գուցե թուրքերը զլխովին ջախջախվեին Լոռվա ձորերում:

Ղարաբաղի լուծարման Անդրանիկի չմասնակցելը հայ պատմագրության մեջ տեղիք է տվել տարբեր մեկնաբանությունների: Մի շարք ուսումնասիրություններում եւ հուշագրություններում փորձ է արվում արդարացնել նրա վարմունքը: Այդպես է վարվել նաեւ Հովհաննես Թումանյանը՝ ժամանակին գրած «Անդրանիկը եւ Ղարաբաղի լուծարումը» վերնագրով բացատրագրի մեջ: «Այո, մշել է նա, միանգամայն ճշմարիտ են ասում, որ եթե Անդրանիկը Լոռու կողմից, Դիլիջան օգնության հասներ, պատերազմը, անկասկած, ուրիշ էլք կունենար: Սակայն բոլոր խոսողները մի բան չգիտեն, որ հենց եղպես էլ ծրագրված էր եւ կատարվելու վրա էր, երբ զինվորական բարձր հրամանատարությունից հրահանգ եղավ Անդրանիկին՝ մնալ Դսեղ եւ պաշտպանել երկաթուղու



զիծը: Դսեղից տված տեղեկության հետեւանքով մինչեւ եւ հրամանը փոխվեց՝ արդեն երրորդ օրն էր եւ գրեթե միաժամանակ եկավ Ղարաբաղի լուծարման օրը»:

Անդրանիկի՝ այդ օրերի անընթացի կեցվածքը բացասաբար է գնահատվել զգալի թվով աշխատությունների մեջ եւ ակադեմիկոսների հուշերում: Դա մասնավորապես վերաբերվում է Հ.Յ. Դաշնակցության պատմագրությանը: Ըստ որում, առաջ են քաշված ամենազանազան խոռվիչ ենթադրություններ: Ոմանք նույնիսկ հակված են եղել կարծելու, թե, չմասնակցելով Ղարաբաղի լուծարմանը, Անդրանիկը դրանով իսկ ցանկացել է վրեժ լուծել հայկական կորպուսի հրամանատարությունից, որը երգրումի պաշտպանության օրերին, չնայած իր բազում խնդրանքներին ու պահանջներին, ինչպես պետք է աջակից չի եղել եւ դրանով իսկ նպաստել է իր պարտությանը: Հետագոտողներից ոմանք էլ ընդհանրապես խուսափում են շոշափել այդ հարցը, մի բան, որ չի կարելի ընդունելի համարել, քանի որ այդպես վարվելով, խնդիրը չի դադարում վիճահարույց լինելուց:

Սույն գրքի հեղինակը, չբաժանելով ծայրահեղ կարծիքները, համամիտ է, սակայն, այն տեսակետին, որ բավարար հիմքեր չկան արդարացնելու Անդրանիկի տարօրինակ

վարմունքը, երբ չորս կողմը կրակ էր արյուն էր, իսկ նրա զորամասը քաշվել ու մնացել էր Դսեղում:

Ղարաբաղի լուծարման լուրն առնելով եւ վերլուծելով իրավիճակը՝ Անդրանիկը գործին հրամայեց թողնել Դսեղը եւ նահանջել Դիլիջանի ուղղությամբ:

## Որքան էլ պարզաբանված լինե՞ր Հայաստանից Անդրանիկի հեռանալու փաստը, դժվար է այն ըմբռնել

... Անդրանիկը 1919 թվականի մայիսի 7-ին Բաթումից նավով ճանապարհ ընկավ դեպի Եվրոպա: Նույն օրը՝ մայիսի 7-ին, Կովկասում ֆրանսիական զինվորական միսիայի պետ Փ.Շարտիմեն Թիֆլիսից հետեւյալն է հաղորդում Փարիզ:

«Հայկական հրացանակիրների հատուկ դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Օ.Անդրանիկը գնալու է Կ.Պոլիս եւ Փարիզ:

Գեներալ Անդրանիկը, Կովկասի բոլոր ճակատներում պատերազմելուց հետո, իր ջոկատով Ղարաբաղում ետ է մղել թուրքերին մինչեւ զինադադարի կնքումը եւ մինչեւ վերջ հավատարիմ է մնացել համաձայնականների գործին:

Խնդրում եմ ֆրանսիական զինվորական իշխանություններին եւ դաշնակիցներին՝ նրան ցույց տալ օժանդակություն ու պաշտպանություն»:

Տիրադեմ Ջորավարն ընդմիջտ հեռացավ հայրենի աշխարհից: Հսկա նավի վրա ձեռքերը խաչածեւած կրծքին, նա երկար, երկար նայում էր դեպի արեւելք, դեպի Հայաստան...

Որքան էլ պատճառաբանված լինե՞ր Հայաստանից Անդրանիկի հեռանալու փաստը, դժվար է այն ըմբռնել:

Ումի՞ց էր նեղացած Ջորավարը: Կառավարությունի՞ց: Բայց կառավարությունը ի դեմս նրա թշնամի չէր տեսնում, այլ ցանկանում էր համագործակցել, ցանկանում էր, որ Անդրանիկն իր զինուժով ձուլվի պետական կառույցի մեջ, դառնա կառավարելի: Այդ օրերին դա էր պահանջում պետության շահը:

Այո, Անդրանիկի հեռանալը Հայաստանից, այն էլ ժողովրդի համար այդ ծանր, ճակատագրական օրերին, ցանկալի չէր բնավ: Տասնամյակներ շարունակ նա եղել էր ժողովրդի հոգսերի ու ցավերի հետ, այժմ էլ պիտի մնար բազում թշնամիներով շրջապատված ու վտանգված, բայց վերածննդի հույսերով լի Հայաստանում:

Անդրանիկի այդ քայլը ժամանակին քննադատվել է ինչպես Հայաստանի Հանրապետության կառավարական շրջաններին մոտ կանգնած մամուլի օրգաններում, այնպես էլ արտասահմանի որոշ հայկական, հատկապես Հ.Յ.Դաշնակցությանը պատկանող պարբերականներում: Ավելին, 20-ական թվականների բուլշեփկյան առանձին հրատարակություններում նույնպես Անդրանիկի արտասահման մեկնելը համարվել է սխալ:

Այսպես, բուլշեփկյան գործիչներից պատմաբան Ռ.Խուդադովը 1923 թվականին «Նովի Կոստոկ» պատմագիտական հանդեսում լույս ընծայած «Խորհրդային Ադրբեջան» վերտառությամբ հոդվածում գրել է.

«Հենց անգլիական հրամանատարության պնդմամբ Անդրանիկը ցրեց իր ջոկատները եւ, թողնելով Ձանգեզուրը, որտեղ նա կարողացել էր ամենակրիտիկական պահին հաղթանակներ ձեռնարկել Արեւելյան Կովկասի թուրքական օկուպացիային, հեռացավ արտասահման: Անդրանիկի բացակայությունը շատ ազդեց Հայաստանի դեմ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետագա պայքարի վրա: Կարելի է վստահորեն ասել, որ եթե նա իր ուժերով մնար Ձանգեզուրում կամ Հայաստանի մի ուրիշ վայրում, հազիվ թե Շուշիի գավառի լեռնային մասն անցներ Ադրբեջանին, իսկ Շուշին եթե արկվեր հիմնահատակ կործանման...»:

Այն մարդը, որ շուրջ քառորդ դար եղել էր թուրքահայ ժողովրդի ազատագրական պայքարի աննկուն առաջնորդն ու ոգին, որն իր ողջ գիտակցական կյանքի ընթացքում միայն մի նպատակ, մի իղծ էր ունեցել՝ Հայաստանը տեսնել ազատ ու ինքնիշխան, այժմ, երբ քվում էր, թե սկիզբ է դրվում այդ երազանքի իրականացման, գնում էր, հեռու՝ տարագրություն...

ՀՐԱՇՈՒՄԻ ՍԻՄՈՆՅԱՆ  
ՀՀ ԳԱՍ անդամ

## Սարդարապատի հուշահամալիրը

■ ԳՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻՎ ԵՋՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1968թ. լրանում էր Սարդարապատի հերոսամարտի 50 տարին: Խորհրդային Միությունում մի տեսակ տաբու էր դրված այս կամ այն հանրապետության մղած ազատագրական կռիվները լուսաբանելու, դրանք հիշատակող հուշարձաններ կառուցելու վրա: ... Բայց քիչ չէին նաեւ բարձրաձայն դժգոհողներն ու ճշմարտությունը վեր հանել փորձողները: Լեռնացած ամբոխի փողոց դուրս գալն ու Մեծ եղեռնի փաստն աշխարհի կողմից ճանաչել-պահանջելը 1965-ի ապրիլին, ազգային զարթոնքի նոր սկիզբն էին: Այլն ասանալ էր լռելը: Եվ ահա 1965-ի աշնանը նախաձեռնողների խումբը հավաքվում է այն ժամանակ ԳԿԿ Հոկտեմբերյանի շրջկոմի առաջին քարտուղարի մոտ՝ քննարկելու Սարդարապատի հուշահամալիրի կառուցմանը ձեռնամուխ լինելու հարցը: Քանի որ պետական բյուջեից ֆինանսավորումը բացառվում էր, որոշվում է հանգանակություններ կատարել ժողովրդից: Կարճ ժամանակում լուծվում է գումարի հարցը, ինքնաբերական կառուցված, որի աշխատանքները ղեկավարում էր տաղանդավոր ճարտարապետ Ռ.Իսրայելյանը: Ժամկետները սուղ էին: Սակայն շինարարներն աշխատում էին ոգեւորված: Պատմում են, որ Իսրայելյանն անընդհատ շինարարների կողքին էր, տեղից տեղ էր անցնում, խրախուսում նրանք եւ ոգեւորված կրկնում՝ «Ինչպես 50 տարի առաջ միահամուռ կռվել ենք թշնամու դեմ, այսօր էլ նույն համախմբվածությամբ կառուցում ենք: Նայում ես ու զորություն առնում»:

1968 թվականի մայիսի 25-ին հուշահամալիրը հանդիսավորությամբ ընդունեց առաջին այցելուներին: Հուշահամալիրի մուտքը բացում են թեւավոր ցուլերը՝ ժողովրդի ուժի, համառության եւ հաստատակամության խորհրդանիշերը: 35 մետր բարձրությամբ վեհաճառարան գանգաշտարակը խորհրդանշում է այն օրերին ապրած տագնապը, երբ բոլոր եկեղեցիների զանգերը դողանքելով ի գեմ էին կոչում վտանգված հայրենիքի զավակներին: Ծառուղու երկայնքով տեղադրված քարե արձիվները խորհրդանշում են զոհված քաջերին: Հայրենիքի զինվորը խորխորտակ է: Ծառուղին ավարտվում է հրեղեն քանդակազարդված կորագիծ հուշապատով, որից այն կողմ գնալու անհնարաբար է: Հարթահամալիրի մարմնավորում է հայրենիքի, պայքարի, աշխատանքի եւ վերածննդի թեմաները: Հուշահամալիրի հիմնական գաղափարը հայ ժողովրդի պայքարն է իր գոյատևման համար, թեւավոր ձիերը խորհրդանշում են ժողովրդի հերոսական պայքարը չար ուժերի դեմ:

Հուշահամալիրի օրգանական մասն ու թեմայի շարունակությունը պիտի դառնար թանգարանը...

ՍՄՈՐՏԻՎ ԳՐԱՏՎՈՒԹՅԱՆ  
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ



ՄԱՅԻՍՅԱՆ ՆԵՐՈՍԱՄԱՐՏԵՐ. ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սարդարապատի ճակատամարտի մասնակից գործիչի Լեւոն Ադունցի հուշերը

ՀԱՏՎԱԾ

...Գարուն էր, մարտ ամիսը: Սարդարապատի ճակատամարտի ժամանակ հալվելով՝ հոսում, լցվում էր Արաքսը: Սուրհանդակը մեզ Մակու գրություն հասցրեց: Նամակում գրված էր. «Շտապ: Անմիջապես հրդեհել բոլոր պահեստները, վերադառնալ Օրգով սարի գագաթ»:

Մինչև մի ժամը պիտի նահանջեմք: Պահեստները բաց արա, թող զինվորներն ինչ որ ցանկանում են, վերցնեն, որովհետև պիտի հրդեհենք:

Հրամանի համաձայն՝ վշտացած վազեցի՝ պահեստի բանալիները ձեռքիս: Աչքերիս չէի հավատում. մի՞թե այսպիսի հարստությունը հրո ճարակ պիտի դառնար: Պահեստի դարպասի մոտ կանգնած էր մի քանի հարյուր զինվոր: Դուռը բացելուն պես բոլորը ներս խուժեցին, ով ինչ կամենում էր, վերցնում էր: Քիչ անց հրդեհի ծուխը երկինք հասավ: Նավթը ցանում էին այլուրի, շաքարի, արկղերով բարձր տեսակի երշիկի, հագուստեղենի վրա: Ամեն ինչ, այդ թվում 600 քիթոյա յուղով արկղերն այրվում էին. տեսարանն անկարագրելի էր: Գաղթող ժողովուրդն ուտելու ոչինչ չուներ, սնվելու պահանջն ու կարիքը մեծ էին, իսկ մենք կրակի բերանն էինք տալիս այն ամենը, ինչ մարդու համար էր: Վերջապես թոթափվելով այդ տեսարանի տխուր տպավորությունից՝ պայուսակիս մեջ դրի մի տուփ գալետ (պաքսիմատ), մի քիչ շաքար, երշիկ, վերադարձա՛մ վաշտ՝ ընդունելով իմ դասակը:

Ահա այսպես՝ մեր ժողովրդի քրտինքով ստեղծածը վառեցինք, որ թշնամու ձեռքը չընկնի: Քիչ հետո հնչեց փողը, գունդը պատրաստվեց շարժվելու: Սոֆուլուում թողեցինք միլիոնավոր ռուբլու չկառած հարստություն:

Այդ օրը եւ գիշերը շարժվելուց հետո հասանք Մասիս սարի հակառակ կողմում գտնվող գյուղը՝ Արծափ: Այն մեծ գյուղ էր դարձել, քանի որ տարբեր կողմերից գաղթած հայերը հավաքվել էին այդտեղ: Երդիկներից ծուխ էր բարձրանում: Առավոտ էր, կանայք նախաճաշ էին պատրաստում, աղջիկները՝ գետից ջուր կրում: Մեր զնդապետը կանչեց գյուղի տարեց մի քանի մարդու, պատմեց ստեղծված վիճակի մասին, քննարկեցին հետագա դրությունը: Հայտնեց, որ սա վերջին գործն է, որ նահանջում է: Կես ժամ անց գյուղում աղմուկ-աղաղակ բարձրացավ: Բառերով դժվար է նկարագրել տեսարանը: Նաեւ դժվար էր տեսնել ու զգալ, թե ինչպես սկսվեց գաղթը: Որը ծի էր բարձել, որը՝ եզ, որն էլ, որքան որ անսովոր էր, կովը, որի վրա բարձած բեռն ընկել էր փորի տակ:

Գնում էին, թե ուր, չգիտեին, միայն իրենց ու երեխաների կյանքը փրկելու: Գնում էին մայրեր՝ մի երեխայի ձեռքից բռնած, մյուսը՝ շալակն առած: Գնում էին լացով եւ հայիոյելով: Գնում էին դեպի ուրապատույտ Օրգով սարի գագաթը: Ես ա՛յն էի քաշում այս աշխարհում խեղճ, տնամկ, անբախտ կանյի վիճակի համար: Կանաց-կանաց դադարեց ծուխ բարձրանալ տների երդիկներից: Եվ դա բոլորը



չէր: Դաշտերում մնացին ոչխարներ, գոմեշներ, տկար կովեր: Վերջապես հետախույզ ուղարկեցին գյուղ՝ պարզելու՝ բոլորը գաղթեցին: Մի կողմից եկեղեցու մեջ գտան բարուրի մեջ լացող երկու երեխա եւ չափազանց ծեր այր ու կին, որոնք ի վիճակի չէին առաջ շարժվել: Ընեք ջրու կողմից ոռոնում էին, տեսարանը շատ տխուր էր մեզ համար: Այսպիսով՝ գաղթող ժողովրդի հետեւից գործն առաջ էր շարժվում: Անցնելով առաջ՝ տեսնում էինք ճանապարհի երկու կողմում անտեր թողնված եզներ, թափփված բեռներ:

Մութը վրա հասավ: Գաղթի քարավանի սկիզբը հասավ Օրգով՝ սարի գագաթը: Փորձեցին գիշերել այդտեղ՝ արձակելով անասուններին, նրանց ազատելով բեռից: Հայկական գունդը, պահակակետեր կարգելով, նույնպես մնաց այդտեղ՝ գիշերելու: Դեռես չտեսավորված՝ դիմացի սարից սկսեցին կրակել թե՛ գաղթականների, թե՛ գործի վրա: Սարսափից գաղթող ժողովուրդը խուճապի մատնվեց՝ թողնելով այն բոլորը, ինչ հետները բերել էին, գիշերով փախան դեպի Իգդիր՝ երեխաների ձեռքերը բռնած:

Հինգերորդ գունդը սկսեց պաշտպանվել. թշնամին այդ գիշեր անվերջ կրակում էր: Իսկ լույսը նոր բացված՝ հարձակման անցավ: Կռիվը սուր կերպարանք ստացավ, քանի որ հակառակորդը փորձում էր մեր գունդն օղակի մեջ առնել: Բայց հայկական գունդը մեծ ջանքերի գնով դիմադրեց, ի վերջո հետ նահանջեցինք ռուսաց սահմանը: Մեզ օգնության էր եկել փոխգնդապետ Չախմախյանը՝ 180 զինվորի հետ: Կռիվը Օրգովի սարավանջին տեսեց երկու օր: Փոխգնդապետն ընկավ, զոհվեցին թե՛ մեր, թե՛ հակառակորդի կողմից շատ զինվորներ եւ ասկարներ: Թշնամու ուժը գերազան-

ցում էր մեզ, ուստի նահանջեցինք Իգդիր, այնուհետեւ՝ Սուրմալուի գավառը: Այդտեղ գաղթեց նաեւ Իգդիր քաղաքի ժողովուրդը: Մի կողմից օսմանյան զորքերն էին առաջանում, մյուս կողմից՝ Արարատյան քրդերը հարձակվում էին քաղաքի համար: Անսպասելիորեն նստրացած հիմադրող գունդը նահանջեց Արաքս գետի ձախ ափը՝ Սարգարա գյուղ:

1918 թվականի մարտի 25-ին Օսմանյան զորքերը գրավում են Ղարսը: Այնուհետեւ մտնում են Արփաչային, պատրաստվում հարձակվելու Ալեքսանդրապոլի վրա:

...Ապրիլ ամսվա կեսին Ալեքսանդրապոլի (Լեւոնական) անկումից հետո օսմանցիները բռնել էին Ջաջուռի լեռնանցքը, շարժվում էին դեպի Համանլու (Սպիտակ), Արարախիս (Կիրովական): Պողոս Փիրումյանին փոխարինեց Մելիք-Շահնազարյանը, 5-րդ մահապարտ գունդը առաջ շարժվեց դեպի Արաքսի կայարան: Մեր գնդի նշանառու զինվորներից մեկի հետ, որ նուխեցի էր, եւ նման էր աղբեջանցու, առանց գեներալի հեռացանք կայարանից՝ Ալազյազ սարի փեշերում գտնվող հալոցքից գոյացած լճակում լվանալու մեր ոտքերն ու փաթաթանները: Նկատեցինք ձորափից դեպի մեզ իջնող մի ծիավորի՝ ուսին հրացան, մաուզերը՝ գոտկատեղից կախ: Հարցրեց մեր ով լինելը: Ընկերս պատասխանեց, թե ինքը աղբեջանցի է, իր կողքինը՝ այսինքն՝ ես, լեզգի:

– Ո՛ր եք գնում, – հարցրեց: – Ուզում եմ անցնել Ալեքսանդրապոլ: Չիավորը, իմանալով մեր ով լինելը, իջավ ձիուց, նստեց գետնին՝ հրացանը տեղավորելով ոտքերի արանքում: Նրա ձախ կողմում ընկերս էր, քիչ հեռու՝ ես: Չիավորը

պատմեց իր կատարած սուրհանդակության մասին, ասելով, որ ինքը երեւանցի է, տեղի է ունեցել մուսուլմանական ժողով, որտեղ հանձնարարել են իրեն նամակ հասցնել օսմանյան հրամանատարին, որ շտապեմ երեւանը գրավել, իսկ եթե էջմիածինը վերցնեն, իրենք անմիջապես ներսից կապտամբեն:

Ուշադիր լսում էինք սուրհանդակ լրտեսի խոսքերը եւ լցվում վրեժխնդրությամբ: Լրտեսը գրպանից հանեց ծխախոտի տուփը, մեկը երկարացրեց ինձ, մյուսը՝ ընկերոջս: Վերցրի, թեպետ չէի ծխում: Մի ծխախոտ էլ դրեց իր շուրթերի արանքում եւ լուցկին հանեց վառելու: Չիու սանձի ծայրը, որ մատների արանքում էր, դուրս թռավ: Լրտեսը թեքվեց՝ սանձի ծայրը վերցնելու: Հենց այդ պահին ընկերս, կայծակի արագությամբ թռչելով, հափշտակեց նրա հրացանը եւ երկու քայլի հեռավորությամբ դեմ առնելով լրտեսի կրծքին՝ զոռաց:

– Չեռքերդ վեր: Ինձ այլ բան չէր մնում, քան մինչեւ վերջ զինաթափել սուրհանդակին՝ նրա գոտուց հանելով մաուզերը եւ կախելով իմ գոտուց: Այսպիսով՝ լրտես սուրհանդակին մեր առջեւ գցած՝ ոտաբոքիկ հասցրեցինք կայարան՝ շտաբին հանձնելով, մաուզերը եւ ձիւն:

...Մի քանի օր հետո գունդը վերադարձավ Սարդարապատի կայարան՝ տափաստանի նման մի վայր, որտեղ ջուր չկար, բացի կայարանի մի ամբարից: Կայարան կոչվածը մի քանի սենյակ էր եւ մի քանի ծառ՝ ջրամբարի մոտ: Մայիսի 22-ի առավոտյան մեր գնդի մոտ պայթեց մի թնդանոթային արկ, երկրորդը պայթեց կայարանի սենյակի պատին, եւ այսպես զորոնակվեց:

Հնչեց գնդի փողը, պատրաստվեցինք առաջ անցնել: Անցանք առաջ՝ չոր տափաստանով փոսեր փորելով դեպի Ալազյազի փեշերը, որտեղ բլրաների վրա թշնամին ամրացրել էր իր ուժերը: Մահապարտ գունդը դիմադրեց մինչեւ մութն ընկնելը, իսկ թշնամին, տեսնելով մեր դիմադրությունը, առաջ չանցավ: Թշնամու թնդանոթները տեղադրված էին բարձունքների վրա: Մութն ընկնելուց հետո հրաման եղավ գնդի երրորդ եւ չորրորդ վաշտերին շրջանցել թշնամու թիկունքը, հրամանատար լռեցի շտաբսկապիտան Վարդան Ջաղինյանի կարգադրության ներքո: Այդ երեկո Վարդան Ջաղինյանի տրամադրությունը բարձր էր: Երկու վաշտը, բավականին ճանապարհ կտրելով, անցավ թշնամու թիկունքը:

Երրորդ վաշտի դիրքը քիչ ապահով էր, չորրորդ վաշտը մի տափարակ տեղում շղթա էր կազմել: Թշնամին արշալույսին նկատեց, որ անցել ենք իր թիկունքը եւ ողջ ուշադրությունը բեւեռեց մեր երկու վաշտի վրա՝ գործի դնելով գերմանական գնդացիներ, իսկ թնդանոթների արկերն ուղիղ թափվում էին մեր զինքին:

Կռիվը թե՛ժանում էր: Մեր մյուս վաշտերը թնդանոթներով հարվածներ էին հասցնում թշնամուն: Օսմանցիները, նկատելով այդ, իրենց ուժերն ավելացնում էին: Տեսարանը սարսափելի էր: Հրամանատար, շտաբսկապիտան Վարդան Ջաղինյանը, որ պատկած էր ինձ մոտ, ճակատամարտի թե՛ժ պահին ցանկացավ գործի հրաման տալ, բայց տեսնելով չորրորդ վաշտի բոլորովին նստրանալը՝ հետ կանգնեց իր

մտադրությունից: Հանեց ատրճանակը, հայիոյեց եւ կրակեց մի քանի անգամ: Ասացի՛ պարոն կապիտան, մի՛ ջղայնացեք: Այդ պահին երկու գնդացրային մահաբեր գնդակ դիպավ Վարդան Ջաղինյանի կրծքին: Նրա վերջին խոսքն էր. «Ես մեռնում եմ, դուք կհաղթեք»:

Այդ մարտում զոհվեցին սպա Սուրեն Սարգսյանը, դասակի հրամանատարներ: Մյուս զինվորները թեքվում էին երրորդ վաշտի կողմը: Վաշտապետ Ստյոպա Խաչատրյանը երկու տեղից վիրավորվել էր եւ ընկած էր արյան մեջ: Մեր թիկունքում ուժ չկար, իսկ թշնամին իր ողջ ուժով, արկերով հալածում էր մեր վաշտերին: Ես կատարել էի՝ ընկերներիս դիակները տեսնելով: Գնդակները ծակոտել էին զխարկս, շինելիս ծալքը, չալվարս:

Մայիս ամիսն էր, սաստիկ շոգ, ասես վառվում էր Սարդարապատի չոր տափաստանը: Այդ ահեղ ճակատամարտում շատ զինվորներ, սպաներ ընկան: Ծանր վերքեր ստացան շատերը: Շալակելով վաշտապետ Ստյոպա Խաչատրյանին՝ կրակների միջով 250-300 քայլ անելով, տեղափոխեցի սանիտարական սայլի մոտ: Այդ օրը հաջողությունը երես էր թեքել մեզանից: Մութն ընկնելուց հետո կրակոցները դադարեցին: Մեր ճակատի երկարությամբ ավելացան նոր ուժեր, թնդանոթներ, գնդացիներ:

Մայիս ամսվա 24-ին՝ լուսաբացին, օսմանցիների վրա որոտացին հայերի թնդանոթների համազարկերը: Ռազմաճակատի երկարությամբ Դանիել Բեկ-Փիրումյանի հրամանով գործերն առաջ անցան: Հակառակորդն ուժեր էր կուտակում, բայց մեր կատարի հարձակմանը չդիմանալով՝ սկսեց նահանջել:

Մարտը կատարի էր եւ ուրախալի: Թշնամին այդ մարտում թողեց հազարավոր սպանվածներ, վիրավորներ: Եզդի Ջահնգիր աղան իր 200 ձիավորով Ալազյազի փեշերով վրա հասավ եւ իր հունձը սկսեց՝ հալածելով նահանջող թշնամուն, հինգերորդ մահապարտ գունդը կրկնակուխ հետնում էր եւ սրի քաշում նահանջող թշնամուն: Հասանք Թալին՝ Մաստարա:

Մայիսի 29-ին մեր գունդը վերադարձավ Սարդարապատի մոտ գտնվող Ջեյլա գյուղը: Մի քանի օր հետո այդտեղ եկան գեներալ Սիլվիոյե, Դանիել-Բեկ Փիրումյանը: Հինգերորդ գնդին պարգևատրեցին խաչերով ու մեդալներով, ես էլ ստացա Գեորգիեյանի երկրորդ աստիճանի ոսկե խաչ:

Սարդարապատի ճակատամարտից հետո դիմեցի մեր գնդապետին, որ կարճ ժամանակով թույլ տա՛մ եկնել հայրենիք: Դիմումս հարգվեց: Հրաման-գործուղմամբ երկու հոգու հետ թույլատրեցին Ջանգեզուր գնալ: Երեւանի շուկայից ձեռք գնեցինք եւ Սուխոյ ֆանտանով հասանք Վերին-Ղարալու: Այդտեղ էր հավաքված մոտավորապես 120 ձիավոր, խմբապետին «Լիազոր» էին անվանում: Հաջորդ առավոտյան պատրաստվում էինք ճանապարհվելու: Չնայած փաստաթուղթ ունենալուն՝ խմբապետը կանչեց ու զինաթափ արեց, ասելով, թե պիտի մնանք իրենց հետ: Երկու օր մնացինք, ուղեկցող գտանք եւ սարերով հասանք Քարազլուխ: Ահա այսպես մենք հասանք Գորիս: Ուրախացան ծեր մայրս, քույրս, եղբայրներս...











ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ. «Մայիսյան հերոսամարտերին եւ առաջին հանրապետությանն արժանի աշխատություններ փակավին չեն ստեղծվել»

«Պարոն Վիրաբյան, Սարդարապատի ճակատամարտը եւ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրումը հայ ազգի համար ուղենշային իրադարձություններ են: Այդ անցքերի վերաբերյալ արխիվային ինչպիսի՞ նյութեր են ժողովել ազգային արխիվում:

– Բնականաբար, չենք խոսի Սարդարապատի հաղթանակի, ճակատամարտի մանրամասների մասին, քաջերի եւ հերոսների մասին, դրանք կարելի է գտնել գրականության, պատմագրության մեջ: Պատերազմական այն օրերին փաստաթղթեր ստեղծելն անհնարին էր, շատ քիչ հրամաններ են պահպանվել: Ի՞նչ տեղի ունեցավ հետագայում: Ստեղծվեց համընթաց ժողով, որը սկսեց փաստաթղթեր հավաքել ճակատամարտի մասին, իսկ դա արվում էր Սարդարապատի մասնակիցներին հանձնարարություններ տալով, որ նրանք գրառեն իրենց հուշերը, որոնք, բարեբախտաբար, մինչեւ այսօր պահպանվել են: Իհարկե, կան տարընթերցումներ, մեկն ինչ-ինչ հանգամանքներ ներկայացրել է այլ ձևով, բայց հիմնականը պահպանվել է, հասել է մեր օրերը: Սակայն կոմունիստական գաղափարախոսությունն այդ ամենի վրա իր դրոշմը դրել է: Ծակատամարտի մասին հուշեր առաջին անգամ Հարություն Թուրքյանն է հրատարակել իր «Սարդարապատի ճակատամարտը» գրքում, բայց որոշ վերապահումներով, քանզի նա չէր կարող ներկայացնել, որ մայիսյան հերոսամարտերի հիմնական հարվածային ուժը հայկական կանոնավոր բանակն էր, եւ շեշտը դնում էր աշխարհագրի վրա: Բայց որ ճակատամարտի կազմակերպիչների մեջ դաշնակցականներ էին՝ Արամ Մանուկյանը, Գրաստամատ Կանայանը (Գրո), այդ մասին չէր նշվում: Եվ ոչ միայն նրանց: Սարդիկ կային, ովքեր ճակատամարտի հաջող էլքի խնդրում մեծ գործ էին արել, բայց նրանց անունները հանիրավի չէին հիշատակվում: Բայց, բարեբախտաբար, նրանց մասին փաստաթղթերը, որոնք կազմվել են 1918-19 թթ., պահպանվել են, եւ այսօր մենք կարող ենք մանրամասն ներկայացնել ճակատամարտի ընթացքն ու օրագրությունը: Բացի դրանից՝ Հակոբ Կոչոյանին հանձնարարվեց ստեղծել ճակատամարտի քարտեզը, դժբախտաբար, նրա զծած քարտեզներից մեկն է պահպանվել, մյուս երկուսը լուսանկարների տեսքով են: Մի խոսքով, ճակատամարտի մասին ահագին նյութ կա:

Մեզ մտահոգում է նաեւ հարցը, թե ինչ կա թուրքական արխիվներում՝ խնդրո առարկային առնչվող: Տակավին թուրքական արխիվների մասին շատ բան չգիտենք, թեպետ արխիվային վարչության մասին ղեկավար Աշոտ Հարությունյանն ասում էր, որ ինքը որոշ նյութեր թարգմանել է տվել թուրքական աղբյուրներից, բայց այդ գործն ավելի հիմնավոր պիտի անենք: Կիրորենք իմանալ, թե ինչ գրականություն է լույս տեսել Սարդարապատի մասին, թարգմանել տալ եւ ներկայացնել հասարակայնությանը եւ նաեւ օգտագործել մեր աշխատություններում:

– Շատ բարի, իսկ ի՞նչ են պատ-

Վահրամ Օրբելյանի հարցազրույցը Հայաստանի ազգային արխիվի պնօրեն, պատմական գիտությունների դոկտոր ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆԻ հետ



մում արխիվային փաստաթղթերն առաջին հանրապետության մասին:

– Բարեբախտաբար, առաջին հանրապետության նախարարությունների մեծ մասի փաստաթղթերը պահպանվել են: Կիսով չափ է պահպանված ռազմական նախարարության արխիվը, ավելի ստույգ՝ բացակայում է: Գուցե 1921 թվականին փրկության կոմիտեն, երբ նահանջեց, Հայաստանից իր հետ տարավ փաստաթղթերի մի մասը: Դրանք, հավանական է, գտնվում են Բոստոնի Հայ եղբայրության դաշնակցության արխիվում: Քանի որ այդտեղի արխիվը մինչեւ վերջ կարգավորված չէ, հնարավոր է այդտեղ որոշ փաստաթղթեր հայտնաբերվեն: Որ Հայաստանի այն ժամանակվա դաշնակցական ղեկավարներն արխիվները դուրս են տարել Հայաստանից, անհերքելի փաստ է: Քանզի 1920-30-ական թվականներին «Հայրենիք», «Վեմ» ամսագրերում պառլամենտի արձանագրություններ են տպագրվել, որոնք Քաջազունին, Վրացյանը, այլ իրենց ձեռքի տակ եղածն են: Այժմ ազգային արխիվում պատրաստվում է 1918-20 թվականների պառլամենտի արձանագրությունների ժողովածու, որի նյութերի մի մասը վերցված է վերը նշած ամսագրերից, մի մասը՝ թերթերի հրատարակումներից, մի քանի արձանագրություններ էլ, ինչպես արդեն նշեցի, մեր ձեռքի տակ եղածն են: Իսկ այն ժամանակվա կառավարության արձանագրությունները, բացառությամբ մի քանիսի, եւ սեւագիր, եւ մեքենագիր տարբերակներով պահպանվել են: Դրանք ամփոփվում են երկու ժողովածուի մեջ, այս պահին խմբագրման աշխատանքներ են իրականացվում: 1918 թվականի հուլիսի 17-ին Հայաստանի կառավարությունը թիֆլիսից դուրս եկավ 18-20-ին, հասավ Երեւան, օգոստոսի 1-ին տեղի ունեցավ պառլամենտի առաջին նիստը, այս ամենը մինչեւ կառավարության վերջին արձանագրությունը, որ թվագրված է՝ 1920 թվականի դեկտեմբերի 2, մեր ձեռքի տակ կա եւ հրատարակվելու է: Դեկտեմբերի 2-ին դեռեւս հին կառավարությունը նիստեր է արել, վարչապետ Սիմոն Վրացյանը որոշումներ է ստորագրել:

– Խորհրդային տարիներին ընդունված չէր բարձրաձայնել

Սարդարապատի եւ առաջին հանրապետության մասին: Այսօր հետաքրքրություն կա՞ այդ թեմաների հանդեպ: Արխիվից օգտվո՞ւմ են, թե՞ ոչ այնքան...

– Իրոք, խորհրդային տարիներին այդ թեմաների հանդեպ չի եղել հետաքրքրություն. Թուրքիայի հետ հարաբերությունների խնդիր կար: Ոչ միայն Սարդարապատի ճակատամարտի, այլեւ ցեղասպանության մասին էին լռում: Վերջին անգամ արխիվի 24-ը նշվել է 1920 թվականին Վրթսանե Փափազյանի առաջարկությամբ, եւ այդ օրը եկեղեցիներում զանգերը հնչում էին: Բայց 1926 թվականին Հայաստանի կոմկուսը որոշում է ընդունել դիմել Ամենայն հայոց կաթողիկոսին, որ այդ օրն այլեւս զանգեր չհնչեն: Ամեն ինչ արվում էր հայոց Մեծ եղեռնը մոռացության մատնելու համար, իսկ Սարդարապատի մասին ոչ մի խոսակցություն չէր կարող լինել, թեպետ 1920-ական թվականներին թիֆլիսում բնակվող գեներալ Նազարբեկյանը գրել է հուշեր, որոնք շարադրելիս՝ նամակով դիմել է ճակատամարտի մի քանի մասնակիցների, որպեսզի վերջիններս իրեն տեղեկություններ հաղորդեն այն անցքերի մասին, որոնց ինքը քաջատեղյակ չէր: Բարեբախտաբար, արտասահմանում գրվել են գրքեր Սարդարապատի մասին, գեներալ Դուրդանյանը, Բագրատունի Փարիզի վեհաժողովին մասնակցելու ժամանակ իրենց հետ փաստաթղթեր էին տարել, որոնք հրատարակել են այնտեղ, ճակատամարտի որոշ մասնակիցներն էլ հանդես են եկել հուշագրությամբ: Սակայն 1964-65 թվականներին, խրուշչովյան ճնշակի տարիներին, բնականաբար, պատկերը փոխվեց. Սարդարապատի մասին սկսեցին գրել, բայց մոտեցումն այլ էր, ճակատամարտում ձեռք բերված հաղթանակը, ինչպես արդեն նշեցի, վերագրում էին մասնակիցներին, բայց իրականում հաղթանակը, նախեւառաջ, կանոնավոր բանակն էր տարել:

– Կարծում եմ՝ այս վերջին միտքը կարելի է ամրապնդել՝ խոսելով հայոց կանոնավոր բանակի հրամանատարների մասին: Ծննդաբանություն է նաեւ այն, որ պատմագրության մեջ ճակատամարտը ղեկավարած զինվորականների մասին իրարաներժ կարծիքներ կան:

– Ինչպես արդեն նշեցի, առաջին հանրապետության ռազմական արխիվը չի պահպանվել, եւ գորահրամանատարներին ներկայացնելիս՝ որոշակի դժվարություններ կան: Պատմագիրներից ոմանք, օրինակ, Հարություն Թուրքյանը, որը հայ իրականության մեջ առաջինն է անդրադարձել Սարդարապատի ճակատամարտին, ապաշնորհ է անվանել Սիլիկյանին իր «Սարդարապատի ճակատամարտը» գրքում: Բայց Հովհաննես Բաղրամյանը հուշերի գրքում, որը ռուսերենով լույս է տեսել Հայաստանում, շատ հանգամանորեն գրում է Սարդարապատի ճակատամարտի մասին, ներկայացնում Նազարբեկյանի, Սիլիկյանի բնութագրերը: Ասելով, որ Սիլիկյանն ազգությամբ ուղի էր, բայց ծնված ու մեծացած լինելով հայկական միջավայրում եւ լինելով հայ առաքելական եկեղեցու հետերորդ, հայ ազգի համար անգնահատելի գործ է արել: Երբ ռազմադաշտում անորոշ վիճակ էր, Սիլիկյանը մայիսի 22-ին ոչ թե պասիվ-պաշտպանողական դիրք գրավեց, այլ անցավ հակահարձակման: Միայն մեծ տաղանդ ու նույնքան մեծ համարձակություն պիտի ունենար գորահրամանատարը, որ այդպիսի վճռական հրաման արձակեր: Եվ այդ քայլը շնորհ թուրքերին: Մայիսի 21-ին թուրքերը գրավեցին Սարդարապատ կայարանը եւ գյուղը, հաջորդ օրն իսկ հայկական բանակն անցավ հակահարձակման եւ Սարդարապատը հետ նվաճեց: Նույն տեսակետը կար Նազարբեկյանի մասին, թե իբր նա ապաշնորհ է, վկայակոչում էին Ալեքսանդրապոլի հանկարծակի անկումը: Նոր իրադրության պայմաններում միշտ չէր, որ հայ գորահրամանատարները կարողանում էին կողմնորոշվել: Նրան քննադատում էին, մասնավորապես, այն բանի համար, թե երբ մայիսի 28-29-ին պատրաստվում էին հարձակվել Ալեքսանդրապոլի վրա, կամ Ալեքսանդրապոլը թողնելով, ցանկանում էր հարձակվել Կարսի վրա, որը գրավելով՝ թուրքական զորքերն արդեն շրջափակման մեջ կընկնեին, արգելեց ռազմական այդ գործողությունների իրականացումը: Բայց չէ՞ որ Նազարբեկյանը կատարում էր հայոց ազգային խորհրդի՝ Թիֆլիսից ստացված հրահանգը՝ դարձրեցնել մարտական գործողությունները, որովհետեւ նախատեսվում էր Բաթումի պայմանագրի կնքումը: Այս ամենը ժամանակների հեռավորությունից դիտարկելը եւ քննադատելը դյուրին է, բայց գիտե՞ք, որ Արամ Մանուկյանը մի առիթով խոստովանել է, թե եթե մի օր էլ մարտական գործողությունները շարունակվեին, փամփուշտը չէր բավականացնի: Բայց ինչպիսի՞ն էր 1918-ի Հայաստանի վիճակը. երկիրը լեցուն էր զաղթականներով, բանակը պատրաստ էր կռվելու, նաեւ դասալքության դեպքեր կային, սովը գլուխ էր բարձրացնում եւ այլն, եւ այլն: Այս սոցիալ-տնտեսական վիճակն էլ պիտի հաշվի առնել՝ զնահատելու համար 1918 թվականների իրադրություններն ու մարդկանց:

– Ի՞նչ խոշոր սխալներ եղան 1918-20-ական թվականներին:

– Արտաքին քաղաքականության մոլորումն լուրջ սխալներ թույլ տրվեցին այն առումով, որ հույսը դրվեց Եվրոպայի վրա, թե իբր վերջինս պիտի լուծեր հայկական հարցը: 1919 թվականին, երբ Հայաստանն ուժեղ էր, Թուրքիան պարտված էր, թուրքերն առաջարկեցին նստել բանակցությունների սեղանի շուրջ, եւ հնարավոր է, որ որոշ հարցեր լուծվում ստանային: Մերոնք հույս ունեին, որ Եվրոպան է լուծելու մեր հարցերը: Թուրքերը

նաեւ դիվանագետների միջոցով, որոնք լինում էին Թուրքիայում, հաղորդում էին, որ պատրաստ են բանակցություններ սկսելու, բայց մերոնք սին հույսեր էին կապում Եվրոպական դիվանագիտության հետ: Ավետիս Ահարոնյանը հանդիպումներ է ունեցել Անգլիայի, Ֆրանսիայի ղեկավարության հետ: Ծննդաբանության ասած՝ հայկական կողմն էլ մեղավոր չէր, Եվրոպացի դիվանագետները հայկական հարցը լուծելու խոստումներ էին տալիս, որոնք, ի վերջո, դրժեցին:

– Հայ պատմագրությունն ինչպե՞ս է անդրադարձել այդ երկու առանցքային իրադարձություններին (Սարդարապատ եւ առաջին հանրապետության հիմնադրում):

– Եթե անկեղծ լինեմք, մինչեւ 1990 թվականը, բնականաբար, չէր խրախուսվում առաջին հանրապետության մասին գրելը, դրանից հետո պատմաբանները (եւ ոչ միայն) անդրադարձան այդ կարեւոր իրադարձությանը, թեկնածուական եւ դոկտորական թեզեր պաշտպանվեցին: Ամերիկահայ պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանի չորս հատորով ուսումնասիրությունը նվիրված է առաջին հանրապետությանը. բայց նրա մոտեցումը չեն ընդունում: Հայ պատմագրությունը մեծածավալ աշխատանք է կատարել, բայց տակավին շատ բան ունենք անելու: Առաջին հանրապետության մասին պատմագիտական աշխատանք դեռեւս չի ստեղծվել: Հուսում եմ՝ ստեղծվելու է, նույնը եւ Սարդարապատի մասին:

– Ինչպիսի՞ համագործակցություն կա Հայաստանի ազգային արխիվի Սարդարապատի հուշահամալիրի քանդակարմի միջեւ: Նյութերի ո՞ր մասն է այստեղ պահվում եւ ո՞ր մասն՝ այնտեղ:

– Պիտի ասեմ, որ Սարդարապատի թանգարանում մայիսյան հերոսամարտերին նվիրված քիչ նյութ կա: Եվ եղածներն էլ, 1960-ական թվականներին այստեղից են տարվել, ավելի ստույգ՝ պաշտոնական նյութը, որ կա Սարդարապատում, ազգային արխիվի փաստաթղթերի պատճեններն է: Բայց այնտեղ կան նյութեր, որոնք գրվել են ճակատամարտի մասնակիցների կողմից, նաեւ նրանց լուսանկարները կան՝ արված 1960-ական թվականներին: Մենք հիմա պատրաստվում ենք համատեղ ցուցահանդես կազմակերպել մայիսի 1,2-ին: Դա լինելու է փաստաթղթերի, լուսանկարների, քարտեզների ցուցադրություն Հայաստանի ազգային արխիվում, այժմուհետեւ այդ ամենը տեղափոխվելու եւ ցուցադրվելու է Սարդարապատի հուշահամալիրում: Ահա այսպես համատեղ որոշել ենք Սարդարապատի 90-ամյակը հավուր պատշաճի նշել:

– Պարոն Վիրաբյան, որպես ամփոփում մեր զրույցին, ի՞նչ կավելացնե՞ք:

– Մեր զրույցում չխոսվեց այն մասին, որ պատմությունը միշտ կրկնվում է, մի դեպքում՝ որպես ողբերգություն, մի այլ դեպքում՝ որպես ֆարս: Այ, երբ Երեւանում 1918 թվականին միասնություն կար, սոցիալ-դեմոկրատները, բուլշեիկները զենքը ձեռքն առան, մեկնեցին ռազմաճակատ, իրականություն դարձավ հաղթանակը, նույնը հնարավոր դարձավ 1988 թվականին, 1990-ական թվականների սկզբին, երբ դարձյալ միասնական էինք: Իսկ երբ միասնական չենք, մեզ դյուրին է կոտորելը: 1920 թվականին միասնական չէինք եւ տարածքներ կորցրեցինք: Միասնության խնդիրն այժմեական է նաեւ այսօր, անհրաժեշտ է միասնություն եւ հավատ:



# ՆԱՅԱՅՔ 90 ՏԱՐՎԱ ՆՇՈՒՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ

## 1918թ. մայիսյան հերոսամարտերում հաղթանակի եւ Հայաստանի Հանրապետության հռչակման պատմական խորհուրդը

### ԱՆՈՏ ՄԵԼՆՈՆՅԱՆ

պ.գ.դ., ՀՀ ՊԱՍ պատմության ինստիտուտի տնօրեն



1918թ. հունվարին, օգտվելով ռազմաճակատի կազմալուծումից, թուրքական զորքերը Վեիիբ փաշայի հրամանատարությամբ խախտեցին Երզնկայի զինադաշտը եւ անցան հակահարձակման: Ռուսական զորքը, Արեւմտյան Հայաստանում թողնելով ահռելի քանակությամբ զինամթերք, արագորեն սկսեց հեռանալ: Մեծ զոհերի գնով գրաված հսկայածավալ Արեւմտյան Հայաստանում թուրքերի դեմ մեն-մենակ հայտնվեցին հայ կամավորները: Վերջիններս տեղ-տեղ փորձեցին դիմադրություն կազմակերպել Երզնկայում՝ Սեբաստացի Սուրադը, Բաբերդում՝ Սեպուհը, Քիլիսում՝ Թուրքիայում: 1918թ. հունվարին Կովկասյան բանակի հրամանատարությունը Անդրանիկին շնորհեց զենքերալի կոչում եւ նշանակեց ռազմաճակատի հրամանատար:

Անդրանիկը ժամանեց Ալեքսանդրապոլ, որտեղ ապարդյուն անցան կամավորներ հավաքագրելու նրա փորձերը: Ապա նա անցավ Կարս, փետրվարի 10-ին ժամանեց Երզնկա՝ փորձելով այն դարձնել ուժեղ ամրոց: Արյունալի մարտեր մղելով բազմաթիվ զոհերի կորուցումից հետո՝ Սուրադը Երզնկայից նահանջեց Դերջան, ապա՝ Էրզրում: Անարդյունք եղան նաեւ Քիլիսում թուրքերին եւ քրդերին կանգնեցնելու Թուրքիայի ջանքերը:

Հայերի ռազմական անհաջողությունները պայմանավորված էին նաեւ միջազգային անբարենպաստ իրադրությամբ: Թուրքերի ճնշման տակ Անդրկովկասի վրաց եւ ադրբեջանական քաղաքական ուժերը երկրամասը Ռուսաստանից անջատելու նոր քայլ կատարեցին: 1918թ. փետրվարի 10-ին Թիֆլիսում գումարվեց Անդրկովկասյան սեյմը, ուր ներկայացված էին 32 մենջելիկ, 30 մուսավաթական, 27 դաշնակցական եւ տասնյակ այլ կուսակցությունների ներկայացուցիչներ: Սեյմը նախագահ ընտրվեց Չխեիձե: Սեյմը դարձավ Անդրկովկասի դաշնային հանրապետության իշխանության նոր մարմին՝ փոխարինելով կոմիսարիատին: Հայ դաշնակցականները Հովհ. Քաջազունին, Ալ. Խատիսյանը, Խ. Կարճիկյանը եւ ուրիշներ, դեմ լինելով Ռուսաստանից անջատվելուն, մտան սեյմի մեջ՝ թուրքերի դեմ միայնակ չմնալու համար: Մինչդեռ թուրքերը շարունակում էին անարգել առաջանալ: Նրանք փետրվարին գրավեցին Դերջանն ու Բաբերդը, մարտի սկզբին Էրզրումը, որտեղից Անդրանիկը նահանջեց Կարս՝ չստանալով օգնական ուժ:

Այս ամենին գումարվեց Բրեստ-Լիտովսկում 1918թ. մարտի 3-ին խորհրդային Ռուսաստանի եւ գերմանաթուրքական բլոկի միջեւ կնքված չարաբաստիկ պայման-

ագիրը, որով բուլշևիկյան կառավարությունը հրաժարվում էր Արեւմտյան Ուկրաինայից, Արեւմտյան Բելոռուսիայից եւ Մերձբալթիկայից՝ հօգուտ Գերմանիայի եւ Արեւմտյան Հայաստանից՝ հօգուտ Թուրքիայի: Ավելին, փաստորեն թուրքերին էր տրվում նաեւ Կարսի մարզը, որը 1878 թվականից Ռուսաստանի կազմում էր:

Անդրկովկասյան սեյմը չճանաչեց Բրեստ-Լիտովսկի թալան-չիական պայմանագիրը եւ 1918թ. մարտին Տրապիզոնում առանձին բանակցություններ սկսեց թուրքերի հետ: Սեյմի պատվիրակության (Մախաբա՝ Ա.Չխենկելի) 12 անդամներից 7-ը մահմեդական էր: Ուստի շուտով դրսեւորվեց վերջիններիս թուրքամետ դիրքորոշումը: Ադրբեջանցի պատվիրակները, ընդառաջ գնալով իրենց թուրք եղբայրների թալանչիական պահանջներին, կարծում էին, որ պետք է ճանաչել Բրեստ-Լիտովսկու պայմանագրով նախատեսված հողերի անցումը Թուրքիային: Վրաց պատվիրակները թեեւ դեմ էին Արեւմտյան Հայաստանի եւ Տրապիզոնի անցմանը Թուրքիային, սակայն իրականում ոչ մի լուրջ քայլ չէին կատարում թուրքերի առաջխաղացումը կասեցնելու ուղղությամբ: Պատահական չէ, որ վրացի զենքերալ Օռիշելիձեի դավաճանության պատճառով եւ Չխենկելու հրամանով 1918թ. ապրիլի 11-12-ին, զրեթե առանց կռվի, թուրքերին հանձնվեց բավականին լավ ամրացած Կարսի բերդը: Բանակցությունները Տրապիզոնում արդյունք չտվեցին, եւ Սեյմի պատվիրակությունը վերադարձավ Թիֆլիս:

Ստեղծված իրադրության մեջ պարզ էր դառնում, որ թուրքերը չեն բավարարվելու Բրեստ-Լիտովսկով նախատեսված հողերի բռնագրավմամբ եւ ներխուժելու են նաեւ բուն Արեւելյան Հայաստան այն գրավելու եւ իրականացնելու հայ բնակչության ոչնչացումը: Այդ ժամանակ Երեւանում հայրենիքի պաշտպանության գործն իր վրա վերցրեց 1915թ. Վանի հերոսամարտի ղեկավար Արամ Մանուկյանը, որը 1917թ. դեկտեմբերի վերջից գլխավորում էր Երեւանի ազգային խորհուրդը: Շուտով Արամը ստացավ դիկտատորի լայն լիազորություններ՝ իր ձեռքը կենտրոնացնելով Արեւելյան Հայաստանի ռազմական եւ վարչական իշխանությունը: Նա Երեւան հրավիրեց մի շարք նշանավոր զինվորականների՝ Մ.Սիլիկյանին, Գ. Բեկ-Փիրույանին, Դրոյին, Ն.Ղորղանյանին եւ այլոց: Արամը կարողացավ կարգ ու կանոն հաստատել Երեւանի նահանգում, սանձել ավազակային խմբերը, կազմակերպել զինական ուժեր եւ ուղարկել ռազմաճակատ: Իրադրությունը Անդրկովկասում շարունակում էր ավելի վտանգավոր դառնալ: Թուրքերի ճնշման տակ սեյմը 1918թ. ապրիլի 9(22)-ին վրաց մենջելիկների եւ ադրբեջանցի մուսավաթականների ջանքերով ընդունեց որոշում՝ Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու մասին: Սեյմի հայ պատվիրակությունը, որ դեմ էր այդ որոշմանը, մնաց փոքրամասնություն: Երկրամասի անջատումը Ռուսաստանից ավելի անկաշակնող դարձրեց թուրքերի նվաճողական ձեռնարկումները:

Անցնելով Ախուրյան գետը՝ թուրքական հորդաները մայիսի 15-ին ներխուժեցին Ալեքսանդրապոլ: Այստեղ եւս բավականաչափ ուժեր կային թշնամուն դիմադրե-

լու համար: Սակայն սեյմի ղեկավարությունը կարգադրեց քաղաքը հանձնել թուրքերին: Ալեքսանդրապոլի գավթունից հետո թուրքական «Կարս» զորամիավորումը 4 ուղղություններով սկսեց առաջանալ Արեւելյան Հայաստանի խորքերը: Թուրքերի 3-րդ եւ 4-րդ բանակային զորախմբերը հրաման էին ստացել Արարատյան դաշտով մտնել Երեւան: Մայիսի 21-ին այդ զորախմբերը գրավեցին Սարդարապատ գյուղը ու կայարանը: Վտանգը կախվեց էջմիածնի ու Երեւանի վրա, որտեղ բազմահազար արեւելահայերի հետ ծվարել էին հարյուր հազարավոր արեւմտահայ զաղթականներ: Երեւանի անկումը կնշանակեր թուրքերի ձեռնարկած 1915թ. ցեղասպանության ավարտ, հայ ժողովրդի իսպառ ոչնչացում:

Այս օրհասական ժամին խոսեց հայ ժողովրդի ինքնապաշտպանական բնագործ: Վերջ տրվեցին միջկուսակցական տարածայնություններին, համախմբվեցին բոլոր ուժերը: Արամ Մանուկյանը զենքերալ Թովմաս Նազարբեկյանին լիազորեց ստանձնելու հայկական զորքերի հրամանատարությունը: Վերջինս էլ զենքերալ Մովսես Սիլիկյանին նշանակեց Երեւանյան ուղղությունը պաշտպանող զորաջոկատի հրամանատար: Սարդարապատի շրջանում ռազմական գործողությունների անմիջական ղեկավար դարձավ արցախցի գեղապետ Դանիել Բեկ-Փիրույանը: Վերջինս ազգական Պողոս Բեկ-Փիրույանը գլխավորեց կամավորներից կազմված «Մահապարտների զունդը»: Սարդարապատում հայկական զորքերի դեմ դուրս բերվեց թուրքական 15 հազարանոց զորաբանակ՝ Շեքի փաշայի հրամանատարությամբ:

Մայիսի 22-ին հայերն անցան հակահարձակման եւ հուժկու հարվածով ոչնչացրին Ղանշլու (Եղեգնուտ) գյուղի շրջանում կենտրոնացած թուրքական ուժերը՝ ազատագրելով մեկ օր առաջ գրավված Սարդարապատը: Թուրքերը նահանջեցին եւ նոր դիրքեր բռնեցին Արաքս կայարանի շրջանում: Այս հաղթանակը ոգեւորեց հայկական ուժերին: Տարբեր տեղերից սկսեցին ժամանել նորահոր ջոկատներ: Մարտիկների առջեւ ելույթ ունեցավ Մ.Սիլիկյանը՝ հիշեցնելով Ավարայրի հերոսներին, եւ որ նահանջել չի կարելի, քանզի թիկունքում Սուրբ էջմիածինն է: Համանման ճառ արտասանեց նաեւ Թ.Նազարբեկյանը. «Մեր ապագան մեր ձեռքին է, կամ կիսանքեն նրան պայքարով, կամ երբեք մենք եւ մեր սերունդները չեն տեսնիլ այն»:

Մինչեւ մայիսի 27-ը տեւած արյունալի մարտերից հետո հայկական ուժերը թշնամուն ետ չարտեցին մինչեւ Արաքս կայարանը: Ապարանի ուղղությամբ հայկական զորքերի հաջող գործողությունների: Բաշ-Ապարանի շրջանում աչքի ընկավ Դրաստամատ Կանայանը: Հերոսաբար զոհվեց հայտնի կամավորական Ջենյակը: Մայիսի 27-29-ի ընթացքում Բաշ-Ապարանի տակ թշնամին զլխովին ջախջախվեց եւ ետ չարտեց: Սարդարապատի եւ Բաշ-Ապարանի շրջանում կրած պարտությունների վրեժը թուրքերը փորձեցին հանել Մեծ Ղարաբիլի-

սայուն: Այս ուղղությամբ թուրքերը ձգտում էին ճեղքել դիմադրություն եւ դուրս գալ դեպի Թիֆլիս: Մեծ Ղարաբիլիսայի մարտերում մայիսի 24-28-ին աչքի ընկան գեղապետներ Բեյ Մամիկոնյանը, Ն.Ղորղանյանը, Գ. Նժդեհը: Միայն մայիսի 30-ին մեծ կորուստների գնով թշնամին կարողացավ ներխուժել Ղարաբիլիսա: Այնուհանդերձ մայիսյան հերոսամարտերն ավարտվեցին թշնամու ջախջախմամբ: Տալով 3500 զոհ՝ թուրքերը նահանջեցին աչքի ընկան նաեւ հեծյալ ջոկատի հրամանատար Հովհ. Բաղդասյանը, կապիտան Դուրխանյանը, գրող Ա.Բակունցը, լեզվաբան Գր. Ղափանցյանը, ռուս զինվորականներ Պերեկրեստովը, Սիլինը, հույն Սակելարին, բազմաթիվ հոգեւորականներ Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյանի գլխավորությամբ եւ ուրիշներ:

Մայիսի 26-ին սեյմի վրաց մենջելիկյան խմբակցությունը հանդես եկավ սեյմը լուծարելու եւ վրացական անկախ պետություն հռչակելու հայտարարությամբ: Սեյմը ցրելու առաջարկությունը պաշտպանեցին մուսավաթականները, որոնք էլ մայիսի 27-ին հռչակեցին իրենց պետականության ստեղծումը Գյանջա (Գանձակ) մայրաքաղաքով (Բաքուն այդ ժամանակ գտնվում էր սովետների ձեռքին՝ Ստ.Շահումյանի գլխավորությամբ): Սեյմի փլուզումից վերջնականապես պարզ դարձավ, որ հայերը մեն-մենակ են մնում թուրքական ագրեսիայի առջեւ: Վրացիները ստացան Գերմանիայի, իսկ ադրբեջանցիները՝ Թուրքիայի աջակցությունը: Սեյմի հայ պատվիրակները բողոք ներկայացրեցին Վրաստանի նորակազմ կառավարության նախագահ Նոյ ժողովարանին: Վերջինս ցինիկորեն պատասխանեց. «Դուք՝ հայեր, խեղդվում եք, մենք պարտավոր չենք ձեզ հետ խեղդվել»:

Մայիսի 28-ին Ազգային խորհուրդն ընդունեց որոշում անկախ պետություն ստեղծելու մասին: Ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանը հրապարակեց Նիկոլ Աղբաշյանի ձեռքով գրված Հայաստանի անկախության հռչակագիրը, որը տպագրվեց մայիսի 30-ին: Նրանում մասնավորապես ասվում էր. «Ի նկատի ունենալով, որ Վրաստանի եւ Ադրբեջանի անկախության հռչակումով լուծարվում է Անդրկովկասյան դաշնակցությունը, Հայոց ազգային խորհուրդը ժամանակավորապես իր վրա է վերցնում կառավարման ֆունկցիաները հայկական զավառների նկատմամբ»: Հունիսի 1-ին նոր հայտարարությամբ Ազգային խորհուրդը իրեն հռչակում էր հայկական բոլոր հողերի միակ իշխանություն: Այսպես՝ 1045թ. մայր հայրենիքում եւ 1375թ. Կիլիկիայում պետականությունը կորցնելուց հետո հայ ժողովուրդը վերականգնեց իր անկախությունը:

Նորաստեղծ պետականությունը փրկելու համար անհրաժեշտ էր միջպետական հարաբերություններ հաստատել դարավոր թշնամու՝ Թուրքիայի հետ: Այդ նպատակով, հետեւելով Անդրկովկասյան հարեւան երկու նորաստեղծ պետությունների օրինակին, ժամանակավոր կառավարության ֆունկցիաներ իրականացնող Ազգային խորհուրդն

իր պատվիրակությունն ուղարկեց Բաքուն, որտեղ ընթանում էին մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից՝ անդրկովկասյան հանրապետությունների բանակցությունները: Հայկական կողմը ներկայացրեցին Ալ.Խատիսյանը եւ Հովհ.Քաջազունին: Սկզբում թուրքական պատվիրակությունը չէր ուզում բանակցել հայերի հետ: Սակայն, հավանաբար տեղեկանալով Սարդարապատում կրած իրենց զորքերի անհաջողություններին, հաշվի նստեց նաեւ հայերի հետ: Հունիսի 4-ին Բաքումում հաշտություն կնքվեց Թուրքիայի եւ առանձին-առանձին անդրկովկասյան հանրապետությունների միջեւ: Թուրքիան ճանաչում էր Հայաստանի Հանրապետության անկախությունը: Սակայն հայերին այդ անկախությունը տրվում էր չափազանց թանկ գնով: Բաքումի պայմանագիրն ավելի ծանր էր, քան Բրեստ-Լիտովսկի հաշտությունը: Հայաստանը հրաժարվում էր ոչ միայն Արեւմտյան Հայաստանից ու Կարսի մարզից, այլեւ Արեւելյան Հայաստանի մի շարք շրջաններից՝ Ալեքսանդրապոլի եւ Համանլուի (Սպիտակ) գավառներից, Երեւանի ու էջմիածնի գավառների մի մասից, Շարուր-Ղարապաղայի 1/5-րդից, Ալեքսանդրապոլի - Նախիջևան երկաթուղուց (բացի Երեւան-Մասիս 6 վերստանոց հատվածից): Հայաստանում տեղակայվելու էին թուրքական 1/5-րդից Թուրքերն իրավունք էին ստանում Հայաստանով գործ տեղափոխել Բաքու, որտեղից պետք է դուրս բերվեին Կոնստանդուպոլիսից հայկական ուժերը: Եվ վերջապես Հայաստանը պարտավորվում էր իր տարածքում զինաթափել հակաթուրքական ավազակային զորախմբերը: Վերջինս անվան տակ թուրքերը նկատի ունեին հատկապես Անդրանիկի ջոկատը: Այս հանգամանքը դժգոհություն առաջացրեց Անդրանիկի մտ, եւ նա հեռացավ Ջանգեզուր:

Այսպիսի ծանր պայմաններում 12 հազ. քառ. կմ-ի վրա ծնվեց հանրապետությունը, որը, սակայն, աստիճանաբար ամրապնդվեց եւ ուժեղացավ:

1918թ. մայիսի 28-ին հանրապետության հռչակումից հետո առաջնախորհրդի նախագահը մեկը իշխանության մարմինների ստեղծումն էր: Սկզբում իշխանության ժամանակավոր գործառնություն իրականացնում էր Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, որը, թուրքերի կողմից ճանապարհներին հարուցած արգելքների պատճառով (երկաթուղին թուրքերի ձեռքին էր), ինչպես եւ այլ հանգամանքների բերումով, չէր կարողանում Կրաստանից տեղափոխվել Երեւան: Հայաստանում իշխանության ղեկը շարունակում էր մնալ Երեւանի ազգային խորհրդի ձեռքում՝ Արամ Մանուկյանի ղեկավարությամբ: Վերջինս հսկայական գործ կատարեց Երեւանում պետականության հռչակումը նպատակաուրաստելու եւ նորաստեղծ պետությունն ամրապնդելու ուղղությամբ: Պատահական չէ, որ Արամը իրավամբ համարվում է հայոց պետականության վերականգնման հեղինակը: Նրա ղեկավարած Հատուկ կոմիտեն մինչեւ հուլիսի կեսերը Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի ժամանումը Երեւան, Հայաստանում իրականացրեց ժամանակավոր կառավարության գործառնությունները:

1918թ. հուլիսի 19-ին Ազգային Հանրապետությունը էջ 14



# Դեռ սպասում ենք գրականության արձագանքին...

## ■ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ

Ինչքան էլ այսօր արժեւորենք Սարգսյանի «Ճակատամարտ» իբրեւ մեր պատմության հերոսական էջերից մեկը, մեր լինելության ճակատագրական հարցը լուծած պատմական անցքերից մեկը, զարմանալիորեն մեր գրականության մեջ դրա լիարժեք արտացոլումը չենք գտնում...



Լուսանկար՝ Ա. Եղիազարյան

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրության դոկտոր Ազատ Եղիազարյանը հայ գրականության մեջ նշում է թեմային վերաբերող երկու գործ՝ Բագրատ Ուլուբաբյանի «Սարգսյան» եւ Կոստան Ջարյանի «Նավը լեռան վրա» վեպերը:

Սարգսյանի 90-ամյակը նշելը նա շատ կարեւոր է համարում, որովհետեւ դա մեր ամենագնահիվ պոռթկումներից մեկն է եղել:

«Սարգսյանի ճակատամարտը մեր պատմական ճակատագրում շատ մեծ դեր է կատարել, – ասում է պարոն Եղիազարյանը: – Ջարյանի ժողովուրդ ենք. կարող ենք չկռվել, ասենք, ինչպես եղել է Կարսում, որի համընդհան պատմությունը մինչեւ հիմա մնում է մեր պատմության ամենատհաճ կետերից մեկը. շատ ուժեղ բերդ, լիքը զենք ու զինամթերք, բայց հայկական բանակը չկռվեց: Եվ նույն տարվա ընթացքում Սարգսյանը սպանվեց: Եվ փրկեցին ողջ ժողովուրդին, որովհետեւ, եթե պարտ-

վեին, հայ ժողովրդի գոյությունը առհասարակ հարցականի տակ էր լինելու»:

Գրականագետը ինքն էլ փաստում է, որ մեր գրականությունը շատ բաների չի անդրադարձել: «Այ, հիմա մտածում եմ՝ ինչու՞ մենք փետրվարյան ապստամբության մասին ունենք Ստեփան Ջորյանի վեպը՝ «Ամիրյանի ընտանիքը» (որը երկար ժամանակ չէր տպագրվում): Բայց Սարգսյանի ճակատամարտի մասին որեւէ լուրջ գրական գործ չունենք, բացի խորհրդային վերջին տարիների ստեղծված Ուլուբաբյանի վեպից, որը թեւ ճշմար-

իտ դիրքերից է գրված, ընդհանուր առմամբ շատ ուժեղ չէ»:

Եվ քանի որ մեր պատմությունը շատ բարդ է, վերելքներն ու անկումները հաջորդում են միմյանց, գրականության ինստիտուտի տնօրենի կարծիքով պիտի սովորենք զննհատել մեր պատմության բարդությունը. տեսնենք եւ հաղթանակները, եւ պարտությունները: «Այ, այստեղ մենք պիտի Չարենցից սովորենք: Ճիշտ է՝ Չարենցը մի քիչ մռայլ է նայում մեր պատմությանը, բայց Չարենցի ժխտողական զննհատականների մեջ ավելի օգտակար բան կա մեզ համար, քան մեր

## ՆԱԶԱՅԻ 90 ՏԱՐՎԱ ԴԵՌՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՅՑ

# 1918թ. մայիսյան հերոսամարտերում հաղթանակի եւ Հայաստանի Հանրապետության հռչակման պատմական խորհուրդը

Սկիզբ էլ 13

խորհուրդը վերջապես ժամանեց Երեւան: Ազգային խորհուրդների (Թիֆլիսի, Երեւանի) եւ քաղաքական կուսակցությունների համաձայնությանը կազմվեց իշխանության բարձրագույն մարմին՝ Հայաստանի խորհուրդը (պառլամենտ, խորհրդարան), որի մեջ մտան ազգային խորհուրդների, տարբեր կուսակցությունների, անկուսակցականների, ազգային փոքրամասնությունների (եզդիներ, ռուսներ, մահադականներ) ներկայացուցիչներ, ընդամենը՝ 46 հոգի (18-ը՝ դաշնակցական): Հուլիսի 24-ին հրապարակվեց կառավարության կազմը. վարչապետ՝ ճարտարապետ Հովհ. Քաջազնունցի (1868-1937), ներքին գործերի նախարար՝ Արամ Մանուկյան (1879-1919), արտգործնախարար՝ Ալեքսանդր Խասիսյան, ֆինանսների նախարար՝ Խաչատուր Կարճիկյան, զինվորական նախարար՝ զեմերալ Հովհաննես Հախվերդյան եւ արդարադատության նախարար՝ Գրիգոր Տեր-Պետրոսյան:

Օգոստոսի 1-ին Երեւանում հանդիսավորությամբ բացվեց հայոց առաջին պառլամենտի՝ խորհրդի (խորհրդարանի) առաջին նստաշրջանը: Խորհրդի նախագահ ընտրվեց Ավետիք Սահակյանը (Հայր Աբրահամ): Նստաշրջանը որոշում ընդունեց երկիրը ծանրագույն վիճակից դուրս բերելու ուղղությամբ շուտափույթ քայլեր ձեռնարկելու մասին: Մինչեւ հիմնական օրերի՝ սահմանադրության ընդունումը, որոշվեց ժամանակավորապես առաջնորդվել ցարական Ռուսաստանի «Հավաք օրինաց» (օրենքների ժողովածու) օրենքների ժողովածուով: Մինչեւ տարեվերջ բարեկամվեց դատական գործը: Ստեղծվեց երկրյալ ատենակալների դատարան: 1919թ. դեկտեմբերի 26-ին խորհրդարանն ընդունեց մի կարեւոր որոշում՝ հայոց լեզուն պետական ճանաչելու մասին: Գործավարությունը բոլոր հիմնարկներում այսուհետեւ կատար-

վելու էր հայերենով: Ընդունվեց պետական դրոշը՝ եռագույնը, որը պետք է բարձրացվեր պետական, կառավարական հիմնարկների վրա: Եռագույնի կարմիրը խորհրդանշում էր հայ ժողովրդի թափած արյունը, երկնագույնը՝ ազատագրված հայրենիքի բաց երկինքը, նարնջագույնը՝ աշխատանքը (հողի գույնը): ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի եւ նկարիչ Հակոբ Կոջոյանի ներկայացրած հանրապետության զինանշանը՝ դրոշակի օրինակով ընդունվեց ժամանակավորապես: Ձինանշանի վրա երկու Մասիսների շուրջ հին հայկական արքայատոհմերի (Արտաշեսյան, Արշակունյաց, Բագրատունյաց եւ Ռուբինյան) զինանշաններն էին, աջ եւ ձախ կողմերում արծվի եւ առյուծի պատկերներ էին, ներքեւում սուրբ, գրիչը, հասկերը: Հանրապետությունում իբրեւ պետական հիմն գործածվում էր «Մեր հայրենիքը»: Սահմանվեցին շքանշաններ, տոներ: «Հայրենիքի» ծառայության համար», «Վարդան գորավար» եւ այլ շքանշաններ ունենալու մասին որոշումներ ընդունվեցին:

Հանրապետության կառավարությունը մեծ ուշադրություն դարձրեց բանակի ամրապնդման հարցին: Հին բանակը, որի կորիզը հայկական կորպուսն էր, այլեւս չէր համապատասխանում ժամանակի ոգուն, ուստի կազմացրվեց եւ նոր՝ 20-25 տարեկանների զորահավաքի հիման վրա կազմվեց հայկական դիվիզիան՝ Մովսես Ալիկյանի հրամանատարությամբ: Մինչեւ 1920թ. բանակի թիվը 10 զնդերում հասավ 25 հազարի: Սեւանում հիմք դրվեց ռազմական նավատորմին, որի առաջնեկը դարձավ «Վշոտ Երկաթ» ռազմանավը:

Հանրապետությունում մեծ թիվ կազմող արեւմտահայ գաղթականությունը դժգոհ էր, որ իրենց հայրենիքը՝ Արեւմտյան Հայաստանը, դուրս է մնացել կառավարության ու-

շադրությունից: 1918թ. հոկտեմբերի վերջին համաշխարհային պատերազմում Անտանտի երկրներից թուրքիայի կրած պարտության լուրը ոգեւորություն առաջացրեց հայերի շրջանում: 1919թ. փետրվարին Երեւանում կայացավ արեւմտահայ գաղթականների համագումար, որն առաջ քաշեց «Միացյալ Հայաստանի» ստեղծման գաղափարը: Համագումարը գտնում էր, որ այս հանրապետությունը պետք է կոչել Արարատյան հանրապետություն, իսկ Հայաստանի Հանրապետությունն այն է, որը ներառում էր նաեւ Արեւմտյան Հայաստանը: Ի կենսագործումն այդ պատմական խնդրի՝ միացյալ Հայաստանի ստեղծման, անկախության տարեդարձի օրը՝ մայիսի 28-ին կառավարությունը, որն արդեն զլխավորում էր Ալ. Խատիսյանը, Հայաստանը հռչակեց «Միացյալ, ազատ հանրապետություն»: Դրանով կառավարությունն իրեն համարում էր նաեւ Արեւմտյան Հայաստանի տերը, եւ Հայաստանը հռչակվում էր միասնական պետություն:

1919թ. հունիսի վերջին անցկացվեցին ընտրություններ՝ 366 հազ. ընտրողների, քաղաքական 7 կուսակցությունների մասնակցությամբ: Խորհրդարանի 80 անդամից 72-ը դաշնակցականներ էին: 1919թ. օգոստոսի 1-ին բացվեց նորընտիր խորհրդարանը, որը հաստատեց նոր կառավարության կազմը վարչապետ Ալ. Խատիսյանի ղեկավարությամբ:

Հանրապետության ամրապնդման գործընթացը շարունակվեց: Հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ ինչպես հարեւան, այնպես էլ հեռավոր երկրների հետ: 1920թ. օգոստոսի 10-ին Փարիզի արվարձան Սեր քաղաքում համաշխարհային պատերազմում հաղթանակած Անտանտի երկրների եւ պարտված Օսմանյան թուրքիայի միջեւ կնքված դաշնագրով Հայաստանի Հանրա-

պատմության փառաբանական մոտեցումները, որովհետեւ ժողովուրդը պիտի հասկանա իր իսկական պատմությունը»:

Գրականագետը նշում է, որ Կ. Ջարյանի «Նավը լեռան վրա» վեպն ավելի լայն՝ փիլիսոփայական ընդգրկում ունի, եւ նրանում զուտ ճակատամարտի թեման չէ... Հեղինակն ավելի լայն է դիտարկում հայ ժողովրդի գոյության խնդիրը, եւ այն գրված է անցողիկ դիրքերից: Դրսից Հայաստան վերադարձող մարդն է, որ կան գտնում է իր տեղը, կան չի գտնում: Նավը խորհրդանշել է: «Սարգսյանի ճակատամարտի պատմությունն այդ վեպով չի սպառվում: Այդ խնդիրը պիտի լուծեր Ուլուբաբյանի վեպը, բայց այդ վեպն իր նշանակությամբ հանդերձ՝ չունեցավ այն արձագանքը, որ պիտի ունենար»:

Պարոն Եղիազարյանը, ընդունելով, որ իհարկե, խորհրդային տարիների արգելքներն էլ դեր են կատարել մեր պատմության այդ էջի՝ գրականության մեջ չարտացոլվելու առումով, կարծում է, որ ավելի բարդ պատճառներ էլ կան... «Չէ՞ որ դա եղել է 1918 թվին, եւ դեռ երկու տարի կար մինչեւ խորհրդային կարգերի հաստատումը: Օրինակ, Ջորյանը «Ամիրյանի ընտանիքը» գրել է փետրվարյան ապստամբության թարմ հետքերով: Որովհետեւ իրեն հուզել է... Ինչու՞ Սարգսյանի մասին թարմ հետքերով բան չի գրվել, սա է հետաքրքիր... Խորհրդային շրջանի վերաբերմունքը նշանակություն ուներ, երկար ժամանակ վախճանում էին, բայց հետո էլ, երբ հնարավորություն եղավ, միայն Ուլուբաբյանի գիրքն ունեցանք: Այդ ճակատամարտին արժանի գործ մենք դեռեւս չունենք»:

Ի վերջո, չունեցանք նաեւ անկախություն տարիներին... Պատմաբաններն այսօր հետ են գնում,

ուսումնասիրում, փաստեր հայտնաբերում, նորովի արժեւորում պատմական անցքերը... Բայց վերջին 15 տարվա գրականությունն էլ, երբ որեւէ արգելք չկա, չանդրադարձավ թեմային:

Պարոն Եղիազարյանն առավել թարմ համեմատություն է անում. եղավ Ղարաբաղյան պատերազմը, այս դեպքում էլ չունեցանք գեղարվեստական համարժեք արտացոլում: Չէ՞ որ Արցախն էլ հաղթանակ էր, եղան հատուկներ գործեր, բայց դա դեռ հիմք չի տալիս ասելու, որ Ղարաբաղյան հաղթանակները ծնեցին հարուստ գրականություն:

«Որեւէ մեկը հիմա պատճառների մասին հարցին հստակ պատասխանել չի կարող: Ես գիտեմ միայն մի բան, որ գրականության արձագանքը միշտ չէ, որ այդպես անմիջական է լինում: Եվ հետո, առաջին հանրապետությանն էլ, Ղարաբաղյան պատերազմի շրջանին էլ մեր ժողովուրդը տարաբնույթ մոտեցումներ ունի...»:

Ազատ Եղիազարյանն ասում է, որ 20-րդ դարի մեր պատմությունը կարող էր նաեւ լավ գրքերի ծնունդ տալ: Բայց այդ պատմության բարդությունն ու հակասական ընկալումները միգրացիոն խանգարել են գրողներին իմաստավորելու այս բոլորը... Այս դեպքում չի եղել միանշանակ խանգարված այն մոտեցումը, որը ծնունդ է տվել, ասենք, «Վարդանաքին» (թեւ Վարդանանց պատերազմի հանդեպ էլ տարբեր մոտեցումներ կային): Եվ «Վարդանաքին» էլ Ավարայրի ճակատամարտից դարեր հետո է ստեղծվել: «Համեմայնեցա, Դերենիկ Դեմիրճյանը մի 30-40 տարի մտածում էր: Անշուշտ, դարեր հետո էլ այս փաստերին ինչ-որ ձևով մեր գրականությունը կանդադարանա», – համոզված է Ազատ Եղիազարյանը:


ԱՐՄԻՆԵ ԱՎԱԶԱՆ



ՄԱՅԻՍՅԱՆ ՆԵՐՈՍԱՄԱՐՏԵՐ. ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զանգեզուրցի Ասլանը

Մի էջ Բաբվի 1918 թ. հերոսամարտից (հատված)



Հայ ժողովրդի բազմադարյան պատմության քառուղիներում 1918 թ. Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի եւ Բաբվի հերոսամարտերն ունեցել են բախտորոշ նշանակություն:

Բաբվի 1918 թ. հերոսամարտի վերաբերյալ պատմագիտության մեջ թեև կան մի շարք ուսումնասիրություններ, այդուհանդերձ, ինքնապաշտպանության կազմակերպիչ զինվորական ոչ բոլոր գործիչների գործունեությունն է հանգամանակից ուսումնասիրության առարկա դարձել և գնահատվել հավուր պատշաճի: Հերոսամարտի կազմակերպիչներից է եղել նաև այսօր շատ քչերին հայտնի Ասլան Սարգսյանը, որի անունը ոսկե տառերով պետք է գրվի հայոց ազատամարտի պատմության էջերում: Թեև արխիվային նյութերում է ժամանակի մասնույն Ասլան Սարգսյանի հեղափոխական ու զինվորական գործունեության վերաբերյալ պահպանվել են սուղ տեղեկություններ, այնուամենայնիվ, եղած բովանդակալից նյութերը հնարավորություն են ընձեռնում լուսաբանելու հայ ժողովրդի ազատության համար նահատակված մարտիկի կյանքը:

Ասլան Սարգսյանը ծնվել է (ծննդյան օրվակազմը հայտնի չէ) Ջանգեզուրի գավառի Շինուհայր գյուղում, Գաբրիելի և Աննա Սարգսյանների ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում: Հետագայում Սարգսյանների ընտանիքը տեղափոխվել է Բաբու, ուր պատանի Ասլանը անդամագրվելով Հ.Յ. Դաշնակցությանը՝ ներգրավվում է հեղափոխական շարժումների մեջ: Եղել է Հ.Յ.Դ. զինվորական մարմնի անդամ (ՀԱԱ, Ֆ. 4047, ց. 2, գ. 30, թ. 1): Ասլանի՝ այդ տարիների գործունեությանը դիպուկ է բնութագրել նրա մայրը՝ Աննա Սարգսյանը, գրելով. «Միակ որդիս՝ Ասլանը, իր մատաղ կյանքը ցվիրել է հայ ազգի սիրում: Մտնելով Հայ Հեղափոխական Դաշնակցության դրոշի տակ է քանի տարիներ՝ որպես ազնիվ ու անկեղծ կուսակցական, գործել է Բաբվում և այլ տեղերում...» (նույն տեղում, թ. 4): Յալթայի շրջանում խմբապետ Միհրան (Գաբրիել) Քեշիշյանի (1907 թ. Հ.Յ. Դաշնակցության կողմից «Կովկասյան նախագծի» ընդունման առիթով ծավալված գաղափարական թեժ շրջանում, երբ Միհրանը ծավալել էր հակադաշնակցական գործունեություն, վերջինս իր գործակից ընկերների հետ արտաքսվել էր Հ.Յ.Դ-ի շարքերից եւ ենթարկվել մահապատժի) դեմ 1907 թ. մահափորձ կատարելու մեղադրանքով Ասլան Սարգսյանը, Սենեբերիմ Աղաջանյանը և Արմենակ Սելվեյանը 1909 թ. մատուցված ձերբակալվում են և դատապարտվում սկզբից կախաղանի, որը, սակայն, փոխարինվում է ցմահ տաժանկրության («Արեւ», Բագու, 1917, մարտի 21, N 58): 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Ասլանին հաջողվում է ազատվել կալանքից: Բանտային 9 տարվա կյանքը եւ տաժանակիր տարաբնույթ աշխատանքները թեև հյուսիս էին նրա առողջությունը, այդուհանդերձ, ազատվելուց հետո նա կրկին Բաբվում շարունակում է կուսակցական ակտիվ գործունեությունը:

Ասլանի գործունեությունը հատկապես ակնառու է Բաբվի 1918 թ. հերոսամարտի օրերին: Բաբվի ինքնապաշտպանության կազմակերպման ընթացքում Ջանգեզուրի գյուղական հայրենակցական բոլոր միությունների (XIX դ. 70-80-ական թթ. Ջանգեզուրի տարբեր գյուղերից Բաբու պանդխտության մեկնած հազարավոր գյուղացիներ ստեղծել էին իրենց հայրենակցական միությունները: Ինչպես օրինակ, միություններ են ունեցել բռնակոթիները, ույծեցիները, Տեղ գյուղացիները, խնձորեսկցիները, ախլաթացիները, Վերին խոտանանցիները, կոռնիձորցիները եւ այլն) կողմից հրավիրված ներկայացուցչական ժողովներում մեծ աշխատանք էր տարվում բաբվաբնակ զանգեզուրցիներից հարյուրյակով: Գումարտակի կազմավորման գործում իրենց մեծ ներդրումն ունեցան Բաբվում գործող զանգեզուրցի զինվորական ու հասարակական-քաղաքական մի շարք գործիչներ՝ կովկասյան Կարմիր բանակի ռազմահեղափոխական կոմիտեի հաշվառման բաժնի կոմիտար, ձախ դաշնակցական Իսրայել Տեր-Ղազարյանը (ծնունդով Ղարաքիլիսա գյուղից, ներկայիս Սիսիան: Ձոհվել է 1918 թ. հուլիսի 5-ին, Ելիզավետպոլի ճակատում, Մյուսուլի երկաթուղային կայարանի մոտ ընթացած մարտի ժամանակ, Հ.Յ.Դ. անդամ, Սարգիս (Սերգեյ) Մելիք-Յուլյանը (Սիսիանի շրջանի Մազրի)՝ ներկայիս Մուցք գյուղից: Ի դեպ, Դատաւանատ Կանայանի (Դոդ) մայրը նույնպես Մուցք գյուղից է: Մելիք-Յուլյանը եւ Դոդը քրոջ որդիներ էին): 1919թ. նոյեմբերից եղել է Ջանգեզուրի գեներալ-կոմիտարը (Իշխանեան Ե., Լեռնային Դարաբաղ (1917-1920), Երեւան, 1999, էջ 538, 626), Ա.Դ.Հնչակյան կուսակցության հայտնի գործիչ, գնդ. Պողոս Տեր-Ղազարյանը (Կապանի շրջանի Վերին Խոտանան գյուղից: Ջանգեզուրի 1919-1920 թթ. գոյամարտի տարիներին եղել է Նժդեհի զինակիցը եւ Սիսիանի հրամանատարը: Ձոհվել է 1920 թ. նոյեմբերի 5-ին, Սիսիանի Ույծ (Ուզ) գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում) և շատ ուրիշներ: Գումարտակի կազմավորման գործում մեծ է եղել հատկապես Ասլան Սարգսյանի դերակատարությունը: Բանակի գերագույն հրամանատարության որոշմամբ զանգեզուրցիներից կազմավորված 17-րդ գումարտակի (հրամ. շտաբ կապիտան Չիլինգարյան) 4-րդ վաշտի հրամանատար է նշանակվում Ասլանը: Վերջինիս վստահվել էր նաև բանակի մարտական հատուկ խմբի ռազմուսույցի պարտականությունը («Արեւ», Բաբու, 1918, օգոստոսի 15, N 159):

Ինքնապաշտպանության առաջին իսկ օրից, Ասլանի հրամանատարությամբ գործող 4-րդ վաշտը եւ մարտական հատուկ խումբը ակտիվորեն մասնակցեցին Ելիզավետպոլի ռազմաճակատում հունիս ամսին ընթացող թեժ մարտերին: Ընդհանրապես Բաբվում գործի խորը իմացություն եւ քաջությունը Ասլանին թույլ տվեց իր ղեկավարությամբ 4-րդ վաշտի կազմակերպման և մարտական գործունեությանը: Ինչպես արտահայտվում էր իր խոսքերում. «...չարագուշակ եւ արդարաբան գնդակ մը եկաւ դպաւ անոր ճակատին, եւ ան, թաւազլոր, գնաց բլուրի գառիկարէն դէպի թշնամիին կողմը» (Սեպուհ, էջեր իմ յուշերն, հ. Բ. Պօսթըն, 1929, էջ. 176: «Հորիզոն») հաղորդած մի տեղեկության

հունիսի 27-30-ը տեղի ունեցած ծանր մարտերից հետո, Կարանայանի մոտ հունիսի 16-17-ին տեղի ունեցած մարտերում փայլուն հաղթանակ տարած Կոմունայի զորքը, բանակի գերագույն հրամանատարության թույլ տված մարտավարական սխալների եւ թուրքական մեծաքանակ զորքի հակահարձակման պատճառով, ինքնապաշտպանական մարտեր մղելով՝ սկսեց նահանջել (Ստեփանյան Գ., Թուրքական արշավանքը Բաբու 1918 թ. եւ Գյոքչայի ճակատամարտը, «Դրօշակ», մայիսի 20, 1998, N 9, էջ 17-26): Միաժամանակ, շարունակվում էր թուրքերի առաջխաղացումը դեպի Բաբու, որն ուղեկցվում էր Գյոքչա եւ Շամախի գավառների հայկական գյուղերում մնացածների եւ զորքի հետ գաղթող հայերի կոտորածներով եւ գերեվարությամբ (ՀԱԱ, Ֆ. 278, ց. 1, գ. 8, թ. 27): Հուլիսի 31-ին թուրքական զորքն արդեն մոտեցել էր Սունգայիթին, իսկ հյուսիսային խումբը՝ Բիբի-Յեյբաթին:

Բաբվի շուրջ ստեղծված օրհասական այդ օրերին, հուլիսի վերջերին Հյուսիսային Կովկասից Աստրախանի վրայով Բաբվի պաշտպաններին օգնության են հասնում անվանի ռազմիկներ Սեբաստացի Մուրադը (Մուրադ Խրիսյան), Սեպուհը (Արշակ Ներսիսյան) եւ Ստեփան Ծաղիկյանը ( Հ.Յ.Դ. անդամ Ստեփան Ծաղիկյանը 1922 թ. հուլիսի 21-ին Թիֆլիսում Արտաշես Գեւորգյանի եւ Պողոս Տեր-Պողոսյանի հետ մասնակցել է հայ ժողովրդի դահիճներից Ջեմալ փաշայի ահաբեկչությանը):

Բաբվի զորքի գերագույն հրամանատարությունը, վերակազմավորելով իր բոլոր ուժերը, մի վերջին անգամ փորձեց դիմակայել թշնամուն: Օգոստոսի սկզբներին քաղաքի մատույցներում՝ Բիբի-Յեյբաթի, Սալյանի եւ Պատանդարի շրջանում ծավալված թեժ մարտերում ինքնապաշտպանների առաջին շարքերում էր նաև Ասլանի գլխավորած 4-րդ վաշտը: Քաղաքի պաշտպաններին հաջողվեց կասեցնել թշնամու բոլոր գործերը (Գիլխանդանեան Ա., Օգոստոս հինգը (մի էջ Բաբուի հերոսամարտից), «Վեմ», Փարիզ, 1933, նոյեմբեր-դեկտեմբեր, Ա տարի, N 2, էջ 115-116): Մարտերը թուրքական զորամասերի եւ հայ դիմադրական ուժերի միջև վերսկսվում են օգոստոսի 2-ին: Բաբվի պաշտպանները կռվում էին անօրինակ քաջությամբ: Համախմբելով իրենց ուժերը եւ գործի դնելով մարտական ողջ կարողությունները նրանք արիաբար պաշտպանվում էին ձախողելով հակառակորդի բոլոր ձեռնարկումները: Օգոստոսի 3-ին թշնամին Բիբի-Յեյբաթի շրջանում կազմակերպեց նոր գործ: Նրա թնդանոթները, գնդացիները եւ հրացանները հուժկու կրակ թափեցին Բաբվի պաշտպանների վրա: Ռազմաճակատի աջ թեւում անօրինակ քաջությամբ կողք-կողքի կռվում էին Սեբաստացի Մուրադի եւ Պողոս Տեր-Ղազարյանի ջոկատները (Սողոմոնյան Բ., Անմահության ճամբաներով (ձեռագիր հուշագրություն), Կապան, 1975, էջ 4: Ձեռագրի հեղինակը Պողոս Տեր-Ղազարյանի եղբոր որդին է: Հուշագրությունը պահվում է մեր անձնական արխիվում): Բիբի-Յեյբաթի շրջանում արխիվում բարձունքը գրավելու ժամանակ քաջաբար գոհվեց Սեբաստացի Մուրադը: Սեպուհն իր հուշերում վերհիշելով այդ դրվագը գրում է. «...չարագուշակ եւ արդարաբան գնդակ մը եկաւ դպաւ անոր ճակատին, եւ ան, թաւազլոր, գնաց բլուրի գառիկարէն դէպի թշնամիին կողմը» (Սեպուհ, էջեր իմ յուշերն, հ. Բ. Պօսթըն, 1929, էջ. 176: «Հորիզոն») հաղորդած մի տեղեկության

համաձայն, Մուրադը վիրավորված է եղել յոթ տեղից («Հորիզոն», Թիֆլիս, 1918, դեկտեմբերի 7, N 15): Բիբի-Յեյբաթի շրջանում փոփոխական հաջողություններով մարտերը շարունակվեցին նաև օգոստոսի 4-ին: Քաղաքի մատույցներում՝ Բիբի-Յեյբաթում, Սալիանում եւ Պատանդարում թեժ մարտեր ծավալվեցին հատկապես օգոստոսի 5-ին՝ լուսաբացին: Կռվի առաջին շարքերում էր Ասլանի գլխավորած վաշտը: Բաբվի ուժերին, մեծ կորուստների գնով, հաջողվեց ոչ միայն կասեցնել թշնամու առաջխաղացումը, այլև շրջանցել հակառակորդին եւ փկուկները հարվածել նրան: Արդյունքում, թուրքերը մարտի դաշտում թողնելով շուրջ 1000-ից ավել սպանված, հետ չարտվեցին Բաբվից ավելի քան 40 կմ հեռու գտնվող Այլաթ կայարան. «...թշնամին օգոստոս 5 ին ժամը երեքից սկսեց փախչել խուճապահար՝ կռիվ դաշտում թողնելով հազարից ավել դիակներ, հարիւրաւոր ծիր, բեռնատար ուղտեր եւ ջորիներ, մեծ քանակութեամբ զէնք եւ ռազմամթերք», գրում է Ա. Գյուլխանյանը (Գիլխանդանեան Ա., նշվ. աշխ., էջ 120): Իր նշանակությամբ այդ ճակատամարտը աննախադեպ էր Բաբվի չորսամսյա պաշտպանության ընթացքում: Օգոստոսի 5-ի կռվում Բաբվի զորքը եւս ունեցավ մեծ կորուստներ: Վիրավորների թվում էր նաև Ասլանը, որը հիվանդանոց տեղափոխվելուց երեք օր անց, հրանոթի արկից ստացած բազմաթիվ վերքերից մահացավ (ՀԱԱ, Ֆ. 121, ց.2, գ. 94, թ. 10, տե՛ս նաև «Արեւ», Բագու, 1918, օգոստոսի 15, N 159): Ահա ինչ է գրում այդ մասին նրա մարտական ընկեր Թեւան Թամարյանը. «Ասլանը իմ ամենամոտիկ ընկերն էր: Նա կռվում էր քաջաբար: Օգոստոսի 5-ի կռվում նա շատ ծանր վիրավորվեց եւ հիվանդանոց բերելուց երեք օր հետո մահացավ...» (ՀԱԱ, Ֆ. 4047, ց. 2, գ. 30, թ. 6): Ասլանի մահը զգալի կորուստ էր կուսակցական ու մարտական ընկերների եւ հատկապես ծնողների համար, որովհետև համարվում էր՝ իր մոր խոսքերով ասած «տան վերջին լույսը»: Ասլանի մահվան գուրջ տպագրվեց Բաբվում այդ օրերին լույս տեսնող «Արեւ» օրաթերթում, իսկ նրա անձնական իրերը՝ կովկասյան տիպի սուրը, «մաուզեր» ատրճանակը եւ հեռադիտակը մարտական ընկերների միջոցով փոխանցվեցին ծնողներին: Ասլան Սարգսյանն ազգային-ազատագրական շարժման այն գործիչներից էր, որի կարճատև, սակայն իմաստալից կյանքը մի անմնացորդ նվիրում էր հայոց ազատամարտի սուրբ գործին:

Թուրքական զորքը համառ մարտերից հետո Բաբուն կարողացավ գրավել միայն սեպտեմբերի 15-ին: Թեև Մյուսուլի փաշան Նուրի փաշայի անունից Կենտրոնական Կասպի կառավարությանը, ինչպես նաև դանիական եւ պարսկական հյուպատոսներին «խաղաղ բնակչության անձնական եւ զույքի ապահովության երաշխիքներ» էր տվել, այդուհանդերձ, թուրք սպաների ղեկավարությամբ եւ մուսավաթական կառավարության ներքին գործոց նախարար Բ. Խան-Ջիվանշիրի օժանդակությամբ, թուրք-թաթար հրոսակները 3 օր շարունակ (15-ից-17-ը) կոտորեցին ավելի քան 30 հազար հայ:

Այսպիսով՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի եւ ավելի ուշ Բաբվի ինքնապաշտպանական մարտերում մեր հերոսների թափված արյունը հնարավորություն տվեց ապահովել հայ ազգի գոյատևումը եւ ինքը դեռ հայոց պետականությանը:







# Մարշալ Բաղրամյանը եւ Սարգարապատի ճակատամարտը

**Հովհաննես Բաղրամյանը, 1915թ. մայիսին ավարտելով Թիֆլիսի երկաթուղային տեխնիկական ուսումնարանը, տեխնիկ-պրակտիկանտի պաշտոնով նշանակվում է ստացել Ելիզավետպոլի երկաթգծի 9-րդ տեղամասում, բայց ժամանակի իրադարձությունները շեշտակի փոխել են նրա ճակատագիրը:**



Առաջին աշխարհամարտի եռու շրջանն էր: Թուրքերը, օգտվելով պատերազմի թուլությունից, փորձեցին Արեւմտահայաստանի բնակչությանը կոտորելով՝ վերջնականապես լուծել «հայկական հարցը»: Եղեռնից մազապուրծ հայերը ապաստան գտան Արեւելյան Հայաստանում: Թուրքերի դեմ կռվելու համար ստեղծվում էին հայկական կամավորական խմբեր: Բաղրամ-

յանն անմասն չմնաց ատելի թշնամու դեմ հարազատ ժողովրդի պայքարից: Թեւեւ, որպես երկաթուղային, նա ազատված էր զինծառայությունից, այդուհանդերձ, կարողացավ հաղթահարել ծնողների դիմադրությունը եւ հոկտեմբերի 9-ին մեկնեց ճակատ: Բաղրամյանը մարտական մկրտություն ստացավ ռուսական արշավազորի կազմում, որը Իրանի տարածքում կասեցնում էր թուրքերի առաջխաղացումը Բաքվի ուղղությամբ: Աչքի ընկնելու համար նրան ուղարկեցին պրապորշչիկների դասընթացների:

Ռուսական բանակի սպա (պրապորշչիկը ռուսական բանակում սպայական կոչում էր) Բաղրամյանը 1918թ. զարմանը հայկական նորաստեղծ բանակի կազմում մասնակցեց Երզրումի, Կարսի շրջանի մարտերին, Սարգարապատի բախտորոշ ճակատամարտին (1-ին հեծելազորի կազմում):

«Ես եւ իմ հասակակիցներն ու ծառայակիցները, որ հեռու էինք քաղաքականությունից, առհասարակ շատ քիչ բան գիտեինք Անդրկովկասում ստեղծված իրավիճակի մասին, բայց լի էինք վճռա-

կանությամբ թեկուզ կյանքի գնով փրկել հայրենիքը դաժան զավթիչներից, ովքեր արդեն մի քանի հարյուրամյակ մեր ժողովրդին պատճառել էին անլուր տառապանքներ, իսկ հիմա սպառնում էին նրա բուն գոյությանը», - գրել է Բաղրամյանը: Հայ ժողովրդի համար այդ բախտորոշ իրադարձությունների մասին խորհրդային ժամանակներում առաջին օբյեկտիվ գնահատականը տվողներից մեկը դրանց անմիջական մասնակից եւ ականատես մարշալ Բաղրամյանն էր: Հետագայում հայացք ձգելով՝ նա ըստ արժանվույն է գնահատում Երեւանի գործադիր իրամասնատար Մովսես Սիլիկովին, Սարգարապատի ջոկատի իրամասնատար Դանիել Բեկ-Փիրումյանին, 5-րդ հրաձգային զորի իրամասնատար Պողոս Բեկ-Փիրումյանին եւ ուրիշներին:

Ըստ մարշալի՝ Սարգարապատի հաղթանակը ոգեշնչեց Բաշ-Ապարանի եւ Դարաքիլիսայի մատույցներում կռվող մեր զորքերին, եւ վերջին հաշվով՝ նպաստեց հայոց պետականության վերականգնմանը:

**ԿՐԹՈՒՆ ՊՍՊԻՆՅԱՆ**  
«Հայ զինվոր» 2003թ., 24-31 մայիս

## ՄԱՅԻՍՅԱՆ ՆԵՐՈՍԱՄԱՐՏԵՐ, ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ԱՌՆՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քում Դարաբաղից հայկական զորքերը դուրս հանելու վերաբերյալ, հակառակ դեպքում այն կիրագործվի Ռուսաստանի Կարմիր բանակի ուժերով: Վերջնազորը ստորագրված էր Կովկասյան ռազմաճակատի հեղափոխական ռազմական խորհրդի անդամ Գ.Ա.Օրջոնիկիձեի, 11-րդ բանակի հրամանատար Մ.Ա.Լեւանդովսկու, բանակի հեղափոխական ռազմական խորհրդի անդամներ Ս.Ա.Կիրովի եւ Կ.Ա.Մեխակովի կողմից: Վերջնազորի ժամկետը լրանալուց հետո 11-րդ բանակի 32-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը ելվախից շարժվեցին դեպի Արցախ եւ մայիսի 12-ին մտան Շուշի: Մայիսի 26-ին Արցախի հայության 10-րդ համագումարը Լեռնային Դարաբաղը հայտարարեց խորհրդային: Արցախի խորհրդայնացումից հետո 11-րդ բանակի զորամասերը շարժվեցին դեպի Ջանգեզուր: Այժմ հայկական բանակի զորքերը ստիպված էին մարտնչել ոչ միայն թուրք-արդրեջանական ասկյարների դեմ, որոնք գլխներին դրել էին կարմիր կոմունարկաներ, այլեւ բուն ռուսական կարմիր բանակի դեմ: Ուժերը անհավասար էին, եւ 1920թ. հուլիսի 3-ին 11-րդ բանակի 28-րդ հրաձգային դիվիզիայի 84-րդ հետեւակային բրիգադի 247-րդ, 248-րդ եւ 249-րդ զնդերը կատաղի մարտերից հետո մտան Գորիս: Ասկայն օգոստոսի 2-ին այն ազատագրվեց կարմիրներից՝ շնորհիվ Դարաբաղյան կողմից օգնության եկած Գորի զորքերի: Մի քանի օր անց՝ օգոստոսի 7-ին, կարմիրները Շուշիից ստանալով

օժանդակ ուժեր, կարողացան կրկին գրավել Գորիսը: Դրոն նահանջեց դեպի Դարալագյազ, այնուհետեւ՝ Երեւան, իսկ Նժդեհը մնաց Դափանում եւ գլխավորեց երկրամասի ինքնապաշտպանական մարտերը: 1920 թ. օգոստոսի 10-ին (Սեւրի պայմանագրի ստորագրման օրը) Թիֆլիսում խորհրդային Ռուսաստանի եւ Հայաստանի Հանրապետության միջեւ կնքվեց համաձայնագիր, ըստ որի՝ խորհրդային զորքերը գրավում են վիճելի տարածքները՝ Լեռնային Դարաբաղը, Ջանգեզուրը եւ Նախիջեւանը՝ մինչեւ դրանց հետագա ճակատագրի վերջնական լուծումը: Նույն օրը Դրոն գրոթյուն է ուղարկում Նժդեհին Դափանը թողնելու վերաբերյալ: Սակայն վերջինս չի ենթարկվում Դրոյի հրամանին: Օգոստոսի 25-ին Դափանի, Մեղրու եւ Գողթանի ներկայացուցիչները հավաքվում են Կավարտի եկեղեցում (Դափանում) եւ որոշում պայքարել կարմիրների դեմ, որովհետեւ վերջիններս Դարաբաղի նման Ջանգեզուրն էլ կնվիրաբերեն խորհրդային Արդրեջանին: Նժդեհին, որ արդեն շնորհվել էր գնդապետի զինվորական կոչում, հռչակում են Դափան-Գենվազ-Գողթանի եւ Բաղաբերդի ռազմական ուժերի հրամանատար՝ սպարապետ:

Այնտեղից մշտական կապ պահպանելով Մեղրու եւ Դափանի շրջանի մոտակա գյուղերի բնակչության հետ՝ Նժդեհին հաջողվում է ապստամբություն բարձրացնել խորհրդային զորքերի դեմ, որոնք բացահայտ հայտարարում էին Ջանգեզուրը խորհրդային Արդրեջանին միացնելու մասին: Մինչեւ հոկտեմբեր կազմակերպվում են նոր վաշտեր, ըստ Նժդեհի՝ 37 վաշտ, որոնց շնորհիվ հոկտեմբերի 10-ին ամբողջովին ազատագրվում է Դափանը: Դրանից անմիջապես հետո Նժդեհը մեկնում է Մեղրի եւ Շվահիձորի ձորի մոտ ջարդում խալի փաշայի զորքերին, քչում Արաքսի աջ ափը: Դեռ նոր էին ավարտվել մարտերը, երբ տեղեկություն է ստացվում, որ 11-րդ կարմիր բանակի 28-րդ հետեւակային դիվիզիան մեծ ուժերով հարձակվում է Դափանի վրա: Նժդեհը իր զորքերով անմիջապես շտապում է Դափան: Հոկտեմբերի կեսերից մինչեւ նոյեմբերի սկզբները ուժեղ մարտեր են գնում Դափանի հյուսիսարեւելյան ամբողջ սահմանների վրա՝ Ասկյուլում-Ղալաշ (Կարմրաքար) հեռաբել ուղղությամբ: Այդ մարտերում հատկապես աչքի են ընկնում սպաներ Պողոս Տեր-Դավթյանի, Ասատուր Տեր-Պետրոսյանի եւ Գերասիմ Աթաջանյանի ստորաբաժանումները:

## Սարգարապատում էր նաեւ Ակսել Բակունցը

1917 թվականին թուրքական ճակատում տեղի էին ունենում ծանր կռիվներ: Մուգ կապույտ աչքերով թախտոտ պատանին, որի հայացքի եւ շարժման մեջ կար «ինչ-որ էլեգիական բան», արեւոյի օրերին դրսևորում է ոգու կորով: 1917թ. ծննդնաճակատում ուսանողների հետ մեկնում է Երզրումի ճակատ՝ որպես շարքային: Ամբողջ մի տարի նա մասնակցում է կռիվներին եւ ճաշակում նահանգի բոլոր դառնությունները: Սար-

իղամիշ, Կարս, Սուրմալու, կորուստների այս ուղին անցնելի հետք է թողնում նրբագգաց զինվորի վրա: Վերջապես, 1918թ. մայիսին պատանի զինվորը մասնակցում է Սարգարապատի հերոսական ճակատամարտին: Չարենցի պես նա էլ դառնում է հինավուրց երկրի ողբերգության ականատեսը եւ մաքառումների մասնակիցը:

**ՀՐ.ԹԱՄՐԱԶՅԱՆ**  
«Սովետաբաղ զրականության պարմություն» էջ 430




## Հեծելազորային Մակար Մարտիրոսյանը՝ Մեղրիից

Ծնվել է 1892թ.Մեղրու շրջանի Գուղեմնիս գյուղում: Մասնակցել է առաջին համաշխարհային պատերազմին: Ցարական բանակում զնդապետի կոչում է ունեցել: Մասնակցել է նաեւ Պետերբուրգի Չմեռային պալատի գործին: 1925 թվականին տեղափոխվել է Լեռնիզորադ եւ բնակություն հաստատել այնտեղ: 1942թ. բրկաղայի ժամանակ ընտանիքով էվակուացվել է Հայաստան՝ հայրենի Գուղեմնիս գյուղ: Մեղրիում աշխատել է պահածոների գոր-

ծարանի տնօրենի տեղակալ, ապա պետբանկի հրահանգիչ: 1963 թվականին անցել է կենսաթոշակի: Սարգարապատի հերոսամարտի տարիներին եղել է Հովհաննես Բաղրամյանի հրամանատարը: 1963 թվականին Բաղրամյանը եկել է Մեղրի մարտական ընկերոջն այցելության ու երեք օր հյուրընկալվել Ազարակի Իսահակյան 6/ա տանը, որտեղ ապրում էր Մարտիրոսյանը: Մահացել է 1974 թվականին:

Մեծերոպ արքեպիսկոպոս մագիստրոս Տեր-Մովսիսյանի քիլիսայի ճակատամարտի ոգեշնչողներից էր:

Մեծերոպ արքեպիսկոպոս մագիստրոս Տեր-Մովսիսյանը, որ Կապանի Շիկահող գյուղից էր Դարա-



## Մեծերոպ արքեպիսկոպոս մագիստրոս Տեր-Մովսիսյան

Մեծերոպ արքեպիսկոպոս մագիստրոս Տեր-Մովսիսյանը, որ Կապանի Շիկահող գյուղից էր Դարա-

պետության պատմության պետական կենտրոնական արխիվի Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի ֆոնդում պահպանվում է այդ կռիվների մասին Նժդեհի կողմից ստորագրված մի շարք փաստաթղթեր:

Մեծերոպ արքեպիսկոպոս մագիստրոս Տեր-Մովսիսյանը, որ Կապանի Շիկահող գյուղից էր Դարա-



ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բաթումի հաշտությունն ըստ Սիմոն Վրացյանի

Մայիսի 30-ին, Բաթումում, սկսվեցին բանակցությունները օսմանյան և հայկական պատվիրակությունների միջև: Մի շարք նիստերից հետո, կողմերը եկան համաձայնության, և հունիսի 4-ին, օսմանյան և հայկական պատվիրակությունները, հանդիսավոր նիստում, ստորագրեցին հաշտության դաշնագիրը Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև: Առաջին միջազգային վավերաթուղթն էր այս, որ ստորագրում էին անկախ Հայաստանի ներկայացուցիչները:



Սիմոն Վրացյան:

Բաթումում ստորագրված վավերագրերն էին. «Խաղաղության և բարեկամության դաշինքը Օսմանյան կայսերական կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև» և 3 հավելվածներ, որոնցից առաջինը վերաբերում էր տրանզիտին, երկրորդը՝ առևտրին սահմանակից շրջաններում և երրորդը՝ կրոնական ազատության պայմաններին: Մի համաձայնությանը էլ կարգավորվում էր գերիների փոխանակության հարցը: Նույն օրը Հայաստանի պատվիրակությունը մի համաձայնագիր էլ ստորագրեց թուրքերի և արքայազների ու վրացիների հետ երկաթուղային գույքերի բաշխման մասին ըստ երկաթուղագծի երկա-

րության: Բաթումի հիմնական դաշնագիրը բաղկացած էր 14 հոդվածներից: Երկրորդ հոդվածը գծում էր սահմանը Թուրքիայի ու Հայաստանի միջև: Պետք է նկատել, որ մայիսի 26-ի վերջնագրի համեմատությամբ, այստեղ կա որոշ տարբերություն. հայ պատվիրակության պնդումն էր, որ թուրքերը զիջեցին Համալու-Աշտարակ խճուղին, որով մոտ 100քառ. կիլոմետր տարածություն ավելացվեց հայերին թողնված հողերի վրա:

Հայ-թուրքական սահմանը որոշվում էր հետևյալ կերպ. «Դեպքերից լեռների գագաթներով անցնելով՝ սահմանագիծը փոխում է իր ուղղությունը դեպի հարավ

անցնելով Աղրիբար, Բաշքերան, Նուռնահան լեռների գագաթներով: Նուռնահան գագաթից հետո շարունակվում է հարավային ուղղությամբ և անցնելով շարունակ գագաթների գծով՝ հանդիպում է Ալեքսանդրապոլ-Թիֆլիս երկաթուղուն Աղբուլաղ ավանից հինգ կիլոմետր դեպի արևմուտք: Այստեղից գալիս է գագաթների գծով մինչև Խանվալի ավանը, որտեղից գրեթե ուղիղ գծով հասնում է մինչև Ալագյոզի ամենաբարձր գագաթը և հետևելով, դարձյալ ուղիղ գծով, կտրում է Էջմիածին-Սարդարապատ խճուղին Էջմիածնից 7 կիլոմետր դեպի արևմուտք գտնվող կետում: Հետո, պտույտ է անում այդ քաղաքի շուրջը 7 կիլոմետր տարածության վրա, շարունակվում է զուգահեռական ուղղությամբ Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղու գծին մոտ վեց կիլոմետր տարածության վրա այդ երկաթուղուց և 16 կիլոմետր դեպի հարավ-արևմուտք Բաշքյարան ավանից կտրում է այդ ավանից դեպի երկաթուղու գիծը գնացող ճանապարհը: Հետո, շրջում է դեպի հարավ-արևելք, անցնում է Աշտի-Կարաբաղլար գյուղից մի կիլոմետր դեպի արևմուտք՝ Շաղաբլու, Դարախաչ, Աշտի-Չանախչի ավաններով և հասնում է մինչև Էլփինչայը, որով շարունակվում է մինչև Արփա ավանը: Այս վերջին ավանից խառնվում է Արփաչայի հովտի հետ, հաս-

նում է մինչև Կայալու ավանը և հետևելով Կայիղ գետի ընթացքին հասնում է մինչև Աղտաբան լեռան գագաթը. հետո անցնում է Դարատարնա, Ալաջին, Դարանլիկ լեռների գագաթներով, հասնում է մինչև Ռիլիանչայի իջնելը, հետևում է նրա հովտին, մինչև որ հասնում է Ազա ավանից դեպի հարավ ռուս-պարսկական սահմանագծի վրա գտնվող Ալիջին ավանը»:

Չորրորդ հոդվածով «Օսմ. կայսերական կառավարությունը պարտավորվում էր զենքի ուժով օգնություն հասցնել Հայաստանի Հանրապետության կառավարությանը այն դեպքում, երբ վերջինս կխնդրեր նրան այդ մասին երկրում կարգ և անդորություն ապահովելու համար»:

Վեցերորդ հոդվածը տնօրինում էր Հայաստանում ապրող մահմեդականների կրոնական և սովորույթի խնդիրները. սուլթանի անունը պետք է հիշվեր մահմեդականների հասարակական աղոթքների մեջ:

Յոթերորդ հոդվածը վերաբերվում էր հյուպատոսական և առևտրական համաձայնությունների կնքմանը:

Ութերորդ հոդվածում խոսվում էր երկաթուղային, իններորդում՝ փոստ-հեռագրական, իսկ տասներորդում՝ մի երկրի սահմաններում բնակիչների մյուս երկիրն անցնելու իրավունքների մասին:

Հոդված 11-րդով «Հայկական Հանրապետության կառավարությունը պարտավորվում էր գործի դնել իր բոլոր ջանքերը, որպեսզի սույն պայմանները ստորագրելուց անմիջապես հետո հեռացնի Բաթում քաղաքից այնտեղ գտնվող հայկա-

կան ուժերը և ապահովե, որ այդ հեռացումը ոչ մի ընդհարման տեղիք չտա»:

12-րդ հոդվածը շոշափում էր ԲրեստԼիտովսկի դաշնագրից բխող իրավունքները:

13-րդ հոդվածի համաձայն՝ ներկա պայմանագրի սահմաններից դուրս եկող և գրավված հողերը պետք է անմիջապես պարպվեն:


Ըստ հավելվածների, թուրքերն իրավունք էին ստանում, պատերազմի դեպքում, Հայաստանի վրայով գործ փոխադրել, Թիֆլիս-Երեւան-Ջուլֆա երկաթուղով ապահովվում էր ազատ երթևեկությունը թուրքերի և հայերի համար, հայ գերի զինվորները իրավունք պիտի ունենային վերադառնալու Հայաստան, Կարսի և Բաթումի շրջանների հայ գաղթականները կարող էին մի ամսվա ընթացքում վերադառնալ իրենց տեղերը, մյուս վայրերի գաղթականները՝ դաշնագիրը ստորագրելուց անմիջապես հետո, իսկ թուրքահայերի վերադարձի խնդիր լուծումը հետաձգվում էր ընդհանուր պատերազմից հետո:

Այսպիսով, ըստ Բաթումի պայմանագրի, Հայաստանը դառնում էր անկախ պետություն: Ան ու դողով մտնում էր նա ինքնիշխան ազգերի համակեցության մեջ, իբրև ազատ անձնավորություն միջազգային իրավունքի: Նրա հողի տարածությունը, մոտավորապես, 12 հազար քառ. կիլոմետր էր, բնակչության թիվը գաղթականներով միասին՝ մոտ 1 մլն: Եվ... մայրաքաղաքից յոթը կիլոմետր հեռու երևում էին թուրքական թնդանոթները...

«Հայաստանի Հանրապետություն», էջ 162-164

Սարդարապատ

հատված համաձայն վեղից ԲԱԳՐԱՏ ՈՒՆՈՒԲԱԲԱՆՆ



պես խոսեց ռազմաճակատի հրամանատարը: - Աչքներինս լույս: Գնամ, իմ գործով բերեմ հայրենի երկիր, նստեցնեմ դարերով թափուր մնացած մեր արքայական գահին... Բայց ինչո՞ւ, ա՛խր, ինչո՞ւ այդ կառավարությունն իր ծնունդը նշանավորի անխելք հրահանգով: Ո՞նց թե դաշնագիր են կնքում, երբ որ թուրքը նստած է քո տանը...

- Եվ, մանավանդ, գիտես էլ, հինգ հարյուր տարվա փորձն է քեզ ասում, թե ինչ է նշանակում թուրքի ներկայությունը, - գորավարի խոսքին արձագանքեց Գարեգին սրբազանը և նրա ուշադրությունը հրավիրեց պատին փակցված քարտեզի վրա: - Ահա այսքան հող պիտի ունենա մեր նոր տերությունը, - եւ ձեռքով ցույց տվեց Վաղարշապատից մինչև Սեւանի արեւելյան ափը: - Այսքան խղճուկ մի տարածություն... որի վրա չգիտես ինչ ու ո՞նց պիտի անես ազգ պահելու համար:

Տոբ էր սենյակում: Չորավարը բացեց պատուհանը, սակայն ոչ մի տարբերություն, դրսից էլ նույն տոթն էր ներխուժում:

- Շոգերը շուտ վրա հասան, - մի բան ասելու համար խոսեց սրբազանը: - Երեւի չոր ամառ կլինի:

- Մտածում էինք, թե այս չարիքը դուրս կվանենք Արարատյան աշխարհից, շուտով կհասնենք Կարս, այն էլ մերը կդարձնենք: Եվ դրանից հետո թող զինադադար կնքեն... Գյուղացին կգնա իր բան ու գործին, և ազգը կպարի:

Սրբազանն ուզում էր գորավարի տղաների մասին խոսել, սսել մխիթարանքի այն խոսքը, որի կարիքը երեւի թե նա շատ պիտի զգա: Սակայն նրբագագ մարդ լինելով, տեսնում էր, որ նա ինքն է իրենց հեռու պահում նման խոսք ու զրույցից:

- Ասում են՝ գեներալ Լազարբեկովն ուզում է գործը ցրել, - ասաց սրբազանը: - Թուրքաց շտաբից են պահանջել իբրև զինադադարի պայման:

Փիրումյանը տագնապած շտկեց իրեն, գոտին ուղղեց.

- Գժվե՞լ է ծերուկը: - Քիչ առաջ Սիլիկյանի շտաբի պետ Վեքիլյանը հարդորեց: Ասում էր՝ գիշերը հեռախոսով Լազարբեկովը խորհրդակցում էր Սիլիկյանի հետ, հասկացրեց, որ թուրքերն արդեն մտան պահանջ են ներկայացրել:

- Որտե՞ղ են ներկայացրել: Ճակատում, թե Բաթումի խորհրդածոցում:

- Իբր, Բաթումից էլ խատիսովն է հայտնել, թե այսպես ու այսպես...

- Վա՛յ, դրանց աստվածը զլխներից փախչի, ճիշտ որ խելքները թռցրե՛լ են: Բա քիչ առաջ սա ինչո՞ւ չէր ասում, - զլխով Սիլիկյանի կողմը ցույց տալով հարցրեց գորավարը: - Թե՛ մեզ արժանի չէր համարում մտն տեղեկություն:

- Գուցե դեռ չեն որոշել իրենց անելիքը, - խուսափուկ պատասխանեց սրբազանը՝ ներքնապես համոզված, որ աններելի է մնան գաղտնապահությունը: Այդ ումի՞ց են թաքցնում հայոց զորքի վերաբերող ամենակարևոր խնդիրը: Սարդարապատի հերոսական ճակատամարտի կազմակերպիչ՝ Բայց չե՞ որ, համատարած հուսալքության ու ձախողանքների պայմաններում, նա ինքը կանգնեց թուրքի դեմ, ձեռք բերեց այն հաղթանակը, որի շնորհիվ հիմա քիթը ջարդված թուրքը ձեզ հետ բանակցության է նստում:

- Չե՛, սրբազան, դա խելագարությունն է:

- Բայց գուցե նման բան չկա էլ..., - Գարեգին սրբազանը զղջաց, որ առանց այն էլ պաշտոնական ու անձնական ցավերի մեջ տապակվող զորավարին նոր մի ցավ պատճառեց այդ անախտոժ տեղեկությամբ: - Գուցե միայն դատարկ խոսակցություն է:

- Ի՞նչ դատարկ խոսակցություն, այ սրբազան: Վեքիլյանը լուրջ մարդ է: Նրա նման անստույգ տեղեկություն կհաղորդե՞ր...

- Համենայն դեպս, այս նեղ վիճակում այդ չէ մեր ամենամեծ հոգալը: Հետո էլ, հայոց զորքի ընտիր մասը թո կարգադրության տակ է: Կուզես՞ չես գորացրի:

- Ի՞նչ ես ասում, այ սրբազան, ո՞նց չես գորացրի, երբ կառավարություն են ստեղծել և այսուհետ ամեն ինչ պիտի ասեն ու անեն կառավարության անունից:

- Հա՛, դա ուրի՛շ բան: - Կառավարության որոշումը չկատարու-

ղի գլուխը չեն շոյում: Այդ մեկը քեզ հայտնի՞ է, սրբազան:

- Այ յոթ տոնի անցյալները լույս դառնան, սրբազանը ե՞րբ է կառավարություն տեսել, որ իմանա, թե նրա հրամաններին ինչպես պիտի վերաբերվել, - ժպտալով խոսեց Գարեգին Հովսեփյանը և անհամաձայնացավ: - Այ, կուենանք, կիմանանք...

- Բա՛, այդպիսի բաներ: - Այնուամենայնիվ, ես գնամ Արամի մոտ:

- Գնա: Չնայած, այսօրինակ խաղերից հետո, դժվար է որեւէ լավ բան հուսալ...

Նրանք բաժանվեցին, և Դանիել-բեկ Փիրումյանն ուղեւորվեց դեպի ճակատ, որ այլևս ճակատ չէր, այլ խաղող մի զորակալան:

Ճանապարհին ճերմակը, այն քանի՞ օր պարապ ու հանգիստ մնացած, երեւի ուզում էր վազել, սկսեց լկան անհանգիստ ծածուկ ու քաշել: Սակայն մեկ էլ զգալով տիրոջ անտարբերությունը, իրեն հանձնեց նրա կամքին: Իսկ նա մռայլ էր, տխուր, զգում էր մի այնպիսի դժբախտություն, ասես երկինքը փուլ էր եկել և այն էլ հենց իր վրա:

Երբ զորքի հետ էր լինում, հրամանատարական պարտականություններով զբաղված, առժամանակ մոռացության էր տալիս որդիների վիճակը: Ավելի ճիշտ՝ անպայման իրեն հանգստացնում էր ժամով, որ ժամանակը կկարգավորի ամեն ինչ: Իսկ առավել հաստատ՝ որ պատերազմ է եղել, հայ ազգի ճակատագրի համար ամենավճճական ճակատամարտը: Իսկ այդ ճակատամարտի հաղթական ելքի համար ինքը երդում էր տվել Արարատին, խոստացել էր իր կյանքը և թե որ հարկ լինի, նաեւ ամենաթանկն ու անփոխարինելին՝ զույգ զավակների...

Այս տեսակ պատճառաբանությունը, հոգեկան փոթորիկը մեղմացնելու այս եղանակը երեւի թե ամենաճիշտն է, - մտածում էր զորավարը: - Մանավանդ, որ միշտ աչքի առաջ է Արարատը, և կարող ես խոսել հետը, հաղորդվել նրա հավերժության խորհրդին, նրա հաստատ ու փառապանծ վեհությանը:

«Սարդարապատ» էջ 547-550



ԱՐԺԵՔՆԵՐ

# Թանգարանը պատրաստվում է տոնակատարության

## ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Սարդարապատի հուշահամալիրի տարածքում գործող Հայաստանի ազգագրության եւ ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարանը հիմնադրվեց հուշահամալիրի կառուցումից տասը տարի անց՝ 1978 թվականին: Թանգարանի շենքի հեղինակը (ինչպես եւ հուշահամալիրի հեղինակը) ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանն է:

Այստեղ շրջելով՝ պատկերացում ես կազմում հայ ժողովրդի մշակույթի, կենցաղի, պատմության մասին. ցուցասրահներում ներկայացված են հայերի հնագույն զբաղմունքները, դեկորատիվ, կիրառական արվեստները, հայոց ազգային մշակույթը՝ իր ձեւավորման շրջանից մինչեւ մեր օրերը:

Թանգարանի գիտական գծով փոխտնօրեն, ազգագրագետ, պատմագիտության թեկնածու Սվետլանա Պողոսյանը տեղեկացնում է, որ թանգարանը, բացի ցուցադրության կազմակերպումից եւ լուսավորչական աշխատանքից, նաեւ գիտահետազոտական աշխատանքների կենտրոն է եղել եւ կա: Բազմաթիվ գիտարկումներ են կազմակերպվել, մինչեւ 1990-ական թվականները դաշտային ազգագրական աշխատանքներ են կատարվել, որի ընթացքում համալրվել են թանգարանային հավաքածուները:

Այստեղ 70 000-ից ավելի թանգարանային արժեք է պահպանվում: Դրանք տարբեր ձեւերով են ձեռք բերել. բերվել են պատմության թանգարանից՝ ստեղծման պահին, գնվել են, հավաքվել ազգագրական գիտարկումների ժամանակ: Կան նաեւ նվիրատվություններ տեղացիներից եւ սփյուռքից:

Թանգարանի բաժիններից մեկն ուսումնասիրում է մեր նյութական մշակույթը, 2-րդ բաժինը զբաղվում է հոգեւոր, հասարակական, ընտանեկան, կենցաղային երեւույթների ուսումնասիրությամբ:

Երրորդը ազգային-ազատագրական պայքարի ուսումնասիրության բաժինն է. «Այդ բաժնի աշխատանքներում շեշտը դրվում է մայիսյան հերոսամարտերի եւ առանձնապես Սարդարապատի ճակատամարտի վրա», - ասում է փոխտնօրենը: - Վերջերս ստեղծել ենք մայիսյան հերոսամարտերի պատմության ֆոնդ, որն առաջիկայում նպատակ ունենք համալրել: Այս մայիսին կնշենք մայիսյան հերոսամարտերի (Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաբաղ) 90-ամյակը: Եվ միջոցառումների մի մեծ շարք է նախատեսվում»:

Ամենազխավորը, որ նախատեսում է թանգարանը, այն է, որ մինչեւ մայիսի վերջ կենտրոնական եռախորան դահլիճում՝ 800 քմ տարածքում նոր ցուցադրություն պիտի պատրաստվի, որտեղ կներկայացվեն մայիսյան հերոսամարտերը պատմական ավելի լայն ժամանակահատվածի կտրվածքում: «Ցուցադրությունը կսկսվի 1914-ից, մի խորանում կներկայացվեն 1918-ը, հետագա գործընթացները՝ ասենք Ալեքսանդրապոլի անկում, թուրքական զորքերի արշավանք, Շիրակի գոյամարտ, որի մասին



հավաքածու  
ցուցադրությունից

խորհրդային տարիներին ուղղակի չգիտեինք կամ դրա մասին լուր էինք, հիմա պատմաբանները բացահայտել են նաեւ այդ էջը: Եվ, իհարկե, փուլերով կներկայացվեն մայիսյան հերոսամարտերը: Ու ամենազխավորը՝ դրանց արդյունքում ծնվեց մեր պետությունը, եւ մի խորանում էլ կներկայացվեն ՀՀ խորհրդանշանները», - ասում է Սվետլանա Պողոսյանը:

Սա փաստորեն փոխարինելու է ներկայումս թանգարանի երկրորդ հարկում գործող ցուցադրությունը: Թանգարանում 1982-ից արդեն մայիսյան հերոսամարտերին նվիրված փոքրիկ ցուցադրություն են ունեցել. «Շատ արժանավոր պետք է գնահատել այն փաստը, որ մեր թանգարանում խորհրդային շրջանում Սարդարապատին նվիրված թեկուզ փոքրիկ, բայց ցուցադրություն կար: Կամ՝ ազգագրական բաժնի սկզբնամասում այն ժամանակ արված Հայկական լեռնաշխարհի մանրակերտը ներկայացնել արդեն երեւոյթ էր: Ել չեն ասում, որ այստեղ ներկայացվում էր Վալենտին Պողոսյանի աշխատանքը՝ Անդրանիկի մեծադիր նկարը», - գնահատում է փոխտնօրենը:

Թանգարանի էքսկուրսավար Լիլիթ Սմբատյանը, ներկայիս ցուցադրությունը ներկայացնելով, պատմում է, որ այն սկսում են 1915 թվականից, մի քիչ նախապատմություն տալով, թե ինչու տեղի ունեցավ «Սարդարապատը»: Այնուհետեւ երեք փոքրիկ սրահներում ներկայացված են ցուցանմուշներ, փաստաթղթեր, լուսանկարներ: Այստեղ Դանիել Բեկ-Փիրումյանի հրամանն է զինվորական դրություն հայտարարելու մասին, փոքրիկ սեղանի վրա մարտի մի դրվագ ներկայացնող տրամապատկերն է: Մոտավորապես այսպիսի տեսք պետք է ունենար կենտրոնական սրահում կառուցվելիք տրամապատկերը. կար հեղինակային խումբ եւ նախատեսվում էր այն կառուցել ավելի խոշոր, գունային եւ ձայնային էֆեկտներով: Աշխատանքները դրամական միջոցներ



րի բացակայության պատճառով չարունակվեցին: Թանգարանի աշխատակիցները հույս ունեն, որ այս ձեռնարկը կհաջողվի իրականացնել մինչեւ 90-ամյակի տոնակատարությունները:

Ցուցադրանքում նաեւ գեներալ Նազարբեկյանի կոչն է ժողովրդին, ռազմական գործողությունների հատակագիծն է՝ գծված ըստ Մարշալ Բաղդասարյանի հիշողությունների:

Առանձին ցուցադրափեղկերով ներկայացված են հերոսամարտի մասնակցած սպայակազմը, գլխավոր հրամանատարությունը, աշխարհագրը, մտավորականությունը, հոգեւորականները:

Ցուցադրված են նաեւ գեներալ. «Չեն կարող ասել, որ հենց այս գեներալն է կռվել Սարդարապատում, բայց սրանք գեներալ են, որ բնորոշ էին այդ ժամանակներին», - ասում է Լ. Սմբատյանը:

Հաջողվել է նաեւ մի քանի հոգու անձնական իրեր հավաքել ու ցուցադրել: Մասնավորապես, հերոսամարտի 80-ամյակին Արամ Մանուկյանի դուստրն է որոշ իրեր տրամադրել, որոնք ներկայացված են:

Ցուցադրանքում նաեւ զանազան փաստաթղթեր կան, որոնք առնչվում են հերոսամարտին:

Էքսկուրսավարը, այդ օրերի հերոսների մասին պատմելիս, ցավով նշում է, որ Սարդարապատի հերոսները, մանավանդ գլխավոր հրամանատարությունը խորհրդա-

յին բռնությունների զոհը դարձան: Նրանցից շատերն այն 1500 սպաների մեջ էին, որոնք ձերբակալվեցին եւ արքայազնի Ռյազանի մարգ:

«Այս հերոսների մասին չեն խոսել, իսկ նրանք շատ տխուր ճակատագիր են ունեցել: Դանիել Բեկ-Փիրումյանը գնդակահարվել է: Պողոս Բեկ-Փիրումյանն ինքնասպանություն է գործել 1920թ.: Նազարբեկյանին աքսորում են, վերադառնում է եւ շատ կարճ ու խոշուկ կյանք ապրում թիֆլիսում, - հիշում է Լ. Սմբատյանը: - Ինչքան հասկանում են՝ հատուկ վերաբերմունք է եղել հայկական սպայական կազմի նկատմամբ, շատ մտածված ձեւով ոչնչացվել է: Նրանք նաեւ ըստ էության մարդիկ էին, որոնք հայրենասեր էին, կրթված, ժամանակի ամենաբարձր կրթական հաստատություններն էին ավարտել, եւ նրանց ոչնչացնելով՝ ինչ-որ տեղ գլխատում էին հայ ժողովրդին... Նույնիսկ ենթադրվում է, որ թուրքերի հետ հայկական սպայակազմը վերացնելու համաձայնություն է եղել»:

Հետեւաբար, նրանց ժառանգներից շատերը վախեցել են մասնաբաժնի պահել, տրամադրել թանգարաններին, պատմել, որ իրենց հարազատները մասնակցել են հերոսամարտին:

Սարդարապատի թեման թանգարանում շարունակվում է եւս մեկ սրահում, որտեղ գեղանկարներ են ցուցադրվում: Այստեղ երկու եռա-

պատկեր կա (երեք գեղանկար թեմատիկ մեկ ամբողջություն են կազմում): Առաջինի հեղինակը Գեորգ Մնացականյանն է, երկրորդին՝ Գուրգեն Ղուկասյանը: Նրանց կողքին Պողոսյանի հայտնի գեղանկարն է, որտեղ պատկերված է զորավար Անդրանիկը:

Ազգային-ազատագրական պայքարի պատմության բաժնի վարիչ, պատմաբան Արեւիկ Մելիքյանն ասում է, որ իրենց աշխատանքին խանգարող հանգամանքն այն է, որ շատ ենք հեռացել այդ ժամանակաշրջանից: «1978 թվականին, երբ բացվեց թանգարանը, սկսել են նոր-նոր նյութեր հավաքել... Շատ բաներ էին արդեն կորել: Ասենք, զանգում են մասնակիցների տները, ժառանգները պատմում են, որ 1937թ. պահպանված իրերը, փաստաթղթերը զանգվածաբար լցրել են հորերը: Հազարավոր «Գեորգիեյան խաչեր» են կորել: Հիմա էլ հավաքչական աշխատանքները շարունակվում են, բայց ոչ մի բան չենք կարողանում ձեռք բերել»:

Փոխտնօրեն Սվետլանա Պողոսյանը տեղեկացրեց, որ նոր ցուցադրությունը կազմակերպելիս՝ նպատակ ունեն ժամանակակից տեխնիկայի օգտագործմամբ լուսանկարների, փաստաթղթերի ավելի լավ որակ ստանալ:

Թանգարանի ուժերով մտադիր են շուտով հրատարակել «Սարդարապատ. հաղթանակների բնօրրան» գրքույկը. «Դրանում ներկայացվում եւ արժեւորվում են Սարդարապատի ճակատամարտը եւ մայիսյան մյուս հերոսամարտերը, ընդհանրապես՝ «Սարդարապատի» խորհուրդը մերօրյա կյանքում՝ ինչ օգուտներ եւ դասեր կարելի է դրանից քաղել: Ու նաեւ հերոսամարտի հայտնի դեմքերի լուսանկարներն են», - հայտնեց Ս. Պողոսյանը:

Իսկ հերոսամարտի 90-ամյակին կառավարական ծրագրով մի շարք միջոցառումներ են նախատեսված: Տեղի կունենան նաեւ «Սարդարապատ-90» խորագրով գիտական նստաշրջան, որում տարբեր ինստիտուտների մասնագետներից, պատմաբաններից գաւտ, գեկուցումներով համոզեւ կզան թանգարանի աշխատակիցները եւս:

Փոխտնօրենը հայտնեց նաեւ, թե քանի որ ճակատամարտի ակաւոր մասնակիցների մասին ժողովուրդը շատ բան չգիտի, իրենք բնագավառի լավագույն մասնագետներից կազմված փորձագիտական խումբ ունեն, որոնք ուժերով կստեղծվեն բացատրագրեր, տեսքեր, որոնք կներկայացնեն հայտնի դեմքերի կյանքը, գործունեությունը: Հետո դրանք կտպագրեն, կտարածեն ՋԼՍ-ներով, հանրությանը հասու դարձնելու այլ ձեւեր կօտնեն:

Սվետլանա Պողոսյանը նշում է, որ հիմա նոր դրվագներ ու էջեր են բացահայտվում, եւ պատմաբանները նոր հայացքով, նոր մեկնաբանություններով են հանդես գալիս: Օրինակ՝ հիմա հատկապես կարեւորվում է մեր ազգային բանակի, կազմակերպված զինված ուժերի դերը Սարդարապատի հերոսամարտի հաղթանակի մեջ: «Իսկ խորհրդային շրջանում ավելի շատ շեշտը դնում էին աշխարհագրի, ժողովրդական զանգվածների վրա: Բայց մեր բանակը կարճ ժամանակում կայացավ եւ կարողացավ մեծաթանակ թուրքական զորքերի հարձակման առաջն առնել: Նախկինում երբեք կանոնավոր զորամիավորումների մասին չէր խոսվում, ասվում էր՝ ժողովուրդը ոտքի կանգնեց, ժիշտ է՝ ող էլ կար, բայց եթե կանոնավոր զինված ուժեր չլինեին, հնարավոր չէր լինի կռվել»:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (1918-1920)

ՆՈՎԱՆԵՆԵՍ ԹՈՒՄՆԵՅԱՆ. «Ի՞նչ ասես, որ չե՞ր սա գրեթե ամեն մի հայ, միայն թե աչքով տեսներ ազատ Հայաստանը»

Մեր սերունդը էն սերունդն է, որ դեռ երեկ ազատ Հայաստան էր երազում: Ազատ Հայաստան էին երազում ռուսահայը, փրանկահայը, պարսկահայը եւ բոլոր հեռավոր գաղութները: Ազատ Հայաստան էին երազում հայ ժողովրդի բոլոր խավերը, առանց սեռի ու հասակի խտրության: Ի՞նչ ասես, որ չե՞ր փա գրեթե ամեն մի հայ, միայն թե աչքով տեսներ ազատ Հայաստանը: Ու հանկարծ: Արդեն իրականություն է երեկվա մեծ երազը. ազատ է Հայաստանը, ամբողջ աշխարհի կողմից ճանաչված ինքնուրույն հանրապետություն է նա, իր եռագույն դրոշակով կանգնած է մյուս պետությունների շարքում:

Հայոց ազգային երգը


Մեր հայրենիք թշուառ, աներ Մեր թշնամուց ոսկակոխ, Եւ որդիքք արդ կանչում է Նանկ իւր վրեժ, քե՛ն ու ոխ:

Միս՛ եղբայր, քեզ մի դրօշ, Ու իմ ձեռքով գործեցի, Գիշերները ես բուն չեղայ, Մրսասուրով լուացի:

Սմե՛նայն տեղ մաքը մի է, Մարդ մի անգամ տիտ, մեռնի, Բայց երանի՛ որ իւր ազգին Ազատութեան կը գոհուի ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԳԵԱՆ

Հայ եռագույնին
Հայի արինից
Ու հայ երկնի լազուր կառույցից,
Հայի ծովերից
Ու հայ երազի վառ արշապույտից
Փնած Եռագույն
Փածանի՛ր հոգարս.
Թեւեղ փռած հովին, փոթորկին,
Ճակատը տուած կռուին ու մարտին,
Խորխուր ու անդարս
Փողփողա՛ գուարթ:
Նին ու դարաւոր մի ժողովրդի
Փնունդն ես դու,
Ուր աշխարհ եկար օրհասող մարտի
Մուռովն հայտնող:
Հայի արինով,
Մեր հայ երկնի լազուր կառույցով
Ու հայ երազի
Վառ արշապույտով հիստուած Եռագույն,
Փածանի՛ր հոգարս,
Խորխուր ու անդարս:
Խ.ՃԱՅԷԼ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԵՐԸ



ՌՈՎԿԱՆԵՍ ԶԱԶԱԶՆՈՒՆԻ ԶԳ առաջին վարչապետը



ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՏԻՍՅԱՆ ԶԳ երկրորդ վարչապետը



ՀԱՍՈՒ ՕԳԱՆՋԱՆՅԱՆ ԶԳ երրորդ վարչապետը



ՄԻՍՈՒՆ ՎՐԱՅՅԱՆ ԶԳ չորրորդ վարչապետը



Առաջին հանրապետության վարչատարածքային բաժանումը

1920թ. ամառը Հայաստանը բաժանված էր չորս նահանգապետությունների. 1) Արարատյան՝ նահանգապետները Գործոց նախարարի օգնական Ս.Թորոսյան, 2) Շիրակի՝ նահանգապետ Կ.Սասունի, 3) Վանանդի՝ Ստ.Ղորղանյան, 4) Սյունյաց՝ Ս.Մելիք-Յուլյան (իրաժարվելուց հետո՝ Զ.Յուլյան): Նահանգներն իրենց հերթին բաժանվում էին գավառների:

ՄԻՍՈՒՆ ՎՐԱՅՅԱՆ «Հայաստանի Հանրապետություն», էջ 446

կան, միապետական ձգտումների արտահայտիչ: Կային մարդիկ, որոնք նույնիսկ պատմական ճշտության հակասող փաստեր էին գտնում զինանշանի մեջ, օրինակ, որ հայոց մեջ ընդունված չի եղել երկգլխյան արծիվը, որ Տիգրան Մեծի թագի վրայի թռչունները եղել են աղավաղված եւ ոչ արծիվներ եւ այլն: Եվ, վերջապես, զինանշանը չէր գոհացնում մարդկանց գեղասիրական ճաշակին:

Բայց եւ այնպես, կառավարությունը հաստատեց ներկայացված նախագիծը, որովհետեւ պատմական կամ գեղագիտական ուսումնասիրություններ անելու ժամանակ չկար: Հաստատեց ժամանակավոր կերպով, մինչեւ Սահմանադիր ժողով, ինչպես եւ պետական դրոշը, բնականաբար: ՄԻՍՈՒՆ ՎՐԱՅՅԱՆ «Հայաստանի Հանրապետություն», էջ 464-465

1920-ի հուլիսին կառավարությունը հաստատեց ակադեմիկոս Ալ.Թամանյանի կազմած եւ նկարիչ Կոջոյանի գծած Հայաստանի պետական զինանշանի (գերբի) նախագիծը: Ձինանշանի կենտրոնում կար վահանաձև մի տարածություն՝ բաժանված չորս մասի. յուրաքանչյուր մասում տեղավորված էր հին Հայաստանի չորս անկախ շրջաններից մեկի զինանշանը՝ Արտաշեսյան, Արշակունյաց, Բագրատունյաց, Ռուբինյանց: Մեջտեղը դրված էին մեծ ու փոքր Մասիսները եւ նրանց վերեւ՝ Զ.Յ. տառերը: Վահանի աջ ու ձախ կողմերը բռնել էին մի արծիվ եւ մի առյուծ, իսկ ներքեւը՝ սուր, գրիչ, հասկեր եւ շրթա:

Այոնյաց Երկիր
www.syuniacyerkir.am

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 6 25 63, (091) 45 90 47, (091) 19 09 29:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԳ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկիր» պարտադիր է:
(Ք) նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր

Գրանցման վկայականը՝ ՕՄՍ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 5 տպագրական մամուլ: Տպագրմանը՝ 2150 օրինակ՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 25.04.2008թ.: